

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Հայջրնուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության
գործադիր մարմնի լիազորությունները մասնավոր
կառավարչին փոխանցելու

«Հայջրնուղկոյուղի» ընկերության

և

[մասնավոր կառավարչի] միջև

ամսաթիվ []

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ - ԲՈՎԱՆ-ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌ-ԴԻՐՆԵՐ

- Առդիր 1 լրացուցիչ մանրամասներ պայմանագրի մասին
- Առդիր 2 ծառայությունների նկարագրությունը
- Առդիր 3 տեխնիկական միջոցների ու ենթակառուցվածքների նկարագրությունը
- Առդիր 4 սպասարկման գոտու նկարագրությունը
- Առդիր 5 գնումների իրականացման կարգը
- Առդիր 6 կատարողական ցուցանիշները
- Առդիր 7 դեկավար ամճնակագմը
- Առդիր 8 տեխնիկական անճնակագմը և կադրային քաղաքականությունը
- Առդիր 9 խրախուսավճարը
- Առդիր 10 կառավարչի առաջարկը
- Առդիր 11 կատարողական երաշխիք
- Առդիր 12 կապիտալ ֆոնդ
- Առդիր 13 քանկային երաշխիք կանխավճար ստանալու համար

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
այս ձևը ՊԵՏՔ ՉԷ լրացնել

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության
գործադիր մարմնի լիազորությունները մասնավոր
կառավարչին փոխանցելու

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՉԵՎ

ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ԿՆՔՎԵԼ ԵՎ ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ «__» ____, 2004թ.

«ՀԱՅՋՐՄՈՒԳՆՈՅՈՒՄ» ՓԲԸ-ի

(հետայսու՝ Ընկերություն)

- և -

[գրանցման երկիրը] օրենքների համաձայն գրանցված և [կառավարչի հասցեն] հասցեով գործող [նշվում է «կառավարչի» անվանումը]

(հետայսու՝ Կառավարիչ)

[կոնսորցիումի դեպքում՝ նաև կոնսորցիումի մնացած պարտնյորների անվանումները և գրանցման տվյալները]

Մ Ի Ջ Ե Վ

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, ՈՐ.

1. Ընկերությունը գործող օրենսդրության համաձայն ունի սույն պայմանագիրը կնքելու իրավասություն:
2. Ընկերությունն ստացել է պայմանագիրը կնքելու համար պահանջվող բոլոր թույլտվությունները և բավարարել է գործող օրենսդրության բոլոր համապատասխան պահանջներին:
3. Ընկերությունը նպատակ ունի բարելավելու և մեծացնելու պայմանագրի առարկա հանդիսացող ջրամատակարարման ու ջրահեռացման կառուց-

վածքների և ծառայությունների արդյունավետությունը և կենսունակությունը, ինչպես նաև բարելավելու այդ համակարգի տնտեսական վիճակը:

4. Կառավարիչը ներկայացրել է ընկերությանը, որ Կառավարիչը տիրապետում է գործին և ընդունակ է կառավարել, շահագործել, վերանորոգել, պահպանել և զարգացնել ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերը՝ սպասարկման գոտում ապահովելով մաքսիմալ արդյունավետություն ու շահութաբերություն և մինիմալ կորուստներ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների իրականացման գործում:
5. Կառավարիչն արձագանքել է ՀՀ կառավարության կողմից հայտարարված «մրցույթի հրավերին» և ընտրվել որպես պահանջներին առավելագույնս բավարարող քեկնածություն՝ «Ծառայությունների մասին» առօրյա 2-ով նախատեսված ծառայություններն իրականացնելու համար:
6. Կառավարիչն ունի պայմանագիրը կնքելու համար բոլոր անհրաժեշտ վիագորությունները:
7. (Մրցույթի հրավերի 4.5.5 կետի համաձայն Ընկերության կողմից ներկայացված պահանջի դեպքում) Կառավարիչի մայր ընկերությունը (կամ կոնսորցիումի մյուս պարտնյորների մայր ընկերությունները), ստորագրելով սույն պայմանագիրը Կառավարիչի հետ միասին, երաշխավորում է (են) պայմանագրի կատարումը պայմանագրով սահմանված կարգով:

Ընկերությունը և կառավարիչը, հարգելով սույն պայմանագրի շրջանակներում ստանձնած փոխադարձ պարտավորություններն ու պայմանավորվածությունները, ՀԱՍՏԱՉԱՅՆՈՒՄ ԵՆ հետևյալ դրույթներին.

Հողված 1 - Պայմանագրի տարրերը

1.1 Պայմանագրի տարրերը

Ընկերության և Կառավարչի միջև պայմանագիրը կամզված է հետևյալ փաստաթղթերից, որոնցից յուրաքանչյուրը պետք է դիտարկվի որպես պայմանագրի անբաժանելի մաս.

- (ա) պայմանագրի ձևը,
- (բ) պայմանագրի ընդհանուր պայմանները,
- (գ) պայմանագրի հետևյալ առդիրները.

Առդիր 1	լրացուցիչ մանրամասներ պայմանագրի մասին
Առդիր 2	ծառայությունների նկարագրությունը
Առդիր 3	տեխնիկական միջոցների ու ենթակառուցվածքների նկարագրությունը
Առդիր 4	սպասարկման գոտու նկարագրությունը
Առդիր 5	զննումների իրականացման կարգը
Առդիր 6	կատարողական ցուցանիշները
Առդիր 7	ղեկավար անձնակազմը
Առդիր 8	տեխնիկական անձնակազմը և կադրային քաղաքականությունը
Առդիր 9	խրախուսավճարը
Առդիր 10	կառավարչի առաջարկը
Առդիր 11	կատարողական երաշխիք
Առդիր 12	կապիտալ ֆոնդ
Առդիր 13	բանկային երաշխիք կանխավճար սնանալու համար

1.2 Գերակայության կարգը

- (1) Այն դեպքերում, երբ սույն պայմանագրի ձևի 1.1 հոդվածում թվարկված պայմանագրի տարրերի միջև որևէ անհստակություն կամ հակասություն չի հայտ գա, գերակայության կարգը հետևյալն է՝ «պայմանագրի առդիրներ», «պայմանագրի ձև», «պայմանագրի ընդհանուր պայմաններ»: Պայմանագրի առդիրների միջև գերակայության կարգը պետք է համապատասխանի այն հերթականությանը, որով դրանք թվարկված են պայմանագրի ձևի 1.1 հոդվածի (գ) կետում:
- (2) Անկախ սույն «պայմանագրի ձևի» 1.2(1) կետի և պայմանագրի տարրերի ցանկացած այլ դրույթների, եթե Կառավարչի ներկայացրած առաջարկության (առդիր 10) դրույթներից որևէ մեկը հակասում է պայմանագրի տարրերից որևէ մեկի դրույթներին, ապա գերակայությունը տրվում է պայմանագրի տարրերի դրույթներին:

1.3 Մահմանումներ

Սույն փաստաթղթում մեծատառով (և չակերտներում) գրված բառերն ու արտահայտություններն ունեն մույն իմաստը, ինչ իրենց վերագրվել է պայմանագրի ընդհանուր պայմաններով և պայմանագրի ընդհանուր պայմանների առդիրներով:

Հողված 2 - Օպերատորի վարձատրությունը և վճարման ժամկետներն ու պայմանները

2.1 Կառավարչի վարձատրությունը

Կառավարչի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումը փոխհատուցելու նպատակով, Ընկերությունը սույնով համաձայնում է վարձատրել Կառավարչին՝ համաձայն պայմանագրի ժամկետների ու պայմանների և «ժայտ ներկայացնողի գնացուցակի»:

2.2 Վճարման ժամկետներն ու պայմանները

Ընկերության կողմից կառավարչի վարձատրության գծով նախատեսված վճարումների ժամկետներն ու պայմանները սահմանվում են սույն պայմանագրով:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ԸԱՐԱԳՐՎԱԾԻ

Ընկերությունը և կառավարիչը կազմել են սույն պայմանագրի ձևը և նշանակել են լիազոր ներկայացուցիչներ այն կնքելու համար:

ԿՆՔՎԵԼ Է Ժամը _____ « _____ » _____ 2004թ.

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ստորագրություն _____

Անուն _____

Պաշտոն _____

ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ

Ստորագրություն _____

Անուն _____

Պաշտոն _____

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ 1

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ 2

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ 3

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ 4

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ 5

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ 6

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ 7

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ 8

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ 9

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ 10

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 11

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 12

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 13

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 14

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 15

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 16

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 17

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 18

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 19

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 20

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 21

12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 22

13. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 23

14. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 24

15. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 25

16. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 26

17. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 27

18. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 28

19. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 29

20. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 30

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ - ՑԱՆԿ

Հոդված 1 - Պայմանագրի տարրերը	4
1.1 Պայմանագրի տարրերը	4
1.2 Գերակայության կարգը	4
1.3 Մահմանումներ	4

Հոդված 2 - Օպերատորի վարձատրությունը և վճարման ժամկետներն ու պայմանները	5
2.1 Կառավարչի վարձատրությունը	5
2.2 Վճարման ժամկետներն ու պայմանները	5

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (ԸՊ)..... 1

Հոդված 1 - Պայմանագիրը և նրա մեկնաբանությունը..... 1

1.1 Մահմանումներ	1
1.2 Պայմանագրի տարրերը	4
1.3 Մեկնաբանությունը	4
1.3.1 Լեզուն	4
1.3.2 Անձինք	4
1.3.3 Վերնագրերը	4
1.3.4 Եզակի կամ հոգնակի թվի օգտագործումը	4
1.3.5 Համապարփակ պայմանագիր	4
1.3.6 Փոփոխություններ և լրացումներ	4
1.3.7 Անկախ կապալառու	5
1.3.8 Համատեղ ձեռնարկություն կամ կոնտրոլիւմ	5
1.3.9 Իրավունքներից հրաժարվելը	6
1.3.10 Պայմանագրի դրույթների անկախությունը	6
1.3.11 Օրերի թիվը	6
1.3.12 Դրամական հաշվարկները	6
1.3.13 Տոկոսադրույթները	6
1.3.14 Մնայուն պարտավորությունները	7
1.4 Դիմումներ ու ծանոթագրություններ	7
1.5 Իրավական քազան	7
1.6 Գործողության վայրը	8
1.7 Լիազոր անդամի դերը	8
1.8 Լիազոր ներկայացուցիչները	8
1.9 Հարկեր, տուրքեր, մաքսատուրքեր և այլ վճարներ	9
1.9.1 Կառավարման հաստատագրված վճար և խրախուսավճար	9
1.9.2 Ընկերության կողմից իրականացվող գնումները	9
1.9.3 Կասկածալ ֆոնդից ֆինանսավորվող գնումները	9
1.10 Պատվիրակում	9

Հոդված 2 - Պայմանագրի սկիզբը, վերջը և ընդհատումը..... 11

2.1 Ուժի մեջ մտնելը	11
2.2 Պայմանագրի տևողությունը	11
2.3 Ծառայությունների իրականացման սկիզբը	11
2.4 Ծառայությունների իրականացումն ավարտի օրվանից հետո	12

2.5	Պայմանագրի երկարաձգումը.....	12
2.6	Ֆորս մաժոր.....	12
2.6.1	Ընդհանուր դրույթներ.....	12
2.6.2	Պայմանագիրը չիզելու պայմանը.....	13
2.6.3	Չեղմարկվելիք միջոցները.....	13
2.6.4	Ժամկետների հետաձգումը.....	13
2.6.5	Վճարումների կատարումը.....	14
2.6.6	Խորհրդակցում.....	14
2.7	Ֆինանսավորման ժամանակվոր դադարեցում (սառեցում).....	14
2.8	Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը.....	14
2.8.1	Ընկերության կողմից.....	14
2.8.2	Պայմանագրի դադարեցման հիմնավոր պահանջ.....	15
2.8.3	Պայմանագիրն առանց հիմնավորման դադարեցնելու մասին ծանուցում.....	15
2.8.4	Կառավարչի կողմից.....	15
2.8.5	Պայմանագրի դադարեցման մասին ծանուցում Կառավարչի կողմից.....	15
2.8.6	Պայմանագրի դադարեցման շուրջ վեճերը.....	16
2.8.7	Ծառայությունների մատուցման դադարեցումը.....	16
2.8.8	Վերջնահաշիվը.....	16

Հոդված 3 - Կառավարչի պարտականությունները..... 17

3.1	Ընդհանուր դրույթներ.....	17
3.1.1	Ծառայությունները և կատարողական չափանիշները.....	17
3.1.2	Սպասարկման գոտին.....	17
3.1.3	Կառուցվածքները.....	17
3.1.4	Տեխնիկական անձնակազմ.....	18
3.2	Նորմատիվ իրավական դաշտը.....	18
3.2.1	Գործող օրենսդրությունը.....	18
3.3	Շահերի բախում.....	18
3.3.1	Կառավարչի կողմից լրացուցիչ կոմիսիոն և այլ վճարներ չվերցնելու և զեղչեր չսահմանելու սկզբունքը.....	18
3.3.2	Սահմանափակումներ Կառավարչի և նրա դուստր ձեռնարկությունների համար.....	18
3.3.3	Անհամատեղելի գործունեությունը արգելում.....	18
3.3.4	Գործունեության որոշակի տեսակների արգելումը.....	19
3.3.5	Փոխարհիմող կառավարչի ընտրության մրցույթին մասնակցելու պայմանները.....	19
3.4	Գաղտնիության պահպանումը.....	20
3.5	Կառավարչի պատասխանատվության շրջանակները.....	20
3.5.1	Կառավարչի ազատումը պատասխանատվությունից.....	20
3.5.2	Կառավարչի կողմից պատասխանատվությունից ազատումը.....	20
3.6	Հեղինակային իրավունքը խախտելու հետ կապված պատասխանատվությունից ազատումը.....	20
3.7	Կառավարչի ապահովագրումը.....	21
3.8	Կատարողական հաշվետվությունը, հաշվապահական հաշվառումը և աուդիտը.....	22
3.8.1	Կատարողական հաշվետվությունը.....	22
3.8.2	Հաշվապահական հաշվառում.....	23
3.8.3	Կատարողական հաշվետվության աուդիտ.....	23
3.9	Ենթակապալառումները.....	23
3.10	Հանդիպումները.....	24
3.11	Հաշվետվությունները ներկայացնելու կարգը.....	24
3.12	Ընկերության կողմից տրամադրված գույքը և նյութերը.....	24
3.13	Գնումների կատարման ծրագիրը և մեխանիզմները.....	25

3.13.1	Ընդհանուր դրույթներ.....	25
3.13.2	Գնումների կատարումը Ընկերության սեփական միջոցներով.....	25
3.13.3	Կապիտալ ֆոնդ («Բ») և «Գ» հոդվածներ) - գնումներ.....	25
3.13.4	Գնումների փաստաթղթերի ստուգումը.....	26
3.13.5	Ներդրումների տարեկան պլան.....	26
3.13.6	Կապիտալ ֆոնդերի կառավարումը.....	27
3.14	Եկամուտների հավաքումը և տնօրինումը.....	27
3.15	Կատարողական երաշխիք.....	27

Հոդված 4 - Կառավարչի ղեկավար անձնակազմը, տեխնիկական անձնակազմը և շահագործման ծախսերը..... 28

4.1	Ընդհանուր դրույթներ - Ղեկավար անձնակազմ.....	28
4.2	Ղեկավար անձնակազմի անդամների փոխարինումը.....	28
4.3	Ծրագրի ռեզիդենտ ղեկավարը.....	28
4.4	Տեխնիկական անձնակազմը.....	29
4.5	Ընթացիկ բյուջեները.....	29

Հոդված 5 - Կառավարման խորհրդի և ՊՎԳ-ի պարտականությունները..... 30

5.1	Օժանդակություն և արտոնություններ.....	30
5.2	Հոդային տարածքներ ազատ մուտք գործելու և փաստաթղթերից ու տեղեկատվական նյութերից օգտվելու իրավունքը.....	30
5.3	Տեխնիկական անձնակազմը, սարքավորումները, նյութերը, տեխնիկական միջոցները և ենթակառուցվածքները.....	30
5.4	Վճարումների կատարումը.....	31
5.5	Կառավարման խորհուրդը.....	31
5.6	Պայմանագրի վերահսկման գրասենյակը (ՊՎԳ).....	33
5.6.1	Կարգավիճակը.....	33
5.6.2	Դերը.....	33
5.7	Ներկայացված նյութերի քննարկումը և հաստատումը.....	33

Հոդված 6 - Կառավարչի վարձատրությունը..... 35

6.1	Ղեկավար անձնակազմի պահպանման ծախսերը.....	35
6.2	Կառավարչի վարձատրությունը.....	35
6.2.1	Կառավարչի վարձատրությունը.....	35
6.2.2	Կառավարման հաստատագրված վճար.....	35
6.2.3	Խրախուսավճար.....	36
6.3	Վճարումների կատարումը.....	36
6.3.1	Կառավարման հաստատագրված վճարի գծով.....	36
6.3.2	Խրախուսավճարի գծով.....	37
6.4	Արժույթը և փոխարժեքը.....	38
6.5	Վճարման ենթակա գումարների ճշտումը.....	38
6.6	Փոփոխությունները պայմանագրի տարրերում.....	39

Հոդված 7 - Ազնվություն և քարեխղճություն..... 40

7.1	Բարեխղճություն.....	40
7.2	Փոխըմբռնման սկզբունքը.....	40

Հոդված 8 - Վեճերի լուծումը.....	41
8.1 Վեճերի լուծումը բարեկամաբար.....	41
8.2 Արբիտրաժի իրավունք.....	41
8.3 Դատավորների ընտրությունը.....	41
8.4 Դատավարության կարգը.....	42
8.5 Փոխարինող դատավորներ.....	42
8.6 Դատավորների քաղաքացիությունն ու որակավորումը.....	42
8.7 Այլ դրույքներ.....	42

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (ԸՊ)

Հոդված 1 - Պայմանագիրը և նրա մեկնաբանությունը

1.1 Սահմանումներ

Սույն փաստաթղթի բոլոր հատվածներում, բացառությամբ այն հատվածների, որտեղ տեքստի բովանդակությամբ այլ բան է պահանջվում, ստորև ներկայացված տերմիններն ունեն հետևյալ իմաստները.

«Գործող օրենսդրություն» – բոլոր այն օրենքները և նորմատիվ իրավական ակտերը, որոնք տվյալ պահին ուժի մեջ են Հայաստանի Հանրապետությունում:

«Կանխավճարի մարում» – այն մասհանումները, որոնք համաձայն ԸՊ 6.3.1(1) կետի կատարվում են կառավարչի վարձատրությունից կանխավճարի մարման համար:

«Լիազոր ներկայացուցիչներ» – Ընկերությանը և Կառավարչին ներկայացնող անձինք, որոնք լիազորված են նրանց կողմից պայմանագիրն ստորագրելու և ԸՊ 1.8 կետով սահմանված լիազորություններն իրականացնելու համար:

«Բանկ» – ՄՋԸ-ի անունից հանդես եկող Համաշխարհային բանկը:

«Բազային տարի» – մեկ տարվա ժամանակահատվածը, որը նախորդում է մեկնաբանության օրվան:

«Կառավարման խորհուրդ» – ՀՀ կառավարության 1999թ-ի թիվ 765 որոշման համաձայն ստեղծված «Ծրագրի կառավարման խորհուրդը», որը ՀՋՋ ծրագրի ընթացքում հանդես է գալու նաև որպես ԸՊ 5.5 կետով սահմանված լիազորությունների իրականացման համար Ընկերության կանոնադրության համաձայն ձևավորված «Ընկերության խորհուրդը», որի կազմում ընդգրկվելու են ջրտնտեսականության և այլ շահագրգիռ նախարարությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչներ:

«Կապիտալ ֆոնդ» – ՀՋՋ ծրագրի շրջանակներում սույն պայմանագրի 3.13.3 կետով և առդիր 12-ով սահմանված ներդրումների ֆինանսավորման համար ՀՀ կառավարության և ՄՋԸ-ի կողմից հատկացված գումարներից ձևավորված ֆոնդը:

«Ներդրումների տարեկան պլան» – ԸՊ 3.13.5 կետի համաձայն Կառավարչի կողմից մշակված՝ կապիտալ ֆոնդերից ծախսերի կատարման տարեկան ծրագիրն է և համապատասխան բյուջեն:

«Նախագահ» – ԸՊ 5.5(3) կետի համաձայն նշանակված՝ Կառավարման խորհրդի նախագահը:

«Ընկերություն» – «Հայջրուղկոյառի» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գրանցվել է 2002թ-ի դեկտեմբերի 22-ին, գրանցման համարը՝ 286.140 00736, գրանցման վկայագիրը՝ 01 A005573 (կանոնադրության փոփոխությունները գրանցվել են 16.05.2001 ներդիր N 005):

«Ծախսային հաշիվներ» – ԸՊ 3.13.2(2) կետի համաձայն Ընկերության «եկամտային հաշիվներից» գումարներ ստանալու և դրանք ընթացիկ շահագործման ու գնումների համար օգտագործելու նպատակով բացված բանկային հաշիվները, որոնց կարգադրիչը Կառավարիչն է:

«Եկամտային հաշիվներ» – ԸՊ 3.14(2) կետի համաձայն Ընկերության եկամուտները կուտակելու նպատակով բացված հաշիվները, որոնց կարգադրիչը Ընկերությունն է:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (ԸՊ)

Հոդված 1 - Պայմանագիրը և նրա մեկնաբանությունը

1.1 Սահմանումներ

Սույն փաստաթղթի բոլոր հատվածներում, բացառությամբ այն հատվածների, որտեղ տեքստի բովանդակությամբ այլ բան է պահանջվում, ստորև ներկայացված տերմիններն ունեն հետևյալ իմաստները.

«Գործող օրենսդրություն» – բոլոր այն օրենքները և նորմատիվ իրավական ակտերը, որոնք տվյալ պահին ուժի մեջ են Հայաստանի Հանրապետությունում:

«Կամխավճարի մարում» – այն մասնաճանաչները, որոնք համաձայն ԸՊ 6.3.1(1) կետի կատարվում են կատարչի վարձատրությունից կանխավճարի մարման համար:

«Լիազոր ներկայացուցիչներ» – Ընկերությանը և Կառավարչին ներկայացնող անձինք, որոնք լիազորված են նրանց կողմից պայմանագիրն ստորագրելու և ԸՊ 1.8 կետով սահմանված լիազորություններն իրականացնելու համար:

«Բանկ» – ՄՋԸ-ի անունից հանդես եկող Համաշխարհային բանկը:

«Բազային տարի» – մեկ տարվա ժամանակահատվածը, որը նախորդում է մեկնաբանության օրվան:

«Կառավարման խորհուրդ» – ՀՀ կառավարության 1999թ-ի թիվ 765 որոշման համաձայն ստեղծված «Ծրագրի կառավարման խորհուրդը», որը ՀՀՋ ծրագրի ընթացքում հանդես է գալու նաև որպես ԸՊ 5.5 կետով սահմանված լիազորությունների իրականացման համար Ընկերության կանոնադրության համաձայն ձևավորված «Ընկերության խորհուրդը», որի կազմում ընդգրկվելու են ջրամուտկուկոմիտեի և այլ շահագրգիռ նախարարությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչներ:

«Կապիտալ ֆոնդ» – ՀՀՋ ծրագրի շրջանակներում սույն պայմանագրի 3.13.3 կետով և առդիր 12-ով սահմանված ներդրումների ֆինանսավորման համար ՀՀ կառավարության և ՄՋԸ-ի կողմից հատկացված գումարներից ձևավորված ֆոնդը:

«Ներդրումների տարեկան պլան» – ԸՊ 3.13.5 կետի համաձայն Կառավարչի կողմից մշակված՝ կապիտալ ֆոնդերից ծախսերի կատարման տարեկան ծրագիրն է և համապատասխան բյուջեն:

«Նախագահ» – ԸՊ 5.5(3) կետի համաձայն նշանակված՝ Կառավարման խորհրդի նախագահը:

«Ընկերություն» – «Հայքնուկոյտի» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գրանցվել է 2002թ-ի դեկտեմբերի 22-ին, գրանցման համարը՝ 286.140.00736, գրանցման վկայագիրը՝ 01 A005573 (կանոնադրության փոփոխությունները գրանցվել են 16.05.2001 ներդիր N 005):

«Ծախսային հաշիվներ» – ԸՊ 3.13.2(2) կետի համաձայն Ընկերության «եկամտային հաշիվներից» գումարներ ստանալու և դրանք ընթացիկ շահագործման ու գնումների համար օգտագործելու նպատակով բացված բանկային հաշիվները, որոնք կարգադրիչը Կառավարիչն է:

«Եկամտային հաշիվներ» – ԸՊ 3.14(2) կետի համաձայն Ընկերության եկամտները կուտակելու նպատակով բացված հաշիվները, որոնք կարգադրիչը Ընկերությունն է:

«Պայմանագիր» – պայմանագրի ձևը, «ընդհանուր պայմանները» և «ընդհանուր պայմաններին» առդրները:

«Պայմանագրի վերահսկման գրասենյակ» (ՊՎԳ) – Պայմանագրի և ՀՋՋ ծրագրի կատարման ընթացքը վերահսկելու նպատակով ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմինը:

«Կատարողական հաշվետվություն» – ներառում է բոլոր այն փաստաթղթերը, որոնք պատրաստվել են Կառավարչի կողմից պայմանագրի կատարման ժամանակ համաձայն ԸՊ 3.8.1 կետի:

«Պայմանագրային տարի» – առանց ընդհատումների 365 կամ 366 (մահաց տարվա դեպքում) օր տևող այն ժամանակահատվածը, որն սկսվում է «մեկնարկային օրվանից»:

«Բաժանորդ» – այն անձը, որն օգտվում է Ընկերության կողմից մատուցվող ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայություններից:

«Ավարտի օր» – այն օրը, երբ պայմանագրի գործողության ժամկետը ԸՊ 2.2 հոդվածի համաձայն ավարտվում է:

«Ուժի մեջ մտնելու օր» – այն օրը, երբ պայմանագիրը ԸՊ 2.1 հոդվածի համաձայն ուժի մեջ է մտնում:

«Տեխնիկական միջոցներ» – Ընկերության սեփականություն հանդիսացող կամ Ընկերության օգտագործմանը հանձնված բոլոր այն համակարգերը, սարքավորումները, նյութերը և այլ նյութական ու ոչ նյութական արժեքները, որոնք ըստ առդրի 3-ում («Տեխնիկական միջոցների ու ենթակառուցվածքների նկարագրությունը») տրված սահմանումների չեն կարող դասակարգվել որպես «ենթակառուցվածքներ»:

«Տարադրամ» – Հայաստանի պետական արժույթից գատ ցանկացած այլ արժույթ:

«ԸՊ» – Պայմանագրի ընդհանուր պայմանները:

«ԱՄՊ» – Առևտրի միջազգային պալատ (տես ԸՊ 8.3(ա) կետը):

«ՄՋԸ» – Համաշխարհային բանկի խմբի մեջ մտնող Միջազգային զարգացման ընկերակցությունը:

«ՄՋԸ վարկ» – ՄՋԸ-ի կողմից ՀՋՋ ծրագրի ֆինանսավորման նպատակով ՀՀ կառավարությանը տրված վարկը:

«Անկախ ատդիտոր» – ԸՊ 2.7(գ), 2.8.1(ա) և 6.5.2 կետերի համաձայն Ընկերության կատարողական ցուցանիշների գնահատման համար Կառավարման խորհրդի կողմից հրավիրված անկախ կազմակերպությունը կամ անհատը:

«Ենթակառուցվածք» – առդրի 3-ում («տեխնիկական միջոցների ու ենթակառուցվածքների նկարագրությունը») թվարկված բոլոր այն (հիմնականում ստորգետնյա) հիմնական միջոցները, ինչպես ՕԿՋ-ները, ջրագծերը և կոյուղագծերը, որոնք օգտագործվում են Ընկերության կողմից «ծառայությունների» իրականացման համար:

«Միջազգային հաշվապահական ստանդարտներ» – Հաշվապահական ստանդարտների միջազգային հանձնաժողովի կողմից հաստատված և պարբերաբար թարմացվող ստանդարտները:

«Տեղական արժույթ» – հայկական դրամը:

«Կառավարիչ» – «ծառայություններն» իրականցնելու համար Ընկերության կողմից հրավիրված կառավարիչը, որը մաս հանդես է գալիս «պայմանագրի ձևում» որպես «Կառավարիչ» կոչվող կողմը:

«Պայմանագրի դադարեցման մասին դիմում» – այն դիմումն է, որ Կառավարիչը ներկայացնում է համաձայն ԸՊ 2.8.5 կետի պայմանագիրը դադարեցնելու համար:

«Կառավարման հաստատագրված վճար» – կառավարման ծառայությունների համար առաջարկվող այն հաստատագրված վճարը, որը սահմանված է ԸՊ 6.2.1 կետով:

«Լեկավար անձնակազմ» – այն անձինք, ովքեր աշխատանքի են ընդունվել անմիջապես Կառավարչի կողմից՝ «ղեկավար անձնակազմի մասին» առջիկով սահմանված ծառայություններն իրականացնելու համար:

«ՀՋՋ ծրագիր» – ՄՋԸ-ի և ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիրը», որի շրջանակներում կնքվում է սույն պայմանագիրը:

«Պայմանագրի դադարեցման հիմնավոր պահանջ» – ԸՊ 2.8.2(1) կետի համաձայն Կառավարման խորհրդի կողմից պայմանագրի դադարեցման համար տրվող դիմումը:

«Մեկական հայեցողությամբ պայմանագրի դադարեցման մասին ծանուցում» – ԸՊ 2.8.3 կետի համաձայն Ընկերության կողմից պայմանագրի դադարեցման մասին տրվող դիմումը:

«Տեխնիկական անձնակազմ» – Ընկերության կողմից վարձատրվող անձինք, որոնք ԸՊ 4.4 հոդվածի համաձայն աշխատում են կառավարչի ղեկավարության ներքո «ծառայություններն» իրականացնելու համար:

«Կողմ» – Ընկերությունը կամ Կառավարիչը, կամ էլ երկուսն իրար հետ, եթե տերմինն օգտագործվում է հոգնակի թվով:

«Ծրայխտավճար» – ըստ «կատարողական չափանիշների» «ծառայություններին» իրականացման դիմաց Կառավարչին տրվող վարձատրությունը, որի տրման կարգը և չափը որոշվում է համաձայն ԸՊ 6.2.1(1)(b) կետի:

«Կատարողական երաշխիք» – Կառավարչի կողմից պայմանագրի կատարումը երաշխավորելու համար ԸՊ 3.15 հոդվածի համաձայն Կառավարչի կողմից տրամադրվող գրավը:

«Կատարողական չափանիշներ» – սահմանումը տրված է «կատարողական չափանիշների մասին» առջիկում (առդիր 6):

«Գանձումներ» – «սպասարկման գոտուն» բաժանորդների կողմից ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց վճարված վարձերը:

«Սպասարկման գոտի» – առդիր 4-ով («սպասարկման գոտու նկարագրությունը») սահմանված այն տարածքը, որտեղ իրականացվում են «ծառայությունները»:

«Ծառայություններ» – պայմանագրի շրջանակներում Կառավարչի կողմից կատարվելիք աշխատանքները՝ համաձայն «ծառայությունների մասին» առդիր 2-ի:

«Մեկնարկային օր» – այն օրը, երբ Կառավարիչը ԸՊ 2.3 հոդվածի համաձայն սկսում է իրականացնել «ծառայությունները»:

«Նմթակապառառ» – ցանկացած սուբյեկտ, որին Կառավարիչը կապալային հիմունքներով պատվիրում է ծառայությունների այս կամ այն մասի կատարումը՝ համաձայն ԸՊ 3.9 հոդվածի, ինչպես նաև ցանկացած սուբյեկտ, որի հետ Կառավարիչը կապալի պայմանագիր է կնքում Ընկերության անունից՝ պայմանագրով սահմանված կարգի համաձայն:

«Փոխարինող Կառավարիչ» – այն օպերատորը, որը պետք է շարունակի ծառայությունների մատուցումը պայմանագրի ընկատման կամ ժամկետի լրացման դեպքում:

«Շահագործման սկիզբ» – այն օրը, երբ հատավարիչը ԸՊ 2.3.3 կետի համաձայն կատանճնի համակարգերի ընթացիկ շահագործումը:

«Երրորդ կողմ» – ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, բացի Ընկերությունից և հատավարիչից:

«Անցումային շրջանի ծառայություններ» – այն ծառայությունները, որ հատավարիչը ԸՊ 2.4 հոդվածի համաձայն պետք է իրականացնի «ավարտի օրվանից» հետո՝ մինչև «փոխարինող կատավարիչ» նշանակումը:

1.2 Պայմանագրի տարրերը

Սույն պայմանագիրը բաղկացած է «պայմանագրի ձևում» թվարկված տարրերից:

1.3 Սեկնաբանությունը

1.3.1 Լեզուն

Պայմանագիրը կազմվել է անգլերենով և հայերենով, սակայն բոլոր ծագող հարցերը կարգավորվելու և մեկնաբանվելու են անգլերեն տեքստի հիման վրա: Չմայած այդ հանգամանքին, հատավարիչը պետք է ունենա հայերեն գրավոր և բանավոր հաղորդակցությունն ապահովելու լիարժեք հնարավորություն՝ ինքնուրույն կամ իր կողմից կարճված թարգմանիչների միջոցով:

1.3.2 Անձինք

«Անձ» և «կողմ» բառերը պետք է օգտագործվեն նաև ֆիրմաների, կորպորացիաների և կատավարման մարմինների առնչությամբ:

1.3.3 Վերնագրերը

Վերնագրերը չպետք է սահմանափակեն, փոխեն կամ ազդեցություն ունենան պայմանագրի իմաստի վրա:

1.3.4 Եզակի կամ հոգնակի թվի օգտագործումը

Պայմանագրի տարրերում ընդհանրացումներն արվում են ինչպես եզակի այնպես էլ հոգնակի թվով, բացառությամբ այն դեպքերի, երբ տեքստի բովանդակությունն այլ բան է ենթադրում:

1.3.5 Համապարփակ պայմանագիր

Այս պայմանագիրը համապարփակ պայմանագիր է հանդիսանում Ընկերության և հատավարիչի միջև և գերակայություն ունի բոլոր այն գրավոր և բանավոր պայմանավորվածությունների նկատմամբ, որոնք ձեռք են բերվել ինչպես Ընկերության, այնպես էլ հատավարիչի կողմից մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը տեղի ունեցած բանակցությունների և հաղորդակցությունների ժամանակ:

1.3.6 Փոփոխություններ և լրացումներ

- (1) Պայմանագրի ժամկետների և պայմանների մեջ փոփոխություններ, այդ թվում՝ ծառայությունների շրջանակներին վերաբերող, կարող են արվել միայն կողմերի միջև կնքվող գրավոր պայմանագրի ձևով, որն ուժի մեջ է մտնում միայն այն բանից հետո, երբ Բանկը ՄՁԸ-ի անունից հաստատում է այն: Կողմերից յուրաքանչյուրը պետք է բավարար ուշադրությամբ քննության

ամոհի մյուսի կողմից առաջարկվող փոփոխությունները և դրանք ստանալուց հետո 30 օրվա ընթացքում գրավոր պատասխան ներկայացնի մյուս կողմին:

- (2) Պայմանագրի մեջ արված ոչ մի լրացում կամ փոփոխություն ուժ չի ունենա, եթե այն ներկայացված չլինի գրավոր տեսքով, չունենա իր վրա ամսաթիվ, հստակորեն Վերաբերի պայմանագրին, հաստատված չլինի համապատասխան մարմնի կողմից, որը գործող օրենսդրության համաձայն իրավասու կլինի նման ուղղումներ կամ փոփոխություններ կատարել Ընկերության ամունից, և ստորագրված չլինի պայմանագրի կողմերից յուրաքանչյուրի լիազոր ներկայացուցչի կողմից:

1.3.7 Անկախ կոնտրակտոր

- (1) Կառավարիչը պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելիս հանդես է գալիս որպես անկախ կոնտրակտոր: Պայմանագիրը չի նախատեսում կողմերի միջև որևէ գործակալության, պարտեյորական հարաբերությունների, համատեղ ձեռնարկության կամ այլ համատեղ գործունեություն ենթադրող կառույցի ստեղծում:
- (2) Պայմանագրի դրույթների համաձայն՝ պայմանագրի իրականացման եղանակի համար պատասխանատու է միայն Կառավարիչը: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար Կառավարչի կողմից ներգրավված աշխատողների, ներկայացուցիչների կամ ենթակալկոնտրակտորների գործողությունները պետք է վերահսկվեն Կառավարչի կողմից, և բացի այդ, ինչպես Պայմանագրում, այնպես էլ Կառավարչի կողմից իջեցված ենթակոնտրակտի ցանկացած պայմանագրում չպետք է լինի այնպիսի դրույթ, որը կարող է որևէ պայմանագրային հարաբերություններ ենթադրել Ընկերության և Կառավարչի ներկայացուցիչների կամ ենթակոնտրակտորների միջև: Կառավարչի, Ընկերության և «տեխնիկական անձնակազմի» միջև հարաբերությունները պետք է կարգավորվեն «Կադրային քաղաքականության մասին» առդրով (առդիր 8):
- (3) Չնայած այն հանգամանքին, որ Կառավարիչը հանդիսանում է անկախ կոնտրակտոր՝ կողմերն ընդունում են, որ.
 - ա) երբ Կառավարիչը ընթացիկ աշխատանքների իրականացման և սպասարկման գոտում կառուցվածքների շահագործման նպատակով փաստացի ծախսեր է կատարում, որոնք պայմանագրի համաձայն ենթակա են վճարման «ներդրումների ֆոնդից», նա գործում է Ընկերության ամունից;
 - բ) «ծառայություններն» իրականացնելիս Կառավարիչը գործում է Ընկերության ամունից:

1.3.8 Տնտեսական ընկերակցություն կամ կոնտրոլիում

Եթե Կառավարիչը երկու և ավելի «անդամ» ունեցող տնտեսական ընկերակցություն է կամ կոնտրոլիում, նրա բոլոր անդամները պետք է միասնական և անհատական պարտավորություն ստանձնեն Ընկերության առջև պայմանագրի դրույթների կատարման համար և անդամներից մեկին լիազորեն գործել տնտեսական ընկերակցության կամ կոնտրոլիումի ամունից: Համատեղ ձեռնարկության կամ կոնտրոլիումի կազմը չի կարող փոխվել առանց Կառավարման խորհրդի նախնական գրավոր թույլտվության:

1.3.9 Իրավունքներից հրաժարվելը

(1) Համաձայն ԸՊ 1.3.9(2) կետի, կողմերից և ոչ մեկը չպետք է ի վնաս իր շահերի հանդուրժողականություն ցուցաբերի և հրաժարվի պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներից, եթե պայմանագրի այս կամ այն պայմանը ժամանակին կամ ամբողջությամբ չի կատարվում, կամ երկարացնի աշխատանքների իրականացման համար նախատեսված ժամկետները: Բացի այդ, եթե կողմերից որևէ մեկը պատասխանատվության միջոցներ չի կիրառում պայմանագրի պայմանները խախտելու համար, դրանից չի կարելի ենթադրել, որ համապատասխան պատասխանատվության միջոցներ չեն կիրառվի պայմանագրի պայմանների հետագա կամ շարունակական խախտումների դեպքում:

(2) Իրավական ուժ ունենալու համար պայմանագրի կողմերից որևէ մեկի՝ պայմանագրով սահմանված իր իրավունքներից և լիազորություններից հրաժարվելու մասին որոշումը պետք է.

- ա) լինի գրավոր;
- բ) ամսաթիվ ունենա իր վրա և ստորագրված լինի համապատասխան կողմի լիազոր ներկայացուցչի կողմից;
- գ) հստակորեն սահմանի այն իրավունքները կամ լիազորությունները, որոնցից ճշված կողմն ուզում է հրաժարվել, ինչպես նաև այն, թե ինչ սահմաններում է կողմը հրաժարվում այդ իրավունքներից կամ լիազորություններից;
- դ) հաստատված լինի համապատասխան մարմնի կողմից, որը գործող օրենսդրության համաձայն իրավասու է ժամանակավորապես դադարեցնել Ընկերության՝ պայմանագրով սահմանված իրավունքներն ու լիազորությունները, եթե խոսքը վերաբերում է Ընկերության իրավունքներին և լիազորություններին:

1.3.10 Պայմանագրի դրույթների անկախությունը

Եթե պայմանագրի որևէ դրույթ կամ պայման անվավեր է կամ ուժը կորցրած է ճանաչվում, դա հիմք չի կարող հանդիսանալ պայմանագրի մնացած դրույթներն ու պայմաններն էլ արգելված կամ ուժը կորցրած համարելու համար:

1.3.11 Օրերի թիվը

Պայմանագրի տևողությունը հաշվարկվում է գործող օրենսդրության համաձայն, ըստ որի, եթե որևէ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը համընկնի շաբաթ կամ կիրակի օրերի կամ որևէ պաշտոնական տոնի հետ, հաշվետու ժամանակաշրջանը պետք է երկարաձգվի մինչև հաջորդ աշխատանքային օրը:

1.3.12 Գրամական հաշվարկները

Բացառությամբ այն դեպքերի, երբ վարկային համաձայնագրով այլ բան է սահմանվում, պայմանագրով նախատեսված բոլոր աշխատանքների հետ կապված դրամական հաշվարկները պետք է կատարել տեղական արժույթով:

1.3.13 Տոկոսադրույթները

Պայմանագրի տարբերում նախատեսված բոլոր տոկոսադրույթների չափերը պետք է համապատասխանեն տվյալ ժամանակաշրջանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոխառությունների համար սահմանված պաշտոնական տոկոսադրույթի չափին:

1.3.14 Մնայուն պարտավորությունները

Պայմանագրով սահմանված կարգով պայմանագիրը դադարեցնելու կամ պայմանագրի ժամկետն ավարտվելու պահից կողմերի սույն փաստաթղթով սահմանված բոլոր իրավունքներն ու պարտականությունները դադարում են գործել, բացառությամբ.

- (1) այն իրավունքների ու պարտականությունների, որոնք համապատասխանաբար շնորհվել կամ գոյացել են պայմանագրի ժամկետն ավարտվելու կամ պայմանագիրը դադարեցվելու օրը:
- (2) գաղտնի ինֆորմացիան չհրապարակելու հետ կապված Կառավարչի պարտավորության, որը սահմանված է ԸՊ 3.4 հոդվածով:
- (3) ԸՊ 3.7 հոդվածով սահմանված պարտավորությունների՝ կապված կատարողական հաշվետվության հետ:
- (4) ցանկացած այլ իրավունքի, որ կողմը կարող է ունենալ գործող օրենսդրության համաձայն:
- (5) պայմանագիրը դադարեցնելու կամ ավարտվելու դեպքում Ընկերության հետ անցումային հարցերի կարգավորման վերաբերյալ համագործակցելու Կառավարչի պարտավորությանը:
- (6) Կառավարչի այն պարտավորությունների, որոնք կապված են համակարգը «փոխարինող կառավարչին» սահուն կերպով հանձնելու համար պայմանագրի ավարտից հետո դեռ մինչև 60 օր ղեկավար անձնակազմի աշխատանքն ապահովելու հետ:
- (7) ԸՊ 3.5, 3.6 և 3.7 հոդվածներով սահմանված պարտավորությունների:

1.4 Դիմումներ ու ծանոթագրություններ

- (1) Պայմանագրով պահանջվող կամ թույլատրվող բոլոր դիմումներն ու ծանոթագրությունները պետք է ներկայացվեն գրավոր տեսքով: Ցանկացած մասն դիմում կամ ծանոթագրություն համարվում է ներկայացված, եթե այն հասցեատիրոջը, այն է՝ կողմերից որևէ մեկի լիազոր ներկայացուցչին, ներկայացվում է ամօտն կամ սուրհանդակի միջոցով՝ «Լրացուցիչ մանրամասներ» կոչվող առդիրում (առդիր 1) նշված հասցեներով:
- (2) Երկու դեպքերում էլ՝ սուրհանդակի միջոցով կամ ամօտն ներկայացնելու, դիմումի կամ ծանոթագրության առաքումը համարվում է կայացած, եթե հասցեատերը՝ ստացող կողմը, գրավոր հաստատում է դիմումի կամ ծանոթագրության ստացման փաստը:
- (3) Կողմերից յուրաքանչյուրը կարող է փոխել իր փոստային հասցեն՝ դրա մասին համապատասխան ծանոթագրություն ուղարկելով մյուս կողմին՝ ԸՊ 1.4 հոդվածով սահմանված կարգի համաձայն:
- (4) Կառավարչի հասցեն, ԸՊ 1.4 հոդվածով սահմանված կարգով դիմումներ և ծանոթագրություններ ուղարկելու նպատակով, պետք է լինի Հայաստանում:

1.5 Իրավական բազան

Սույն պայմանագիրը, իր իմաստով և մեկնաբանությամբ, ինչպես նաև կողմերի միջև բոլոր իրավահարաբերությունները պետք է հիմնված լինեն գործող օրենսդրության վրա:

1.6 Գործողության վայրը

Կառավարիչը պետք է ծառայություններն իրականացնի սպասարկան գոտու այն հատվածներում, որոնք սահմանված են պայմանագրի տարրերում: Այն դեպքերում, երբ կոնկրետ խնդիրների լուծման համար պահանջվում է աշխատանքներ կատարել սպասարկման գոտու այնպիսի հատվածներում, որոնք նշված չեն պայմանագրի տարրերում, նշված աշխատանքների իրականացման համար պահանջվում է կողմերի փոխադարձ համաձայնությունը:

1.7 Լիազոր անդամի դերը

Եթե Կառավարիչը երկու է ավելի «անդամ» ունեցող կոնտրոլում է, որը գործող օրենսդրության համաձայն գրանցվել է ՀՀ-ում որպես առանձին իրավաբանական անձ, «Լրացուցիչ մանրամասներ» կոչվող առդիրում նշված անդամը պայմանագիրն ստորագրում է այդ իրավաբանական անձի անունից և սույնով հաստատում, որ մրցույթին մասնակցած կոնտրոլումի բոլոր անդամները ԸՊ 1.3.8 կետի համաձայն լիազորել են նրան գործելու կոնտրոլումի անունից՝ իրականացնելով Կառավարչի համար սույն պայմանագրով նախատեսված բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

1.8 Լիազոր ներկայացուցիչները

(1) Մինչև «մեկնարկային օրը» և՛ Կառավարման խորհուրդը, և՛ Կառավարիչը պետք է նշանակեն մեկական անձ, որպես «լիազոր ներկայացուցիչ», այն է՝ կցորդ պայմանագրի հետ կապված հարցերով և կոորդինատոր: Լիազոր ներկայացուցիչները նշանակվում են հետևյալ կարգով.

- (ա) (1) Կառավարիչը նշանակում է մեկ լիազոր ներկայացուցիչ:
 - (2) Կառավարիչը նշանակում է լիազոր ներկայացուցիչ մեկ փոխարինող՝ այն դեպքերի համար, երբ լիազոր ներկայացուցիչն ի վիճակի չլինի կատարել պայմանագրով սահմանված իր պարտականությունները:
- (բ) (1) Ընկերությունը նշանակում է Կառավարման խորհրդի նախագահին որպես Ընկերության լիազոր ներկայացուցիչ բոլոր այն հարցերում, որոնք կապված են սույն պայմանագրով Կառավարման խորհրդին վերապահված լիազորությունների հետ:
 - (2) Ընկերությունը նշանակում է Կառավարման խորհրդի նախագահի տեղակալին որպես Ընկերության լիազոր ներկայացուցիչ փոխարինող՝ այն դեպքերի համար, երբ լիազոր ներկայացուցիչն ի վիճակի չլինի կատարել պայմանագրով սահմանված իր պարտականությունները:
- (գ) (1) Կառավարման խորհուրդը ՊՎԳ-ի աշխատակիցների քվից նշանակում է մեկ լիազոր ներկայացուցիչ, որպեսզի վերջինս հանդես գա Ընկերության անունից բոլոր այն հարցերում, որոնք կապված չեն սույն պայմանագրով Կառավարման խորհրդին վերապահված լիազորությունների հետ:
 - (2) ՊՎԳ-ի մեկ այլ աշխատակցի Կառավարման խորհուրդը նշանակում է որպես ԸՊ 1.8(1)(գ)(1) կետի համաձայն նշանակված լիազոր ներկայացուցիչ փոխարինող՝ այն դեպքերի համար, երբ լիազոր ներկայացուցիչն ի վիճակի չլինի կատարել պայմանագրով սահմանված իր պարտականությունները:

- (2) ԸՊ 1.8(1)(գ)(1) կետի համաձայն նշանակված լիազոր ներկայացուցիչը և ԸՊ 1.8(1)(գ)(2) կետի համաձայն նշանակված լիազոր ներկայացուցչի փոխարինողը իրավասու չեն հանդես գալու Ընկերության անունից այն հարցերում, որոնք կապված են սույն պայմանագրով քաջառապես Կառավարման խորհրդին վերապահված լիազորությունների հետ:
- (3) Բացառությամբ ԸՊ 1.8(2) կետով նախատեսված սահմանափակումների, ինչպես նաև պայմանագրի ցանկացած այլ դրույթի որը սահմանափակում է լիազոր ներկայացուցիչների ու նրանց փոխարինողների լիազորությունները, լիազոր ներկայացուցիչները և նրանց փոխարինողները կարող են ձեռնարկել պայմանագրով պահանջվող կամ թույլատրվող ցանկացած քայլ, ինչպես նաև վավերացնել ցանկացած փաստաթուղթ, որի վավերացումը պայմանագրով վերապահված է իրենց:
- (4) Լիազոր ներկայացուցիչները և նրանց փոխարինողները պետք է մատչելի լինեն մյուս կողմի համար նորմալ աշխատանքային օրվա ժամերին:
- (5) Կառավարիչը չի կարող փոխել իր լիազոր ներկայացուցչին առանց Ընկերության նախնական գրավոր համաձայնության:
- (6) Որպես լիազոր ներկայացուցիչներ և իրենց փոխարինողներ կարող են գործել այն անձինք, որոնք գրանցված են որպես այդպիսիք պայմանագրի «Լրացուցիչ մանրամասներ» կոչվող առջիկում (առդիր 1):
- (7) Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից սույն պայմանագրի համաձայն ձեռնարկված բոլոր գործողությունները, ընդունված բոլոր որոշումները և ստորագրված բոլոր փաստաթղթերը համապատասխան պարտավորություններ են առաջացնում կողմերի համար սույն պայմանագրի շրջանակներում:

1.9 Հարկեր, տուրքեր, մաքսատուրքեր և այլ վճարներ

1.9.1 Կառավարման հաստատագրված վճար և խրախուսավճար

- (1) Կառավարիչը գործող օրենսդրության համաձայն ազատվում է կառավարման հաստատագրված վճարի և խրախուսավճարի վրա հաշվարկվող շահութահարկից:
- (2) Կառավարչի աշխատակազմը («Ընկվար անձնակազմը») գործող օրենսդրության համաձայն վճարում է եկամտահարկ:

1.9.2 Ընկերության կողմից իրականացվող գնումները

Ընկերության կողմից ԸՊ 3.13.1.(ա) կետի համաձայն Ընկերության սեփական միջոցներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հետ կապված ՀՀ պետական և տեղական համապատասխան մարմինների կողմից հաշվարկված բոլոր հարկերը և տուրքերը պետք է վճարվեն Ընկերության կողմից:

1.9.3 Կապիտալ ֆոնդի ֆինանսավորվող գնումները

Կողմերն ընդունում են, որ «Ներդրումների ֆոնդի մասին» առդիր 12-ով նախատեսված գումարները գործող օրենսդրության և ՀՀԶ ծրագրի վարկային համաձայնագրի համաձայն ենթակա չեն հարկման:

1.10 Պատվիրակում

- (1) Կառավարիչը չի կարող որևէ երրորդ կողմի փոխանցել պայմանագրի կամ դրա մի մասի կատարումը կամ պայմանագրին առնչվող որևէ իրավունք,

պարտականություն, արտոնություն կամ շահույթ առանց հատավարման խորհրդի նախնական գրավոր համաձայնության, քացատությանը այն դեպքերի, երբ հատավարիչը լիազորված է լինում գումարներ փոխանցել այդ սուբյեկտին պարտքի մարման կամ պայմանագրով սահմանված աշխատանքների ֆինանսավորման գծով:

(2) Որպեսզի պատվիրակման ակտը վավերական համարվի և ԸՊ 1.10(1) կետի համաձայն հաստատման ընդունվի հատավարման խորհրդի կողմից, այն պետք է.

- (ա) լինի գրավոր,
- (բ) ամսաթիվ ունենա իր վրա և ստորագրված լինի Ընկերության լիազոր ներկայացուցչի կողմից,
- (գ) ներկայացնի պատվիրակման գործարքի բոլոր մանրամասները,
- (դ) հաստատված լինի համապատասխան մարմնի կողմից, որը գործող օրենսդրության համաձայն իրավասու է նման գործարքներ հաստատել:

Հոդված 2 - Պայմանագրի սկիզբը, վերջը և ընդհատումը

2.1 Ուժի մեջ մտնելը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն պահից, երբ կողմերը, Բանկի հավանությունն ստանալուց հետո, ստորագրում են պայմանագիրը («ուժի մեջ մտնելու օրը»):

2.2 Պայմանագրի տևողությունը

(1) Եթե սույն պայմանագիրը վաղաժամկետ չի դադարեցվում ԸՊ 2.8 գլխի համաձայն կամ չի երկարաձգվում ԸՊ 2.5 գլխի համաձայն, այն ավարտվում է «մեկնարկային օրվա» չորրորդ տարեդարձի օրը («ավարտի օրը»):

(2) Այդուհանդերձ, պայմանագիրը 4-րդ տարվա վերջում կարող է երկարացվել ևս 2 տարով, եթե Կառավարման խորհուրդը և ՄՋԸ-ի այդ մասին համատեղ որոշում ընդունեն:

(3) Սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն պայմանագիրը երկարաձգելու մասին Կառավարման խորհրդի և ՄՋԸ-ի համատեղ որոշումը պետք է հիմնված լինի հետևյալ պայմանների վրա.

ա) «մեկնարկային օրվանից» հետո երեք ու կես տարի անց ՀՋՁ ծրագրի բյուջեից կատարված վճարումների ընդհանուր գումարը հավասար է կամ գերազանցում ՄՋԸ վարկի առաջին տրանջի շրջանակներում ձևավորված բյուջեի 75 տոկոսին,

բ) պայմանագրի երրորդ տարվա վերջի դրությամբ խրախուսավճարի հաշվարկման համար նախատեսված կատարողական ցուցանիշների գծով Կառավարչի կողմից առօրյ 9-ի 1-ին և 3-րդ հավելվածների համաձայն հավաքած գումարային միավորը հավասար է 0.7-ի կամ դրանից ավել է:

2.3 Ծառայությունների իրականացման սկիզբը

(1) Մեկնարկային օրը որոշվում է Ընկերության կողմից՝ ելնելով այն հանգամանքից, որ մեկնարկը պետք է կատարվի պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում կամ, կողմերի փոխադարձ գրավոր համաձայնության դեպքում՝ ավելի ուշ:

(2) Բացառությամբ ԸՊ 2.3.1(3) կետում նախատեսված դեպքի, Կառավարիչը ծառայությունների իրականացումը պետք է սկսի «մեկնարկային օրը»:

(3) Կառավարիչը չպետք է սկսի «Ծառայությունների մասին» առօրյով (առօրյ 2) նախատեսված՝ կոյուղու և ջրակմառակարարման համակարգերի շահագործման իր ընթացիկ աշխատանքները սպասարկման գոտում մինչև «աշխատանքներն ստանձնելու օրը»՝ մեկնարկային օրվանից 30 օր հետո: Այդ օրվա դրությամբ Կառավարչի կողմից նշանակված ծրագրի ռեզիդենտ ղեկավարը.

ա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից նշանակվում է Ընկերության գործառնիք տնօրեն,

բ) ստանում է Ընկերության կնիքը և դառնում Ընկերության բոլոր բանկային հաշվիների միակ կարգադրիչը մինչև պայմանագրի վերջը:

2.4 Ծառայությունների իրականացումն ավարտի օրվանից հետո

- (1) Մինչև պայմանագրի վերջին 30 օրը Կառավարման խորհրդի կողմից համապատասխան դիմում ստանալու դեպքում Կառավարչից պետք է «ավարտի օրվանից» հետո օժանդակության կարգով մինչև 60 օր շարունակի ծառայություններ մատուցել Ընկերությանը («անցումային շրջանի ծառայություններ») համակարգի փոխանցումը «փոխարինող օպերատորին» սահուն կերպով իրականացնելու համար: «Անցումային շրջանի ծառայությունների» մեջ պետք է մտնեն միայն այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են անցումային շրջանում, այլ որ թե «Ծառայությունների մասին» առդիրով (առդիր 2) սահմանված բոլոր ծառայությունները:
- (2) Եթե Կառավարման խորհուրդը ԸՊ 2.4.1 կետի համաձայն անցումային ծառայություններ մատուցելու խնդրանքով դիմում է Կառավարչին, անցումային աշխատանքներն իրականացվում են «ղեկավար անձնակազմի» այն անդամների կողմից, որոնց ընտրում է Կառավարման խորհուրդը: Այդ անդամներից բաղկացած ղեկավար անձնակազմը պետք գտնվի Հայաստանում մինչև անցումային աշխատանքների ավարտը:
- (3) Անցումային շրջանի ծառայության համար Կառավարման խորհուրդը պետք է վճարի Կառավարչին շաբաթական կտրվածքով, իսկ վարձատրության չափը «ղեկավար անձնակազմի» անդամներից յուրաքանչյուրի համար պետք է համաձայնեցվի Կառավարման խորհրդի և Կառավարչի միջև:

2.5 Պայմանագրի երկարաձգումը

- (1) Կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում սույն պայմանագիրն «ավարտի օրվանից» հետո կարող է երկարաձգվել մինչև 12 ամիս ժամանակով: Պայմանագիրը երկարաձգելու համար բանակցություններ սկսելու իր ստանդարտային մասին Ընկերությունը պետք է տեղեկացնի Կառավարչին մինչև պայմանագրի վերջին եռամսյակի սկիզբը:
- (2) Կողմերն ընդունում են, որ ՄՋԸ-ն պայմանագրով սահմանված ժամկետներից դուրս որևէ ֆինանսավորում ապահովելու պարտավորություն չունի, և կողմերը, հետևաբար, պայմանագրի երկարաձգման հնարավորությունը քննարկելիս չպետք է ապավինեն ՄՋԸ-ի ֆինանսավորմանը:

2.6 Ֆորս մաժոր

2.6.1 Ընդհանուր դրույթներ

- (1) Սույն պայմանագիրում «ֆորս մաժորի» տակ պետք է հասկանալ մի երևույթ, որը.
 - ա) տվյալ կողմի համար անկառավարելի է, և
 - բ) տվյալ կողմի համար անհնար է դարձնում պայմանագրով սահմանված իր պարտավանությունների կատարումը կամ այնպիսի պայմաններ է ստեղծում, որ դրանց կատարումը դառնում է գործնականում անհնաստ:
- (2) «Ֆորս մաժորն» ընդգրկում է հետևյալ երևույթները, սակայն չի սահմանափակվում դրանցով.
 - ա) պատերազմներ, ապստամբություններ և մասսայական անկարգություններ,
 - բ) փոթորիկներ, ջրհեղեղներ, երկրաշարժեր կամ այլ բնական աղետներ,

- զ) ունեցվածքի բռնագրավում կամ նմանատիպ այլ գործողություններ կառավարական մարմինների կողմից,
- դ) գործադրույժներ, պիկետներ կամ այլ նմանատիպ գործողություններ արտադրական տեղամասերում, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆորս մատրի հայտարարած կողմն ի վիճակի է կանխելու այլ գործողությունները:

Ֆորս մատրի համարվելու համար նշված երևույթները պետք է բավարարեն ԸՊ 2.6.1(1)(բ) կետով սահմանված պայմանին:

(3) Ֆորս մատրի չի համարվում.

- ա) այն երևույթը, որը հանդիսանում է տվյալ կողմի կամ նրա ենթակա-պարտունների, գործակալների կամ ծառայողների անվտանգության կամ կանխանտաժված գործողության հետևանք;
- բ) այն երևույթը, որը տվյալ կողմի բարեխիղճ և հեռաժամ մտեցման դեպքում.
 1. կարող էր հաշվի առնվել պայմանագրի ձևակերպման ժամանակ,
 2. հնարավոր կլիներ հաղթանարել կամ խուսափել դրանից պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու դեպքում:

(4) Ֆորս մատրի չի կարող համարվել թերֆինանսավորումը կամ սույն փաստաթղթով նախատեսված վճարումների չկատարումը:

2.6.2 Պայմանագիրը չխզելու պայմանը

Կողմերից որևէ մեկի պայմանագրով սահմանված իր պարտականությունների ինչ-որ մասը չկատարելը չի համարվում պայմանագրի խզում կամ պայմանագրի չկատարում, եթե այն պայմանավորված է ֆորս մատրով, որից տուժած կողմը, պատշաճ գզուշվորություն ցուցաբերելով, ժամանակին ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ և հնարավոր միջոցները պայմանագրի պայմանների կատարումն ապահովելու համար:

2.6.3 Չեղմարկվելիք միջոցները

- (1) Ֆորս մատրից տուժած կողմը պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները նվազագույն ուշացումով պայմանագրի պայմանների կատարումն ապահովելու համար:
- (2) Ֆորս մատրից տուժած կողմը պետք է հնարավորին չափ շուտ՝ ամենաշուտը 14 օրվա ընթացքում տեղեկացնի մյուս կողմին ֆորս մատրի իրողության մասին՝ անհրաժեշտ փաստեր տրամադրելով այդ երևույթի բնույթի և առաջացման վերաբերյալ: Նույն եղանակով, կողմը պետք է հնարավորին չափ շուտ ծանուցի մյուս կողմին՝ ճորմալ աշխատանքային պայմանների վերականգնման մասին:
- (3) Կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները ֆորս մատրի հետևանքները նվազեցնելու համար:

2.6.4 Ժամկետների հետաձգումը

Ֆորսբանջյուր հաշվետու ժամանակաշրջան, որի ընթացքում այս կամ այն կողմը պայմանագրի համաձայն պարտավոր է կատարել որևէ աշխատանք, կարող է

երկարացվել այնքան ժամանակով, որքան կողմը կորցրել է ֆորս մածորի պատճառով:

2.6.5 Վճարումների կատարումը

Այն ժամանակահատվածում, երբ Կառավարիչը ֆորս մածորի պատճառով ի վիճակի չի լինում իրականացնել ծառայությունները, ՊՎԳ-ն պետք է շարունակի վճարել նրան պայմանագրով սահմանված կարգով և, քացի այդ, պետք է փոխհատուցի ֆորս մածորին դիմակայելու և դրա հետևանքները վերացնելու ուղղությամբ Կառավարչի կատարած լրացուցիչ ծախսերը:

2.6.6 Խորհրդակցում

Այն քանից հետո, երբ ֆորս մածորի արդյունքում ծառայությունների զգալի մասի իրականացումն Կառավարչի կողմից դառնա անհնար, 30 օրվա ընթացքում, կողմերը պետք է խորհրդակցեն իրար հետ ստեղծված իրավիճակում համապատասխան միջոցների ձեռնարկման վերաբերյալ փոխադարձ համաձայնություն ձեռքբերելու համար:

2.7 Ֆինանսավորման ժամանակավոր դադարեցում (սառեցում)

Ընկերությունը կարող է, սառեցման մասին Կառավարչին համապատասխան ծանուցում ուղարկելով, ժամանակավորապես դադարեցնել Կառավարչի ֆինանսավորումը, եթե Կառավարիչը չկատարի պայմանագրով սահմանված իր պարտականություններից որևէ մեկը, այդ բվում՝ ծառայությունների իրականացման գծով: Նշված ծանուցման մեջ, որի պատճենը պետք ուղարկվի նաև ՍՁԼ-ին.

- ա) պետք է հստակորեն նշվի՝ որ պարտականությունը չի կատարվել Կառավարչի կողմից:
- բ) պետք է պահանջվի Կառավարչից լրացնել բացթողումը ծանուցումն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:
- գ) պետք է լինի Կառավարչի կողմից պայմանագիրը չկատարելու փաստը հաստատող անկախ ամուլիտորի եզրակացությունը:

2.8 Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը

2.8.1 Ընկերության կողմից

(1) Ընկերությունը կարող է դադարեցնել սույն պայմանագիրը, եթե.

- ա) Կառավարիչը ԸՊ 2.7 հոդվածով սահմանված կարգի համաձայն «սառեցման մասին» ծանուցում ստանալուց հետո 30 օրվա ընթացքում չի լրացնում ծառայությունների իրականացման մեջ նկատված այն բացթողումները, որոնց մասին նշվում է ծանուցման մեջ: Անհրաժեշտության դեպքում Ընկերությունը կարող է իր սեփական հայեցողությամբ երկարեցնել բացթողումների լրացման համար սահմանված ժամկետը՝ համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելով:
- բ) Կառավարիչը սնանկ կամ անվճարունակ է հայտարարվում կամ իր պարտքերը թեթևացնելու համար որևէ պայմանավորվածության մեջ է մտնում իր պարտատերերի հետ կամ օգտվում է պարտականեղին արտոնություններ տվող որևէ օրենքի ընձեռած հնարավորություններից, կամ էլ հարկադրված կամ կամավոր դիմում է ինքնալուծար-

ման կամ լուծարված կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարման հետ կապված մեխանիզմների օգտագործմանը:

- զ) Կառավարիչը չի ենթարկվում ԸՊ 8-րդ հոդվածի համաձայն կայացված արքիտրաժային որևէ վճռի:
- ը) Կառավարիչն Ընկերությանն է հանձնում վերջինիս իրավունքների, պարտավորությունների և շահերի վրա շոշափելի ազդեցություն ենթադրող տեղեկանք՝ նախապես իմանալով, որ այն կեղծ է:
- ե) Ֆորս մատրիի արդյունքում Կառավարիչն ավելի քան 60 օր ի վիճակի չի լինում իրականացնել ծառայությունների զգալի մասը:

2.8.2 Պայմանագրի դադարեցման հիմնավոր պահանջ

- (1) Ընկերությունը կարող է ԸՊ 2.8.1(1) կետի (ա, բ, գ, դ կամ ե) ենթակետերի համաձայն դադարեցնել պայմանագիրը՝ դադարեցման մասին գրավոր պատճառաբանված ծանուցում ներկայացնելով Կառավարչին: Պայմանագիրը համարվում է դադարեցված այդ ծանուցումը ներկայացնելու օրվանից 30 օր հետո:
- (2) Պայմանագրի դադարեցման մասին պատճառաբանված ծանուցման մեջ պետք է նշվի (նշվեն) պայմանագրի այն դրույթը կամ դրույթները, որի (որոնց) հիման վրա պայմանագիրը դադարեցվում է Ընկերության կողմից:

2.8.3 Պայմանագիրն առանց հիմնավորման դադարեցնելու մասին ծանուցում

Կառավարման խորհուրդը կարող է դադարեցնել սույն պայմանագիրը առանց ԸՊ 2.8.1 կետում քվարկված հիմնավորումների՝ դադարեցման մասին գրավոր ծանուցում ներկայացնելով Կառավարչին: Այս դեպքում պայմանագիրը համարվում է դադարեցված չպատճառաբանված ծանուցումը ներկայացնելու օրվանից 60 օր հետո:

2.8.4 Կառավարչի կողմից

Կառավարիչը կարող է դադարեցնել սույն պայմանագիրը, եթե.

- ա) Ընկերությունը սույն պայմանագրով նախատեսված վճարումների ուշացման մասին Կառավարչից գրություն ստանալուց հետո 45 օրվա ընթացքում չի կատարում իր ֆինանսական պարտավորությունները Կառավարչի նկատմամբ, և եթե այդ ժամանակահատվածում խնդրո առարկա գումարի վճարման հարցը չի վիճարկվում ԸՊ 8-րդ հոդվածի համաձայն:
- բ) Ընկերությունը պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարում է շոշափելի քերացումներով և դրանց մասին Կառավարչից գրավոր ծանուցում ստանալուց հետո չի շտկում իրավիճակը 45 օրվա ընթացքում:
- գ) Ֆորս մատրիի արդյունքում Կառավարիչն ավելի քան 60 օր ի վիճակի չի լինում իրականացնել ծառայությունների զգալի մասը:
- դ) Ընկերությունը չի ենթարկվում ԸՊ 8-րդ հոդվածի համաձայն կայացված արքիտրաժային որևէ վճռի:

2.8.5 Պայմանագրի դադարեցման մասին ծանուցում Կառավարչի կողմից

- (1) Եթե Կառավարիչը ցանկանում է ԸՊ 2.8.4 կետի դրույթների հիման վրա դադարեցնել պայմանագիրը, նա պետք է դադարեցման մասին գրավոր ծանու-

ցում ներկայացնի Ընկերությանը: Այս դեպքում պայմանագիրը համարվում է դադարեցված այդ ծանուցումը ներկայացնելու օրվանից 30 օր հետո:

- (2) Պայմանագրի դադարեցման մասին ծանուցման մեջ Կառավարիչը պետք է նշի պայմանագրի այն դրույթը կամ դրույթները, որի (որոնց) հիման վրա պայմանագիրը դադարեցվում է Կառավարչի կողմից:

2.8.6 Պայմանագրի դադարեցման շուրջ վեճերը

Այն դեպքում, երբ ծանուցված կողմը վիճարկելի է համարում ԸՊ 2.8.1(1) կետի (ա), (բ), (գ), (դ) և (ե) դրույթներով կամ ԸՊ 2.8.4 կետով սահմանված հանգամանքների իրողությունը, այդ կողմը կարող է պայմանագրի դադարեցման մասին ծանուցումն ստանալուց հետո 20 օրվա ընթացքում դիմել արբիտրաժ՝ համաձայն ԸՊ 8-րդ հոդվածի: Այս դեպքում պայմանագիրը չի դադարեցվի, եթե համապատասխան արբիտրաժային վճիռ չկայացվի:

2.8.7 Ծառայությունների մատուցման դադարեցումը

Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ սույն պայմանագիրը ԸՊ 2.8 հոդվածի համաձայն դադարեցնելու դեպքում, Կառավարիչը պետք է համապատասխան ծանուցումն ստանալուց կամ ուղարկելուց ամմիջապես հետո ձեռնարկի բոլոր անհրաժեշտ քայլերը ծառայությունների իրականացումն արագ և օպերատիվ կերպով դադարեցնելու ուղղությամբ՝ ձգտելով այդ նպատակի համար կատարել մինիմալ ծախսեր: Ինչ վերաբերում է կատարողական հաշվետվություններին, գույքին, սարքավորմանը, նյութերին և Ընկերությանը վերադարձման ենթակա այլ ունեցվածքին, ապա դրանց փոխանցումը Կառավարչի կողմից Ընկերությանը պետք է իրականացվի, կախված հանգամանքներից, ԸՊ 3.8 և 3.12 հոդվածներով սահմանված կարգի համաձայն:

2.8.8 Վերջնահաշիվը

ԸՊ 2.8 հոդվածի համաձայն սույն պայմանագրի դադարեցման դեպքում, Ընկերությունը պետք է հանձնարարի ՊՎԳ-ին, որպեսզի վերջինս կատարի հետևյալ վճարումները Կառավարչին.

- ա) ԸՊ 6-րդ հոդվածի համաձայն՝ մինչև դադարեցման օրը քաղաքար մակարդակով իրականացված ծառայությունների համար կատարված ծախսերի փոխհատուցումը:
- բ) քացատությանը ԸՊ 2.8.1(1)(ա, բ, գ կամ դ) կետերով նախատեսված դեպքերի՝ պայմանագրի արագ և օպերատիվ դադարեցման հետ կապված ծախսերի փոխհատուցումը:

Հողված 3 - Կառավարչի պարտականությունները

3.1 Ընդհանուր դրույթներ

3.1.1 Ծառայությունները և կատարողական չափանիշները

Ունենալով սպասարկման գոտում ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերը կառավարելու և շահագործելու հետ կապված բոլոր լիազորությունները՝ Կառավարիչը պետք է.

- ա) իրականացնի «Ծառայությունների մասին» առդիրով (առդիր 2) նախատեսված ծառայությունները:
- բ) ծառայություններն իրականացնելիս առաջնորդվի «Կատարողական չափանիշների մասին» առդիրով (առդիր 6) սահմանված կատարողական չափանիշներով:
- գ) պայմանագրի շրջանակներում իր պարտականությունները կատարի բարելավորելով, արդյունավետորեն և խնայողականորեն ցուցաբերելով, որպես հիմք ընդունելով.
 1. ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների համար միջազգայնորեն ընդունված նորմերը և նորմատիվները,
 2. միջազգային մասնագիտական կազմակերպությունների կողմից ընդունված ինժեներական, հաշվապահական և խորհրդատվական ստանդարտներն ու չափանիշները,
 3. առկա խնդիրների առաջնահերթությունները, որոնք պետք է գնահատվեն՝ ելնելով ենթակառուցվածքների ու տեխնիկական միջոցների վիճակից և ծառայությունների ներկա մակարդակից,
 4. գործող նորմատիվ իրավական դաշտը:
- դ) ապահովի կառավարման և ինժեներատեխնիկական աշխատանքների իրականացման արդյունավետ մեխանիզմներ:
- ե) օգտագործի համապատասխան արդիական տեխնոլոգիաներ, ինչպես նաև անվտանգ և արդյունավետ սարքավորումներ, մեքենաներ և մեթոդներ՝ հաշվի իր առջև կանգնած խնդիրների բնույթը և հրատապությունը:
- զ) պայմանագրով սահմանված իր պարտականությունները կատարելիս հավատարիմ մնա Ընկերության առողջացման և ուժեղացման գործին:
- է) ենթակապալառուների կամ որևէ այլ երրորդ կողմի հետ հարաբերությունների ժամանակ պաշտպանի Ընկերության օրինական շահերը:

3.1.2 Սպասարկման գոտին

Կառավարիչը պետք է իրականացնի ծառայությունները «Ծառայությունների մասին» (առդիր 2) և «Սպասարկման գոտու մասին» (առդիր 4) առդիրների համաձայն:

3.1.3 Կառուցվածքները

Կառավարիչը պետք է սպասարկի այն կառուցվածքները, որոնք թվաթված են «Տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների մասին» առդիրում (առդիր 3-ի առաջին հավելվածը):

Առդիր 3-ի երկրորդ հավելվածում ներկայացված են տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների արժեքները («Առևտրի» գնահատմամբ): Այդ արժեքները կրում են կողմնորոշիչ բնույթ, և Կառավարիչը կարող է առաջարկել Կառավարման խորհրդին նորից վերագնահատել և գույքագրել Ընկերության հիմնական միջոցները:

3.1.4 Տեխնիկական անձնակազմ

Կառավարիչը, «Տեխնիկական անձնակազմի և կադրային քաղաքականության մասին» առդիրի (առդիր 8) համաձայն, ղեկավարում և վերահսկում է տեխնիկական անձնակազմը, որի միջոցով նա իրականացնում է ծառայությունները:

3.2 Նորմատիվ իրավական դաշտը

3.2.1 Գործող օրենսգրքությունը

Ծառայություններն իրականացնելիս Կառավարիչը պետք է առաջնորդվի գործող օրենսդրությամբ և հետևի, որ իր ղեկավար անձնակազմը և ենթակապալառուները գործեն օրենքի շրջանակներում: Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն երկու ամիս առաջ ՊՎԳ-ն պետք է գրավոր տեղեկացնի Կառավարչին ոլորտում գործող բոլոր նորմատիվ իրավական ակտերի մասին, իսկ Կառավարիչն իր հերթին պետք է կատարի դրանց պահանջները:

3.3 Ըստերի բախում

3.3.1 Կառավարչի կողմից լրացուցիչ կոմիսիոն և այլ վճարներ չվերցնելու և զեղչեր չսահմանելու սկզբունքը

ԸՊ 6-րդ հոդվածի համաձայն Կառավարչին տրվող վարձատրությունը պետք է հանդիսանա Կառավարչի ֆինանսավորման միակ աղբյուրը՝ կապված սույն պայմանագրի և դրանով սահմանված ծառայությունների հետ: Կառավարիչը, ԸՊ 6-րդ հոդվածի համաձայն, չպետք է իր սեփական շահի համար ընդունի կոմիսիոն և մնամատիվ այլ վճարներ ու սահմանի զեղչեր՝ կապված սույն պայմանագրի և դրանով սահմանված ծառայությունների կամ իր պարտականությունների կատարման հետ: Բացի այդ, Կառավարիչը պետք է հնարավորությունների սահմաններում ապահովի, որ իր ղեկավար անձնակազմի անդամները, ենթակապալառուները, շարքային ծառայողները և գործակալները նմանապես հրաժարվեն լրացուցիչ եկամտի նշված աղբյուրներից:

3.3.2 Սահմանափակումներ Կառավարչի և նրա դուստր ձեռնարկությունների համար

Կառավարիչը և նրա դուստր ձեռնարկությունները, ինչպես նաև այն ընկերությունը ու նրա դուստր ձեռնարկությունները, որը Կառավարչի հետ կոնտրոլիում է կազմել պայմանագրի տևողության ժամանակ պետք է զերծ մնան այնպիսի ապրանքներ, աշխատանքներ կամ ծառայություններ մատուցելուց, բացի պայմանագրով սահմանված «ծառայություններից», որոնք առելություն կունենան «կապիտալ ֆուդի» միջոցներով՝ առդիր 12-ի համաձայն ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների հետ:

3.3.3 Անհամատեղելի գործունեությունը արգելում

Կառավարիչը, ղեկավար անձնակազմը, ենթակապալառուները և Կառավարչի ու ենթակապալառուների աշխատակիցները և դուստր ձեռնարկությունները չպետք է Հայաստանի տարածքում ծավալեն այնպիսի գործունեություն կամ անուղղակիորեն

ներգրավվեն դրա մեջ, որն անհամատեղելի է պայմանագրով սահմանված իրենց պարտականությունների հետ:

3.3.4 Գործունեության որոշակի տեսակների արգելումը

Կառավարիչը, իր հիմնադիրներն ու դուստր ձեռնարկությունները չպետք է մասնակցեն հետևյալ աշխատանքներին կամ դրանց հետ որևէ ստեյություն ունենան.

- (1) Ընկերության կազմակերպչական և ինտիտուցիոն կառուցվածքում փոփոխությունների մշակումը և կատարումը, բացառությամբ այն աշխատանքների, որոնք նախատեսված են «Ծառայությունների մասին» և «Տեխնիկական անձնակազմի և կադրային քաղաքականության մասին» ատրիբյուտով (ատրիբյուտ 2 և 8):
- (2) Փոխարինող կառավարչի ընտրության համար կազմակերպվող մրցույթի փաստաթղթերի մշակումը կամ խմբագրումը:
- (3) Փոխարինող կառավարչի ընտրության համար կազմակերպվող մրցույթի գործընթացի կազմակերպումն ու իրականացումը:

ԸՊ 3.3.4 կետի պահանջները խախտելու դեպքում Կառավարիչը, իր հիմնադիրներն ու դուստր ձեռնարկությունները կզրկվեն փոխարինող կառավարչի ընտրության համար կազմակերպվող մրցույթին հայտ ներկայացնելու իրավունքից:

3.3.5 Փոխարինող կառավարչի ընտրության մրցույթին մասնակցելու պայմանները

Պայմանագրի ավարտից հետո Կառավարիչը կարող է մասնակցել փոխարինող կառավարչի ընտրության մրցույթին հետևյալ պայմաններով.

- (ա) մրցույթի բոլոր մասնակիցները պետք է իրենց հայտերի տեխնիկական ու ֆինանսական առաջարկությունների մշակման համար պահանջվող տեղեկատվությունն առանաղու հավասար իրավունքներ և հնարավորություններ ունենան:
- (բ) Կառավարման խորհուրդը պետք մրցույթի մասնակիցների համար մատչելի դարձնի իր տրամադրության տակ եղած բոլոր հաշվետվությունները, ինչպես նաև համակարգերի տեխնիկական վիճակի, կատարված ներդրումների ու վերանորոգումների, կրուսաների, բաժանորդների և վճարումների, ֆինանսների, հիմնական միջոցների, երաշխիքների, էլիտրակիկական մոդելների, կառավարման համակարգերի, աշխատակազմի, աշխատանքի և առողջության պահպանման մոդելի մասին ամբողջ տեղեկատվությունը:
- (գ) ԸՊ 3.3.5(բ) կետում նշված բոլոր հաշվետվությունները պետք է ուսումնասիրվեն և իստատավեն անկախ մասնագետների կողմից նակխան մրցույթի մասնակիցներին տրամադրվելը:
- (դ) Կառավարիչը չի կարող մասնակցել Ընկերության կազմակերպչական և ինտիտուցիոն ապագա կառուցվածքի մոդելավորման աշխատանքներին և փոխարինող կառավարչի ընտրության համար կազմակերպվող մրցույթի փաստաթղթերի մշակմանը:
- (ե) Կառավարիչը չպետք է խոչընդոտներ տեղծի մրցույթի մասնակիցների համար, կրե վերջիններս հայտերի նախապատրաստման փուլում ցանկության հայտնեն այցելել «կառուցվածքները» և տեղեկություններ ստանալ դրանց շահագործման ու «ծառայությունների» իրականացման ընթացքի մասին:

3.4 **Գաղտնիության պահպանումը**

Կառավարիչը, իր ենթակապալսուները և Կառավարչի ու ենթակապալսուների աշխատակիցները պայմանագրի տևողության ընթացքում և պայմանագրի ավարտից հետո պետք է գաղտնի պահեն «ծառայություններին», պայմանագրին և Ընկերության գործառնություններին առնչվող բոլոր տեսակի փակ տեղեկությունները, որոնց բացահայտումը կարելի է միայն Ընկերության նախնական գրավոր թույլտվության դեպքում: Ինֆորմացիայի «փակ» կամ «քաց» լինելը որոշվում է գործող օրենսդրության համաձայն:

3.5 **Կառավարչի պատասխանատվության շրջանակները**

3.5.1 **Կառավարչի ազատումը պատասխանատվությունից**

Բացառությամբ Կառավարչի կողմից անփութություն ցուցաբերելու կամ կանխատեսված խախտում կատարելու դեպքերի.

- ա) Կառավարիչը, պայմանագրի կամ քաղաքացիական իրավունքի շրջանակներում, որևէ պատասխանատվություն չի կրում Ընկերության առջև որևէ անուղղակի կորուստի (գույքի, արտադրանքի կամ եկամուտների) կամ վնասի համար, եթե դա կապված չէ Կառավարչի կողմից Ընկերությանը նախապես գնահատված կորուստների փոխհատուցման հետ:
- բ) Ընկերության առջև Կառավարչի պարտավորությունների գծով ընդհանուր գումարը չպետք է գերազանցի «կառավարման հաստատագրված վճարի» և խրախուսավճարի ընդհանուր գումարին: Այս պայմանը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ հարցը վերաբերում է ԸՊ 3.6 հոդվածի համաձայն Ընկերությանը պատասխանատվությունից ազատելու հետ կապված պարտավորություններին:

3.5.2 **Կառավարչի կողմից պատասխանատվությունից ազատումը**

Կառավարիչը պետք է ազատի կամ փոխհատուցի ընկերությանը և ընկերության աշխատակիցներին վարչական ու դատական կարգով կիրառվող նյութական պատասխանատվությունից, երբ խոսքը գնում է «ծառայություններին» իրականացման արդյունքում ստորև թվարկված ամենաց անփութության պատճառով որևէ անձի կյանքին, առողջությանը կամ սեփականությանը վնաս հասցնելու մասին.

- (ա) Կառավարիչը,
- (բ) Կառավարչի ենթակապալսուները,
- (գ) Կառավարչի կամ նրա ենթակապալսուների աշխատակիցները և գործակալները,
- (դ) տեխնիկական անձնակազմի անդամները:

3.6 **Հեղինակային իրավունքը խախտելու հետ կապված պատասխանատվությունից ազատումը**

- (1) Ընկերության կողմից ԸՊ 3.6.2 կետի պահանջը կատարելու դեպքում Կառավարիչը պետք է ազատի ընկերությանը և ընկերության աշխատակիցներին վարչական ու դատական կարգով կիրառվող նյութական պատասխանատվությունից, երբ խոսքը գնում է Կառավարչի, ենթակառնարկողների կամ նրանց աշխատակիցների կողմից հեղինակային որևէ իրավունքի խախտման մասին:
- (2) Եթե ԸՊ 3.6.1 կետում նշված խախտման կապակցությամբ Ընկերությանը բնազդանք է ներկայացվում կամ Ընկերության դեմ դատական գործ է

հարուցվում, Ընկերությունը պետք է անհապաղ ծանուցի Կառավարչին այդ մասին, որպեսզի վերջինս Ընկերության անունից, սակայն իր հաշվին պատասխանի մեղադրանքներին դատարանում կամ բանակցություններ վարի տուժած կողմի հետ ստեղծված իրավիճակը հարթելու համար:

Եթե նման ծանուցում ստանալուց հետո Կառավարիչը 28 օրվա ընթացքում Կառավարման խորհրդին չի տեղեկացնում բարձրացված մեղադրանքներին պատասխանելու և ստեղծված իրավիճակը հարթելու իր մտադրության մասին, Կառավարման խորհրդին իրավունք է վերապահվում Կառավարչի հաշվին պատասխանել այդ մեղադրանքներին ինքնուրույն կամ երրորդ կողմի միջոցով:

Կառավարման խորհուրդը Կառավարչի խնդրանքով պետք է վերջինիս ամեն հնարավոր օժանդակություն ցուցաբերի նման մեղադրանքների պատասխանելու գործում: Այդ օժանդակության ցուցաբերման հետ կապված ծախսերը պետք է հատուցվեն Կառավարչի կողմից:

- (3) Ընկերությունը պետք է նյութական, վարչական ու դատական պատասխանատվությունից ազատի Կառավարչին, երա աշխատակիցներին և ենթակապալառուներին, երբ խոսքը գնում է Կառավարման խորհրդի որևէ անդամի կամ ՊՎԳ-ի կողմից հեղինակային որևէ իրավունքի խախտման մասին:

3.7 Կառավարչի ապահովագրումը

- (1) Կառավարիչը պայմանագրի կատարման ընթացքում պետք է.

- ա) իր սեփական միջոցներով ձեռք բերի.
բ) պահանջի, որ իր ենթակապալառուներն իրենց սեփական միջոցներով ձեռք բերեն.

պայմանագրի իրականացման հետ կապված ռիսկերի առնչությամբ ապահովագրության հետևյալ տեսակները.

1. երրորդ կողմի առջև պատասխանատվության ապահովագրում՝ կապված Կառավարչի, ղեկավար անձնակազմի, ենթակապալառուների կամ նրանց աշխատակիցների կողմից պայմանագրով նախատեսված ծառայությունների իրականացման համար երրորդ կողմի տրանսպորտային միջոցների օգտագործման հետ: Ապահովագրման մինիմալ գումարը սահմանվում է 1,000,000 ամ.դ.:
2. երրորդ կողմի առջև քաղաքացիական պատասխանատվության ապահովագրում: Ապահովագրման մինիմալ գումարը սահմանվում է 2,000,000 ամ.դ.:
3. մասնագիտական պատասխանատվության ապահովագրում: Ապահովագրման մինիմալ գումարը սահմանվում է 3,000,000 ամ.դ.:
4. գործատուի պատասխանատվության և ծառայողի փոխհատուցման ապահովագրում՝ կապված Կառավարչի ղեկավար անձնակազմի և ենթակապալառուների աշխատողների հետ, գործող օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն: Ղեկավար անձնակազմի և ենթակապալառուների համար նախատեսել կյանքի, բժշկական, դժբախտ պատահարների և այլ տիպի ապահովագրություն՝ ըստ անհրաժեշտության;
5. կորցնելուց կամ վնասվելուց.

- Ա. սույն պայմանագրի շրջանակներում հատկացված միջոցներով գնված սարքավորման և պահեստամասերի ապահովագրում;
 - Բ. ծառայությունների իրականացման համար օգուտգործվող Կառավարչի սեփականության ապահովագրում;
 - Գ. ծառայությունների իրականացման ընթացքում Կառավարչի կողմից պատրաստված փաստաթղթերի ապահովագրում:
- (2) ԸՊ [3.7(1)(բ)1, 2, 3, 4 և 4] կետերում նշված ապահովագրությունները պետք է համապատասխանեն ՊՎԳ-ի կողմից հաստատված պայմաններին և վերաբերեն միայն Կառավարչի ռիսկին:
- (3) Ընկերության պահանջով Կառավարիչը պետք է տրամադրի ՊՎԳ-ին բավարարող գրավոր ապացույց առ այն, որ ԸՊ 3.7(1) կետով նախատեսված ապահովագրական պոլիսները ձեռք են բերվել, և որ ապահովագրական պարզևները ժամանակին մուծվում են:

3.8 Կատարողական հաշվետվությունը, հաշվապահական հաշվառումը և աուդիտը

3.8.1 Կատարողական հաշվետվությունը

- (1) Ծառայություններն իրականացնելու ընթացքում Կառավարչի կողմից կուտակված բոլոր տվյալները, փաստաթղթերը և պատրաստված բոլոր տեղեկանքները միասին կազմում են «Կատարողական հաշվետվությունը» և հանդիսանում են Ընկերության սեփականությունը: Կառավարիչը պետք է պայմանագրի սվարտի կամ դադարեցման օրը Ընկերությանը հանձնի կատարողական հաշվետվությունը և դրա մեջ մտնող բոլոր փաստաթղթերի համարակալված ցանկը:
- (2) Կատարողական հաշվետվության մեջ մտնող փաստաթղթերի թվին են պատկանում.
- ա) «կապիտալ ֆոնդի» «Բ» և «Գ» բաղադրիչների հետ առնչություն ունեցող բոլոր տեղեկատվական նյութերը,
 - բ) բոլոր մատյանները, փաստաթղթերը, պլանները, գծագրերը, ծանոթագրությունները, հանդիպումների արձանագրությունները և գրույցների գրառումները,
 - գ) բոլոր ձեռնարկները, հաշվետվությունները, իրավիճակի և ախտահանքի անվտանգության մասին տեղեկանքները, աուդիտային հաշվետվությունները, գույքագրման մատյանները, լաբորատոր հետազոտությունների արդյունքների մասին գրառումները, ընդունման-հանձնրման ակտերը, հաճախորդների մասին տեղեկատվական նյութերը, ֆինանսական տվյալները, ֆինանսական իրավիճակի մասին տեղեկանքները, ստացականները, հաշիվ-ֆակտուրաները, հաշվապահական մատյանները, ենթակապալի մասին պայմանագրերը և հաստիքացուցակները:

- (3) Կառավարիչը պայմանագրի տևողության ընթացքում պետք է Ընկերությանը ամսահամախալակ հնարավորություն տա կատարողական հաշվետվության բոլոր փաստաթղթերին ծանոթանալու և դրանցից պատճեններ հանելու:
- (4) Կառավարիչը կարող է իր մոտ պահել կատարողական հաշվետվության փաթեթի պատճենը, սակայն չի կարող այն օգտագործել սույն պայմանագրի հետ կապ չունեցող հարցերում առանց Ընկերության նախնական գրավոր թույլտվության:

3.8.2 Հաշվապահական հաշվառում

Կառավարիչը պետք է վարի պայմանագրին և ծառայությունների մատուցմանն առնչվող իր գործառնությունների հաշվապահական հաշվառում միջազգայնորեն ընդունված հաշվապահական սկզբունքների համաձայն:

3.8.3 Կատարողական հաշվետվության աուդիտ

- (1) ՊՎԳ-ն կարող է իր սեփական հայեցողությամբ և իր ուզած ժամանակ առանց որևէ ծանուցման անցկացնել Կառավարչի՝ պայմանագրի իրականացման հետ կապված հաշվապահական մատյանների, ֆինանսական տեղեկանքների և հաշվետվությունների և տեխնիկական փաստաթղթերի աուդիտ:
- (2) ՊՎԳ-ն կարող է աուդիտներն իրականացնել իր սեփական ուժերով կամ օգտվել անկախ աուդիտորի ծառայություններից՝ ֆինանսավորելով աուդիտների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը կապիտալ խնդրի «Բ» քաղաղրիչից:
- (3) ՄՋԸ-ն կարող է իր սեփական հայեցողությամբ և իր ուզած ժամանակ, առանց որևէ ծանուցման անցկացնել Կառավարչի՝ պայմանագրի իրականացման հետ կապված հաշվապահական մատյանների, ֆինանսական տեղեկանքների և հաշվետվությունների և տեխնիկական փաստաթղթերի աուդիտ՝ օգտվելով ՄՋԸ-ի նշանակված աուդիտոր(ներ)ի ծառայություններից:

3.9 Ենթակոնտրակտորները

- (1) Կառավարիչը չպետք է կնքի ենթակոնտրակտի այնպիսի պայմանագիր կամ պայմանագրեր, որոնց արդյունքում ստեղծվի այնպիսի իրավիճակ, որ «ծառայություններն» անբողջությամբ կամ երանց մեծ մասն իրականացվեն ենթակոնտրակտորի կամ ենթակոնտրակտորների կողմից: Կառավարիչը կարող է կնքել ենթակոնտրակտի այնպիսի պայմանագիր կամ պայմանագրեր, որոնց հիման վրա ենթակոնտրակտորները կառանձնեն «ծառայությունները» որոշ տարրերի իրականացումը:
- (2) Կառավարիչը չի կարող ենթակոնտրակտի որևէ պայմանագիր կնքել առանց ՊՎԳ-ի նախնական գրավոր թույլտվության:
- (3) Կառավարիչը պետք է ազգահովի, որ պայմանագրով սահմանված իր բոլոր այն պարտականությունները, որոնք վերաբերում են տվյալ ենթակոնտրակտորի կողմից իրականացվող աշխատանքներին, ընդգրկված լինեն համապատասխան ենթակոնտրակտի պայմանագրի դրույթների մեջ:
- (4) Ենթակոնտրակտի պայմանագրեր կնքելը չի ազատում Կառավարիչին պայմանագրով սահմանված իր պարտականություններից ոչ մեկից:
- (5) Որևէ ենթակոնտրակտորի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ ՊՎԳ-ի թույլտվությունը որևէ պարտավորություն կամ պատասխանատվություն չի

դնում ՊՎԳ-ի վրա և ոչ մի կերպ չի ազատում Կառավարչին պայմանագրով սահմանված իր պարտականություններից:

3.10 Հանդիպումները

- (1) Ընկերության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակված «ծրագրի ռեզիդենտ ղեկավարը» և ՊՎԳ-ի լիազոր ներկայացուցիչը պետք է ունենան նախապես պլանավորված և պարբերաբար անցկացվող ամսական հանդիպումներ՝ «ժառայությունների», տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների հետ կապված հարցերը, ինչպես նաև Կառավարչի կողմից ստորի 2-ի համաձայն պատրաստվող ամսական ու եռամսյակային հաշվետվությունները քննարկելու համար:
- (2) «Ծրագրի ռեզիդենտ ղեկավարը» և Ընկերության լիազոր ներկայացուցիչը պետք է հանդիպեն առնվազն շաբաթական մեկ անգամ՝ «ժառայությունների», տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների հետ կապված հարցերը քննարկելու համար: Այդ շաբաթական հանդիպումները պետք է պլանավորվեն լիազոր ներկայացուցիչների փոխադարձ համաձայնությամբ:

3.11 Հաշվետվությունները ներկայացնելու կարգը

- (1) Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Կառավարիչը պետք է Ընկերությանն ներկայացնի պայմանագրով պահանջվող հաշվետվությունների և փաստաթղթերի 10-ական պատճեն՝ հայերեն և անգլերեն, ինչպես նաև մեկ ամփոփ տեղեկանք կատարված աշխատանքների մասին՝ հայերեն: Նշված նյութերը պետք է ներկայացվեն պայմանագրով սահմանված ֆորմատով և ժամկետներում: Ընկերությունը կարող է իր սեփական հայեցողությամբ պահանջել այս կամ այն հաշվետվության լրացուցիչ 10 պատճեն՝ առանց հոգալու դրա հետ կապված ծախսերը:
- (2) Կառավարման խորհրդի և ՊՎԳ-ի կողմից Կառավարչին փաստաթղթերը ներկայացվում են հայերեն:

3.12 Ընկերության կողմից տրամադրված գույքը և նյութերը

- (1) Սպասարկման գումում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնական միջոցների սեփականության իրավունքը մնալու է անփոփոխ, իսկ Կառավարչին ապահովելու է այդ համակարգերի շահագործումն ու պահպանումը:
- (2) Ընկերության կողմից Կառավարչին հատկացված գույքը և բոլոր տեսակի սարքավորումներն ու նյութերը, ինչպես նաև Կառավարչի կողմից «կապիտալ ֆոնդի» միջոցներով զնված նյութական արժեքները համոխաբում են Ընկերության սեփականությունը և պետք է կրեն Ընկերության դրոշմը: Բացառությամբ են կազմում «կառավարման հաստատագրված վճարի» և «խրախուսավճարի» միջոցներով զնված նյութական արժեքները:
- (3) Պայմանագրի ավարտից կամ դադարեցումից անմիջապես հետո Կառավարիչը պետք է Ընկերությանը ներկայացնի սույն հոդվածի համաձայն Ընկերության սեփականություն հանդիսացող նյութական արժեքների ցանկը:

3.13 Գնումների կատարման ծրագիրը և մեխանիզմները

3.13.1 Ընդհանուր դրույթներ

Կառավարիչը Ընկերության անունից պետք է կատարի հետևյալ երկու հիմնական ախյի գնումները.

- ա) Կառավարիչը պետք է ձեռք բերի ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ շահագործման և ընթացիկ վերամորգման համար՝ համաձայն ԸՊ 3.13.2 կետի:
- բ) Կառավարիչը, ՊՎԳ-ի հետ համագործակցելով, պետք է ձեռք բերի ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ կապիտալ Ֆոնդի «Բ» և «Գ» հողվածներից ֆինանսավորվող ծրագրերի գծով:

3.13.2 Գնումների կատարումը Ընկերության սեփական միջոցներով

- (1) Ընկերության սեփական եկամուտներից գնումները Կառավարչի կողմից պետք է կատարվեն համաձայն. 1) Կառավարչի կողմից մշակված և Կառավարման խորհրդի կողմից հաստատված «գնումների հայեցակարգի», ինչպես դա սահմանված է «ծառայությունների մասին» առդրի (առդիր 2) 5.3.2(10) կետում, և 2) ԸՊ 3.12.2 կետի դրույթների:
- (2) Կառավարիչը պետք է Ընկերության անունով հաշիվներ բացի («ծախսային հաշիվներ») հայկական բանկերում, շահագործման և ընթացիկ վերամորգման նպատակով կատարվող գնումներն այդ հաշիվներից ֆինանսավորելու համար: Ծախսային հաշիվների վրա եղած բոլոր միջոցները հանդիսանում են Ընկերության սեփականությունը:
- (3) Ծախսային հաշիվներին ամսական կտրվածքով ֆինանսավորվում են «եկամուտային հաշիվներից» Կառավարման խորհրդի կողմից հաստատված «գնումների հայեցակարգով» սահմանված կարգի համաձայն:
- (4) Կառավարիչը կարող է Ընկերության անունից ֆինանսավորել ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերը առևտրային բանկերից վերցրված վարկերի միջոցներից: Այդպիսի վարկեր վերցնելուց առաջ դրանց պայմանները պետք է հաստատվեն ՊՎԳ-ի կողմից:
- (5) Ծախսային հաշիվներից գնումների ֆինանսավորումը պետք է կատարվի «գնումների հայեցակարգի» համաձայն:
- (6) Մույն եռվադաշի համաձայն Կառավարչի կողմից կատարվող բոլոր գնումները ենթակա են ստուգման Կառավարման խորհրդի կողմից: Ծախսային հաշիվներից վճարումներ կատարելուց անմիջապես հետո Կառավարիչը պետք է վճարման բոլոր հանձնարարագրերի պատճենները ներկայացնի ՊՎԳ-ին: Կառավարման խորհրդից և ՊՎԳ-ն կարող են սեփական հայեցողությամբ ԸՊ 3.12.2 կետի համաձայն ստուգման և առաջիկա ենթակել Կառավարչի կողմից կատարվող գնման գործարքները:

3.13.3 Կապիտալ Ֆոնդ («Բ» և «Գ» հողվածներ) - գնումներ

- (1) Կապիտալ Ֆոնդի «Բ» և «Գ» հողվածները ֆինանսավորվում են ՀԶՁ ծրագր Ֆոնդում ՄՁԸ վարկի և համաֆինանսավորման կարգով ՀՀ կառավարության կողմից հատկացված գումարների մուտքերի մի մասից՝ համաձայն «Կապիտալ Ֆոնդերի մասին» առդրի 12-ով սահմանված նպատակների:
- (2) Կառավարիչը պետք է ՊՎԳ-ի հետ համագործակցելով գնի ԸՊ 3.13.5 կետի համաձայն հաստատված «ներդրումների տարեկան պլանի» հետ կապված

ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ: Կառավարիչը և ՊՎԳ-ն պետք է ընդունեն զննման երկրպագակառուցում և հետևեն դրան՝ համաձայն առդիր 5-ի («զննման երկրպագակառուցման կարգը»):

3.13.4 Գնումների փաստաթղթերի ստուգումը

Առդիր 5-ի համաձայն, ԸՊ 3.13.3 կետում նշված գնումների փաստաթղթեր ենթակա են Բանկի կողմից նախնական տուգման և պետք է ներկայացվեն Կառավարչի կողմից անմիջապես Բանկին ՊՎԳ-ի միջոցով: Բանկը, Ընկերության կառավարման խորհուրդը և ՊՎԳ-ն կարող են իրենց սեփական հայեցողությամբ ստուգման և առդիր 5-ի ենթարկել Կառավարչի կողմից կատարվող զննման գործարքները:

3.13.5 Ներդրումների տարեկան պլան

(1) Կառավարիչը պետք է նախապատրաստի և ՊՎԳ-ի միջոցով ներկայացնի Կառավարման խորհրդին և նույն ՊՎԳ-ի հիմնավորված հաշվետվությունը:

(ա) «ձեկնարկային օրվանից» 90 օր հետո պայմանագրի առաջին օրացույցանին տարվա համար, և

(բ) պայմանագրի առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ տարիների վերջին օրերից 90 օր առաջ համապատասխան պայմանագրային տարվա համար,

առդիր 12-ով սահմանված ֆունդերի օգտագործման մանրամասն և համապարփակ պլան և բյուջե:

(2) Կառավարիչը մշակում է «ներդրումների տարեկան պլանը» (ա) այն ծրագրերի համար, որոնք նախատեսված են առդիր 12-ով:

(3) Կառավարիչը պետք է նաև ներկայացնի կողմնորոշիչ ծախսային պլան, որպես «ներդրումների տարեկան պլանի» մաս:

(4) Կառավարման խորհուրդը Կառավարչի կողմից տրված ու ՊՎԳ-ի կողմից ներկայացված «ներդրումների տարեկան պլան» ստանալուց հետո 30 օրվա ընթացքում պետք է կամ հաստատի այն, կամ դրանում փոփոխություններ ու լրացումներ առաջարկի:

(5) Եթե Կառավարման խորհուրդը ներդրումների տարեկան պլանն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում գրավոր չի տեղեկացնում Կառավարչին դրա հաստատման կամ դրանում փոփոխություններ կատարելու առաջարկության մասին, ներդրումների տարեկան պլանը համարվում է հաստատված:

(6) Եթե Կառավարման խորհուրդը ներդրումների տարեկան պլանն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում գրավոր առաջարկում է դրանում փոփոխություններ կատարել, իսկ Կառավարիչը հիշյալ գրությունն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում իր համաձայնության մասին գրավոր չի հայտնում Կառավարման խորհրդին, ՊՎԳ-ն տեղեկացնում է ՄՋԸ-ին Կառավարման խորհրդի և Կառավարչի միջև ի հայտ եկած տարաձայնությունների մասին, և երեք կողմերը հանդիպում են, որպեսզի համաձայնության զան հիշյալ փաստաթղթի շուրջ նախքան պետական բյուջեի նախագծի մեջ ներդրումների տարեկան պլանին վերաբերող համապատասխան տվյալների ընդգրկման վերջնաժամկետը:

(7) Կառավարիչը կարող է ներդրումների տարեկան պլանի բյուջեի շրջանակներում և առդիր 5-ով նախատեսված կարգի համաձայն միջոցների վերաբաշխում կատարել առանձին ծախսային հոդվածների միջև: Ներդրումների

տարեկան պլանով նախատեսված և տարվա ընթացքում չօգտագործված միջոցներն ավտոմատաբար փոխանցվում է հաջորդ տարվա բյուջե:

3.13.6 Կապիտալ Ֆոնդերի կառավարումը

ՀՀ-ում գործող քանկերից որևէ մեկում ՊՎԳ-ն բացում է երկու դեպրզիտային հաշիվ՝ նրանցից մեկի վրա հաշվարկվում են ՄՁԸ-ից, իսկ մյուսի վրա՝ ՀՀ կառավարությունից ստացված գումարները: Հաշիվները բացվում են ՊՎԳ-ի անունով, ՊՎԳ-ի կողմից ընտրված քանկում, և ՊՎԳ-ն հանդիսանում է այդ հաշիվների կառավարիչը:

3.14 Եկամուտների հավաքումը և տնօրինումը

- (1) Կառավարիչը «Ճառայությունների մասին» առդրիի (առդիր 2) համաձայն պետք է Ընկերության անունից հավաքի եկամուտները, ինչպես նաև վերահսկի եկամուտները հավաքելու գործընթացը:
- (2) Կառավարչի կողմից Ընկերության անունից հավաքված եկամուտները մուտքագրելու նպատակով Ընկերությունը պետք է քաջի դեպրզիտային հաշիվներ ՊՎԳ-ի կողմից ընդունելի քանկերում: Հաշիվները պետք է բացվեն Ընկերության անունով («եկամտային հաշիվներ»), իսկ քանկերի ընտրությունը պետք է կատարվի Ընկերության կողմից, իր սեփական հայեցողությամբ: Եկամտային հաշիվների վրա մուտքագրված բոլոր միջոցները հանդիսանում են Ընկերության սեփականությունը:
- (3) Բաժանորդներից հավաքված բոլոր եկամուտները կառավարիչը պետք է ամսփյապես մուտք անի «եկամտային հաշիվներ» վրա:
- (4) Կառավարիչը չպետք է մուտքագրի կամ քուլյատրի, որ հավաքված գումարները մուտքագրվեն «եկամտային հաշիվներից» քաջի ուրիշ հաշիվների վրա:
- (5) Կառավարիչը մինչև հերթական եկամտալի ստացումը պետք է ձեռնարկի անվտանգության բոլոր անհրաժեշտ միջոցները ստացվող գումարները կորելուց, գորտբյուրնից կամ ֆիզիկական ոչնչացումից պաշտպանելու համար:
- (6) Վերը նշված պահանջների չկատարումը կարող է հիմք հանդիսանալ Ընկերության համար, որպեսզի վերջինս պայմանագրի 2.7 և 2.8 հոդվածների և համապատասխան առդիրների համաձայն ստեղծի վճարումները և խզի պայմանագիրը:

3.15 Կատարողական երաշխիք

- (1) Կառավարիչը պետք է ՊՎԳ-ի կողմից ընդունելի որևէ քանկից իր հաշիվն ձեռք բերի կատարողական երաշխիք, որով կերաշխավորվի պայմանագրով սահմանված ժամկետների և պայմանների կատարումը: Կատարողական երաշխիքի ձևն ու քովանդակությունը պետք է համապատասխանեն «Կատարողական երաշխիքի մասին» առդիրի (առդիր 11) պահանջներին: Մրցույթի հրավերով սահմանված կարգով «պայմանագրի շնորհման մասին ծանուցումն» ստանալուց հետո, 60 օրվա ընթացքում կառավարիչը պետք է սրահմարդի կատարողական երաշխիքը:
- (2) Կատարողական երաշխիքը պետք է ուժի մեջ լինի պայմանագրի «ուժի մեջ մտնելու օրվանից» մինչև «ավարտի օրը» և դեռ 6 ամիս «ավարտի օրվանից» հետո:
- (3) Կատարողական երաշխիքը սահմանվում է պայմանագրի առաջին չորս տարվա համար արված ֆինանսական առաջարկության 10 տոկոսի չափով:

Հողված 4 - Կառավարչի ղեկավար անձնակազմը, տեխնիկական անձնակազմը և շահագործման ծախսերը

4.1 Ընդհանուր դրույթներ - Ղեկավար անձնակազմ

- (1) Կառավարիչը պետք է ապահովի, որ ղեկավար անձնակազմի բոլոր անդամներն ունենան «ժառայությունների» մատուցման համար անհրաժեշտ որակավորում և մասնագիտական բանիմացություն:
- (2) Կառավարիչը պետք է ներկայացնի առաջարկվող ղեկավար անձնակազմի փորձագիտական պատենցիայը «Ղեկավար անձնակազմի մասին» առդիրում (առդիր 7) համաձայն նույն առդիրի պահանջների:

4.2 Ղեկավար անձնակազմի անդամների փոխարինումը

- (1) Կառավարիչը չպետք է փոխի «Ղեկավար անձնակազմի մասին» առդիրում (առդիր 7) թվարկված ղեկավար անձնակազմի անդամներին առանց Կառավարման խորհրդի գրավոր համաձայնության:
- (2) Կառավարիչը առանց Կառավարման խորհրդի գրավոր համաձայնության չպետք է կատարի ղեկավար անձնակազմի անդամների պայմանագրով սահմանված սխառտակնությունների կամ աշխատանքի ժամկետների վերաբաշխում կամ փոփոխություն:
- (3) Եթե Կառավարչից անկախ պատճառներով պահանջ է առաջանում փոխարինելու ղեկավար անձնակազմի անդամներից որևէ մեկին, Կառավարիչը պետք է անհապաղ Կառավարման խորհրդին առաջարկի համարժեք կամ ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետի թեկնածություն:
- (4) Եթե.
 - (ա) Կառավարման խորհուրդն իր սեփական հայեցողությամբ որոշում է, որ ղեկավար անձնակազմի անդամներից որևէ մեկը կատարել է վարչական լուրջ խախտում կամ չրեապես պատժելի գործողություն,
 - (բ) Կառավարման խորհուրդը լուրջ հիմքեր ունի ղեկավար անձնակազմի անդամներից որևէ մեկի աշխատանքից դժգոհ լինելու,

ապա Կառավարիչը պարտավոր է, Կառավարման խորհրդի գրավոր դիմումի հիման վրա, զարժող օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքից ազատել տվյալ անձնակազմի անդամներին և փոխարինել նրան համարժեք կամ ավելի բարձր որակավորում ունեցող այլ մասնագետով, որի թեկնածությունը կարժանանա ՊՎԳ-ի հավանությանը:

- (5) Կառավարչի կողմից ԸՊ 4.2(3) կամ 4.2(4) կետի համաձայն ղեկավար անձնակազմի անդամներից որևէ մեկին փոխարինման հետ կապված լրացուցիչ ծախսերը չեն կարող ֆինանսավորվել Կապիտալ ֆոնդից:

4.3 Ծրագրի ռեզիդենտ ղեկավարը

Կառավարիչը պետք է ապահովի, որ պայմանագրի ամբողջ տևողության ընթացքում ծրագրի ղեկավարը կամ ծրագրի ղեկավարին փոխարինողը բնակվի Երևանում և անձամբ հետևի ծառայությունների կատարման ընթացքին:

4.4 Տեխնիկական անձնակազմը

Կառավարիչը պետք է ղեկավարի Ընկերության աշխատակիցների կողմից սպասարկման գոտում իրականացվող աշխատանքները ծառայությունների մատուցման գործում համաձայն առդրի 8-ի («տեխնիկական անձնակազմը և կադրային քաղաքականությունը»):

4.5 Ընթացիկ բյուջեները

- (2) Կառավարիչը մշակում է Ընկերության սեփական միջոցներից ֆինանսավորվող տարեկան ընթացիկ ու կապիտալ բյուջեները: ՊՎԳ-ի կողմից սահմանված ժամկետներում Կառավարիչը ներկայացնում է այդ բյուջեների նախագծերը Կառավարման խորհրդի հաստատմանը:

Հողված 5 - Կառավարման խորհրդի և ՊՎԳ-ի պարտականությունները

5.1 Օժանդակություն և արտոնություններ

ՊՎԳ-ն պարտավոր է.

- (1) Կառավարչին, ենթակապալառուներին և ղեկավար անձնակազմին ապահովել ժամանակավոր բնակության և աշխատանքներն իրականացնելու բույլտվություններով, ինչպես նաև «ժառայություններն» իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերով:
- (2) ղեկավար անձնակազմի անդամներին և նրանց օրինական խնամարկյալներին օպերատիվ կերպով ապահովել բոլոր անհրաժեշտ մուտքի և ելքի վիզաներով, տարադրամ փոխանակելու բույլտվությամբ և Հայաստանում բնակվելու համար պահանջվող այլ փաստաթղթերով:
- (3) հեշտացնել և արագացնել «ժառայությունների» իրականացման համար պահանջվող պարագաների և ղեկավար անձնակազմի անդամների ու նրանց օրինական խնամարկյալների անձնական իրերի մաքսային մաքրումը:
- (4) այնպիսի հրահանգներ և ցուցումներ տալ Ընկերության ներկայացուցիչներին, գործակալներին և պաշտոնյաներին, որոնք անհրաժեշտ կլինեն ժառայությունների իրականացման արագ և արդյունավետ դարձնելու համար:
- (5) սահմանված կարգով համապատասխան գերատեսչություններից ստանալ և Կառավարչին տրամադրել բոլոր այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են գործող օրենսդրությամբ և ՀՀ կառավարության ու ՄՋԸ-ի միջև ստորագրված վարկային համահայեացքով սահմանված հարկային, մաքսային և այլ ֆինսկալ արտոնություններից օգտվելու համար:

5.2 Հողային տարածքներ ազատ մուտք գործելու և փաստաթղթերից ու տեղեկատվական նյութերից օգտվելու իրավունքը

ՊՎԳ-ն պետք է Կառավարչին ապահովի սպասարկման գոտում գտնվող ցանկացած հողային տարածք և ջրատնտեսական կառուցվածք անվճար մուտք գործելու, Ընկերության տեխնիկական ու տնտեսական տեղեկատվությունից, տեխնիկական հատակագծերից ու սխեմաներից օգտվելու անսահմանափակ իրավունքով, եթե դա անհրաժեշտ է ժառայությունների իրականացման համար:

5.3 Տեխնիկական անձնակազմը, սարքավորումները, նյութերը, տեխնիկական միջոցները և ենթակառուցվածքները

(1) Կառավարման խորհուրդը պետք է ժառայությունների իրականացման նպատակով, անվճար.

- ա) բույլ տա Կառավարչին օգտագործել տեխնիկական անձնակազմի մարդկային ռեսուրսները՝ համաձայն առդրի 8-ի («տեխնիկական անձնակազմը և կադրային քաղաքականությունը»):
- բ) Կառավարչին տրամադրի Ընկերության կողմից ժառայությունների իրականացման համար բազային տարվա ընթացքում օգտագործվող բոլոր սարքավորումներն ու նյութերը:
- գ) պայմանագրի համաձայն Կառավարչի համար ազատ մուտք ապահովի բոլոր ջրատնտեսական օբյեկտները և Կառավարչին

տրամադրի ծառայությունների իրականացման համար պահանջվող բյուր անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվական նյութերը:

- դ) ապահովի իր ֆունկցիաների իրականացումը պայմանագրի ամբողջ տևողության ընթացքում:
- (2) Եթե Կառավարման խորհուրդը կամ ՊՎԳ-ն չկատարեն ԸՊ 5.3.1 կետով սահմանված պարտականությունները, այդ ժամանակ կողմերը պետք է քննարկեն թե որքան լրացուցիչ ժամանակ է պետք տրամադրել Կառավարչին ծառայություններն իրականացնելու համար:
- (3) Կառավարման խորհրդի նախագահը պետք է հանդես գա որպես Ընկերության լիազոր ներկայացուցիչը այն հարցերում, որոնք սահմանված են ԸՊ 5.5.2 կետով:

5.4 Վճարումների կատարումը

Կառավարչի կողմից սույն պայմանագրի շրջանակներում իրականացված ծառայությունների դիմաց ՊՎԳ-ն պետք է կատարի այնպիսի վճարումներ և այնպիսի կարգով, որոնք սահմանված են սույն պայմանագրի ԸՊ 6-րդ հոդվածում:

5.5 Կառավարման խորհուրդը

- (1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է ՀՀ կառավարության 1999թ-ի թիվ 765 որոշման համաձայն ՀՀԶ ծրագրի կառավարման համար կազմավորված Կառավարման խորհրդի անդամների նույն կազմից ձևավորի Ընկերության խորհուրդը, որը պետք է իրականացնի սույն պայմանագրի հետ առնչություն ունեցող բոլոր կարգի կոորդինացման և վերահսկման ֆունկցիաները և ունենա Ընկերության անունից սույն պայմանագիրը կառավարելու բոլոր լիազորությունները:
- (2) Կառավարման խորհուրդը, իրականացնելով ՀՀ կառավարության 1999թ-ի թիվ 765 որոշմամբ «ծրագրի կառավարման խորհրդի» համար սահմանված լիազորությունները և հանդես գալով Ընկերության անունից՝ դրպես «Ընկերության խորհուրդ», վերահսկում է Ընկերության և Կառավարչի միջև հարաբերությունները, ինչպես նաև ՀՀԶ ծրագրի իրականացման ընթացքը: Կառավարման խորհրդի պարտականություններն են.
 - i) ՊՎԳ-ի և Կառավարչի խնդրանքով պայմանագրի դրույթների հետ կապված հարցերի քննարկման ու համապատասխան միջոցների ձեռնարկման համար ՊՎԳ-ի հետ ամենամսյա հանդիպումների անցկացումը:
 - ii) Կառավարչին Ընկերության աշխատակիցների և ջրամատակարարման ու ջրահեռացման կամակարգերի հիմնական միջոցների փոխանցմանը հավանություն տալը:
 - iii) «Մեկնարկային օրվանից» առնվազն 15 օր առաջ Ընկերության կանոնդարության համաձայն Կառավարչի կողմից նշանակված «ծրագրի ռեզիլիենտ ղեկավարին» Ընկերության գործադիր տնօրեն նշանակելու առաջարկության ներկայացումը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը:
 - iv) «Ծրագրի ռեզիլիենտ ղեկավարին» Ընկերության կնիքն օգտագործելու և Ընկերության բանկային հաշիվների կարգադրիչ լինելու բացառիկ լիազորության շնորհումը:
 - v) «Մեկնարկային օրվա» դրությամբ Ընկերության մախկին ղեկավարության և Կառավարչի կողմից նշանակված ղեկավարության միջև ընկե-

րության ֆինանսական վիճակի, մասնավորապես դեփտորական և կրեդիտորական պարտքերի, ինչպես նաև «Վեկնարկային օրվանը» մայիսի 12 ամիսների ֆինանսական հաշվետվությունների (սկզբնական ֆինանսական վիճակը, որի հիման վրա պետք է գնահատվի Ընկերության ֆինանսական վիճակի շարեվարվածը) հաստատումը, այն վիճակով, որն արձանագրվել է ՊՎԳ-ի կողմից հաստով այդ նպատակով հրավիրված ասոցիատորի կողմից:

- vi) Տեխնիկական անձնակազմի թվի մեջ առաջարկվող փոփոխություններին, այդ թվում՝ կապիտալ ֆոնդերից ֆինանսավորվող հաստիքների կրճատման ծրագրի շրջանակներում, հավանություն տալը:
- vii) Մասնաճյուղերի տնօրենների հետ Ընկերության կողմից ստորագրված համձնարարության ու հավատարմագրային կառավարման պայմանագրերում առաջարկվող փոփոխություններին հավանություն տալը:
- viii) Կառավարչի կողմից առաջարկվող սակագնային փոփոխությունների քննարկումը և դրանց ներկայացումը համապատասխան պետական մարմնի հաստատմանը:
- ix) Ներդրումների տարեկան պլանի հաստատումը:
- x) Կառավարչի տարեկան հաշվետվությունների հաստատումը:
- xi) Մույն պայմանագրի համաձայն Կառավարչի վարձատրության չափի հաստատումը:
- xii) Կառավարչի և մասնաճյուղերի տնօրենների միջև ծագած վեճերի լուծումը և պայմանագրի դադարեցումը:
- xiii) Պայմանագրի դրայթմենթս փազոխությունների կատարումը և պայմանագրով սահմանված ժամկետների հետաձման թուլությունները:
- xiv) ԸՊ 1.10 հոդվածի համաձայն ցանկացած համձնարարության վերաբերյալ հավանություն տալը:
- xv) ԸՊ 2.5 հոդվածի համաձայն պայմանագրի ցանկացած ժամկետով երկարաժամանակ համաձայնելը:
- xvi) Մույն պայմանագրով նախատեսված այլ լիազորություններ ու պարտականություններ կամ պայմանագրի կատարումը վերահսկելու համար անհրաժեշտ այնպիսի լիազորություններ ու պարտականություններ, որոնք Կառավարչի հետ գրավոր համաձայնեցվել են ընկերության կողմից:

(3) Կառավարման խորհուրդը նշանակում է Կառավարման խորհրդի նախագահ: Նախագահը պետք է լինի Կառավարչի և Կառավարման խորհրդի միջև հարդրակցման միակ օղակը և հանդես գա որպես Ընկերության լիազոր ներկայացուցիչը՝ այն հարցերում, որոնք սահմանված են պայմանագրով: Կառավարիչը պետք է ընդունի սույն պայմանագրի համաձայն Նախագահի ընդունած որոշումները, տրված ցուցումները կամ կիրառված մեխանիզմները որպես պարտադիր Ընկերության համար՝ սույն պայմանագրի շրջանակներում:

5.6 Պայմանագրի վերահսկման գրասենյակը (ՊՎԳ)

5.6.1 Կարգավիճակը

Կառավարման խորհուրդը ձևավորում է համապատասխան մասնագետներից կազմված մարմին (Պայմանագրի վերահսկման գրասենյակ) և լիազորում է նրան օժանդակել Կառավարման խորհրդին սույն պայմանագրի շրջանակներում ծրագրի կտրոյինացման և վերահսկման լիազորությունների իրականացման հարցում:

5.6.2 Դերը

- (1) Պայմանագրի վերահսկման գրասենյակը (ՊՎԳ), Կառավարման խորհրդի անունից վերահսկում է պայմանագրի իրականացումը պայմանագրով սահմանված կարգի համաձայն:
- (2) Պայմանագրի վերահսկման գրասենյակի լիազորությունների ու պարտականությունների թվին են պատկանում.
 - (ա) պայմանագրի շրջանակներում Կառավարչի գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանումը:
 - (բ) Կառավարչի կողմից Կառավարման խորհրդին տրվող բոլոր հաշվետվությունների, մամակների և այլ գրությունների պատճենների ստացումը:
 - (գ) Կառավարչի ղեկավար անձնակազմի համապատասխան անդամների կողմից տրվող ամսական ու եռամսյակային կատարողական հաշվետվությունների լսումը:
 - (դ) նօրմալ աշխատանքային ժամերին Կառավարչի աշխատանքին հետևելու նպատակով ՊՎԳ-ի սեփական հայեցողությամբ Ընկերության գրասենյակներ և շահագործվող օբյեկտներ ընտրանքային այցելություններ կատարելը:
 - (ե) Կառավարման խորհրդի կողմից պայմանագրի առնչությամբ ընդունվելիք բոլոր, այդ թվում՝ խրախուսավճարի տրամադրումը հաստատող, որոշումների վերաբերյալ հաշվետվությունների և առաջարկությունների պատրաստումը:
 - (զ) Պայմանագրի իրականացման ժամանակ Կառավարման խորհրդի միտքերի արձանագրությունների պատրաստումը և դրանց տրամադրումը Նախագահին:
- (3) ՊՎԳ-ն պետք է առկա 5-ի («գնումների իրականացման կարգը») համաձայն մասնակցություն և համագործակցություն ցուցաբերի գնումների գործընթացում:
- (4) ՊՎԳ-ն սույն պայմանագրի 3.13.6 կետի համաձայն հանդիսանում է «Կապիտալ ֆոնդերի» կառավարիչը և «Կապիտալ հաշվի» կարգադրիչը:
- (5) Կառավարման խորհուրդը, ԸՊ 1.8(գ)(1) կետի համաձայն, ՊՎԳ-ի աշխատակիցներից մեկին նշանակում է որպես Կառավարման խորհրդի լիազոր ներկայացուցիչ, որը պետք է հանդես գա որպես Կառավարչի և Կառավարման խորհրդի միջև հաղորդակցման միակ օղակը այն հարցերում, որոնց հետ կապված լիազորությունները սույն պայմանագրով տրված են ՊՎԳ-ին:

5.7 Ներկայացված նյութերի քննարկումը և հաստատումը

- (1) Բացառությամբ պայմանագրով սահմանված առանձին դեպքերի, բոլոր մնացած դեպքերում, երբ Կառավարիչը որևէ պլան, տեղեկանք կամ ուրիշ

նման փաստաթուղթ է ներկայացնում ՊՎԳ-ի քննարկմանը և հաստատմանը, ՊՎԳ-ն պետք է փաստաթուղթն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում քննարկի և կան հաստատի ներկայացված փաստաթուղթը, կան դրա վերաբերյալ գրավոր կարծիք ներկայացնի Կառավարչին:

- (2) Այն գեպքերում, երբ ՊՎԳ-ն չի հաստատում կամ հրաժարվում է հաստատել Կառավարչի կողմից ներկայացված փաստաթուղթը՝ համաձայն ԸՊ 5.7(1) կետի, Կառավարիչը պետք է գրավոր տեղյակ պահի ՊՎԳ-ին առ այն, որ վերջինիցս պատասխան չի տրացվել իր կողմից ներկայացված փաստաթղթի վերաբերյալ:
- (3) Եթե ՊՎԳ-ն-ն Կառավարչից ԸՊ 5.7(2) կետի համաձայն գրավոր ծանուցում ստանալուց հետո 14 օրվա ընթացքում չի պատասխանում Կառավարչին, ապա Կառավարչի կողմից ներկայացված փաստաթուղթը համարվում է ընդունված:

Հողված 6 - Կառավարչի վարձատրությունը

6.1 Ղեկավար անձնակազմի պահպանման ծախսերը

Կառավարիչը պետք է իր հաշվին ֆինանսավորի ղեկավար անձնակազմի պահպանման հետ կապված բոլոր ծախսերը, այդ թվում.

- (ա) աշխատավարձերը, նպատները, հաղելավորանքները և արձակատները,
- (բ) Կառավարչի մայր գրասենյակի պահպանման ծախսերը,
- (գ) բոլոր տրանսպորտային ծախսերը՝ կապված ներհանրապետական և միջազգային փոխադրումների հետ,
- (դ) ղեկավար անձնակազմի անդամների և նրանց ընտանիքների տեղափոխման հետ կապված ծախսերը,
- (ե) կապի և հեռահաղորդակցության ծախսերը, ինչպես նաև պատճենահանման, գրասենյակային սարքավորման, կապի միջոցների, համակարգչային ծրագրերի և գրեմական պիտույքների ձեռքբերման հետ կապված ծախսերը,
- (զ) ղեկավար անձնակազմի վերապատրաստման և մասնագիտական զարգացման հետ կապված ծախսերը,
- (է) ղեկավար անձնակազմի անդամների բնակության հետ կապված բոլոր ծախսերը, քացառությամբ գրասենյակային տարածքի ապահովման ծախսերի, քանի որ գրասենյակային տարածքները պետք է տրամադրվեն Ընկերության կողմից Ընկերության կենտրոնական վարչության շինքում:

6.2 Կառավարչի վարձատրությունը

6.2.1 Կառավարչի վարձատրությունը

- (1) ՊՎԳ-ն պետք է վճարի Կառավարչին.
 - (ա) հաստատագրված վճար ղեկավար անձնակազմի մատուցած կառավարման ծառայությունների դիմաց («կառավարման հաստատագրված վճարը») համաձայն «հայտ ներկայացնողի զննցուցակի», և
 - (բ) աշխատանքային մախաձեռնության փոխհատուցման գծով տարեկան վճար («խրախուսավճար») համաձայն «խրախուսավճարի մասին» առդրի (առդիր 9):
- (2) Կառավարման հաստատագրված վճարը ենթակա է ճշտման՝ համաձայն ԸՊ 6.5 կետի:

6.2.2 Կառավարման հաստատագրված վճար

- (1) Կառավարման խորհուրդը պետք է Կառավարչին հաստատագրված վճար հատկացնի Կառավարչի ղեկավար անձնակազմի մատուցած կառավարման ծառայությունների դիմաց: Կառավարիչն ընդունում է, որ կառավարման հաստատագրված վճարը մախատեսված է Կառավարչի ղեկավար անձնակազմի մատուցած կառավարման ծառայությունների հետ կապված

այն ծախսերի համար, որոնք նա չի նախատեսում ֆինանսավորել խրախուսավճարից:

- (2) Կառավարիչը չպետք է որևէ պահանջ ներկայացնի ղեկավար անձնակազմի աշխատանքի հետ կապված լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման կամ փոխհատուցման վերաբերյալ: Կառավարիչն ընդունում է, որ կառավարման հաստատագրված վճարը հանդիսանում է կանոնավոր եիմբերով տրամադրվող միակ վճարը, որը ՊՎԳ-ն պետք է վճարի Կառավարչի ղեկավար անձնակազմի մատուցած ծառայությունների դիմաց:

6.2.3 Խրախուսավճար

- (1) Խրախուսավճարի նպատակն է վարձատրել Կառավարչին՝ կախված այն քանից, թե որքանով է համակարգի աշխատանքը կատարելագործվում Կառավարչի գործունեության արդյունքում, ինչը որոշվում է «խրախուսավճարի մասին» առդիրով (առդիր 9):
- (2) Խրախուսավճարի չափը յուրաքանչյուր տարի հաշվարկվելու է «խրախուսավճարի մասին» առդիրի (առդիր 9) հիման վրա:

6.3 Վճարումների կատարումը

6.3.1 Կառավարման հաստատագրված վճարի գծով

- (1) Մեկնարկային օրը ՊՎԳ-ն պետք է ՄՋԸ վարկի միջոցներից Կառավարչին կանխավճար հատկացնի կառավարման հաստատագրված վճարի 15 տոկոսի չափով: Կանխավճարը պետք է հատկացվի «ժայռ ներկայացնողի գնացուցակում» նշված արժույթով կամ արժույթներով: Կառավարման հաստատագրված վճարի գծով հատկացված կանխավճարի գումարը պայմանագրի գործողության ընթացքում հավասար մասնաբաժիններով աստիճանաբար (24 ամսվա ընթացքում) կհամլի կառավարման հաստատագրված վճարի գծով Կառավարչին տրվող ամսական հատկացումներից («Կանխավճարի մարում»):
- (2) Կառավարման հաստատագրված վճարի գծով կանխավճարը տրվում է ՊՎԳ-ի կողմից այն քանից հետո, երբ Կառավարիչը ՊՎԳ-ին ներկայացնի քանկային երաշխիք՝ «Քանկային երաշխիքի մասին» առդիրով (առդիր 13) սահմանված ձևով և Ընկերության կողմից կառավարման հաստատագրված վճարի գծով վճարվելից կանխավճարի չափով և արժույթով: Նշված քանկային երաշխիքը կարող է ամեն տարի նվազեցվել՝ նախորդ տարվա ընթացքում ԸՊ 6.3.1 կետի համաձայն կանխավճարից պահված գումարի չափով:
- (3) Մեկնարկային օրվանից հետո 45 օրվա ընթացքում և, այնուհետև, մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 15-րդ օրը Կառավարիչը պետք է ՊՎԳ-ին ներկայացնի հաշիվ-ֆակտուրա ղեկավար անձնակազմի կողմից նախորդ ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար: Հաշվի մեջ պետք է նշվի կառավարման հաստատագրված վճարի ամսական գումարը՝ կանխավճարի մարման համար կատարվող պահումները հանելուց հետո:
- (4) Կառավարման հաստատագրված վճարի ամսական չափը պետք է հավասար լինի «ժայռ ներկայացնողի գնացուցակով» տվյալ տարվա համար առաջարկվող կառավարման հաստատագրված վճարի հարաբերությանը 12-ի:
- (5) ՊՎԳ-ն հաշիվն ստանալուց հետո պետք է 30 օրվա ընթացքում ՄՋԸ վարկի միջոցներից կատարի համապատասխան վճարումը՝ «ժայռ ներկայացնողի գնացուցակով» սահմանված արժույթով կամ արժույթներով, բացառությամբ

այն դեպքի, երբ ՊՎԳ-ն պայմանագրով լիազորված է պահումներ կատարելու կառավարման հաստատագրված վճարից:

- (6) Կառավարիչը պետք է վստահ լինի, որ իր տրամադրության տակ ունի բոլոր անհրաժեշտ տվյալները, որոնք հնարավորություն են տալիս հստակորեն որոշելու դեկլարար անձնակազմի պահպանման ծախսերը Կառավարչի համար: Բոլոր այդ տվյալները Կառավարիչը պետք է տրամադրի ՊՎԳ-ին վերջինիս խնդրանքով:

6.3.2 Խրախուսավճարի գծով

- (1) ՊՎԳ-ն վարձում է միջազգային հեղինակություն ունեցող անկախ աուդիտոր՝ անհատ կամ ընկերություն, Կառավարչի կատարած աշխատանքներն ստուգելու, տվյալ պայմանագրային տարվա համար խրախուսավճարի չափը հաշվարկելու և այդ հաշվարկների հետ կապված բոլոր վեճերը լուծելու համար: ԸՊ 8-րդ հոդվածի դրույթները չեն տարածվում խրախուսավճարի վերաբերյալ անկախ աուդիտորի որոշումների վրա, որոնք վերջնական են և ենթակա չեն վիճարկման:
- (2) Յուրաքանչյուր պայմանագրային տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում Կառավարիչը ներկայացնում է Ընկերությանը նախորդ պայմանագրային տարվա համար խրախուսավճարի չափի իր հաշվարկները:
- (3) Կառավարիչը կատարում է այդ հաշվարկները «Խրախուսավճարի մասին» առդրի (առդիր 9) համաձայն:
- (4) ԸՊ 6.3.2(2) կետի համաձայն Կառավարչի կողմից հաշվարկները ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում ՊՎԳ-ն դիմում է Կառավարման խորհրդին Կառավարչի կողմից ներկայացված հաշվարկների վերաբերյալ խորհրդի կարծիքն ստանալու համար: Կառավարման խորհուրդը, հիմնվելով անկախ աուդիտորի առաջարկությունների և դրանք հաստատող նամակի վրա, եայտնում է Կառավարչի կողմից հաշվարկված խրախուսավճարի տրամադրման մասին իր համաձայնության կամ առարկության մասին:
- (5) Եթե Կառավարման խորհուրդը չի համաձայնում Կառավարչի հաշվարկների հետ կամ ԸՊ 6.3.2(2) կետի համաձայն Կառավարչի կողմից հաշվարկները ՊՎԳ-ին ներկայացնելուց հետո 60 օրվա ընթացքում չի պատասխանում Կառավարչի ներկայացրած գրությանը, կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել անկախ աուդիտորին հարցի լուծման համար:
- (6) Անկախ աուդիտորը, նախքան վերջնական եզրակացություն տալը, գործն ստանալուց հետո 45 օրվա ընթացքում.
- (ա) մանրամասնորեն ուսումնասիրում է հաշվարկները և
 - (բ) հանդիպում է կողմերի հետ՝ միասին կամ առանձին-առանձին:
- (7) ՊՎԳ-ն պետք է ՄՁԸ վարկի միջոցներից Կառավարչին տրամադրի խրախուսավճարը ԸՊ 6.3.2(4) կետի համաձայն Կառավարման խորհրդի հավանությունն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, իսկ խրախուսավճարի չափի վերաբերյալ Կառավարչի և Կառավարման խորհրդի միջև վեճի ծագման դեպքում՝ անկախ աուդիտորի եզրակացությունն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

6.4 Արժույթը և փոխարժեքը

- (1) ՊՎԳ-ն պետք է կառավարման հաստատագրված վճարի գումարը Կառավարչին հատկացնի «հայտ ներկայացնողի գնացուցակում» նշված արժույթով կամ արժույթներով և չափով:

6.5 Վճարման ենթակա գումարների ճշտումը

- (1) Կառավարման հաստատագրված վճարը և խրախուսավճարը տրվում են Կառավարչին համապատասխանաբար ԸՊ 6.2 և 6.3 հոդվածների համաձայն տեղական կամ արտասահմանյան արժույթով, և դրանց գումարները ենթակա են հետևյալ ճշտումների:

Հայտ ներկայացնողի գնացուցակով առաջարկվող կառավարման հաստատագրված վճարի, ինչպես նաև խրախուսավճարի նախնական գումարները «մեկնարկային օրվանը» հաջորդող 12 ամիսների ընթացքում պետք է ճշտվեն յուրաքանչյուր արժույթային քաղաքիչի համար առանձին-առանձին հետևյալ բաժանակի հիման վրա.

$$R = R_0 \times \left[\frac{1}{I_0} - 0.08 \right]$$

որտեղ,

R -ը տվյալ արժույթով վճարման ենթակա ճշտված գումարն է,

R_0 -ն հայտ ներկայացնողի գնացուցակում տվյալ արժույթով վճարման համար նախատեսված գումարն է,

I -ն տվյալ արժույթի համար աշխատանքի արժեքի պաշտոնական ինդեքսն է ճշտման հաշվարկը կատարելու ամսվա դրությամբ,

I_0 -ն «մեկնարկային օրվա» դրությամբ սահմանված աշխատանքի արժեքի պաշտոնական ամսական ինդեքսն է,

Մույն հոդվածի համատեքստում հետևյալ տերմինները կօգտագործվեն հետևյալ իմաստներով.

«Ճշտման օր» – այն օրը, երբ կատարվում է յուրաքանչյուր արժույթով վճարման ենթակա գումարի ճշտումը: Առաջին ճշտումից հետո, որն արվում է մեկնարկային օրվանը հաջորդող առաջին 18 ամիսների ընթացքում, հաջորդ ճշտումները պետք է արվեն յուրաքանչյուր 12 ամիսը մեկ:

«Աշխատանքի արժեքի պաշտոնական ինդեքս» – Կառավարչի գրանցման երկրում սրաշտոնապես հրատարակված աշխատանքի արժեքի ինդեքսը:

Արժույթ	Աշխատանքի արժեքի պաշտոնական ինդեքս
ՀՀ դրամ	ՀՀ վիճակագրության նախարարության տվյալներով
ԱՄՆ դոլար	Կառավարչի գրանցման երկրի պաշտոնական տվյալներով
Եվրո (Գերմանիա)	Գերմանիայի վիճակագրական ծառայության տվյալներով
Եվրո (Իտալիա)	Իտալիայի ազգային վիճակագրական ինստիտուտի տվյալներով
Եվրո (Ֆրանսիա)	Ֆրանսիայի ազգային վիճակագրական ինստիտուտի տվյալներով
Մեծ Բրիտանիայի ֆունտ	Միացյալ Թագավորության ազգային վիճակագրական գրասենյակի տվյալներով
Շվեյցարական ֆրանկ	Շվեյցարական ֆեդերալ վիճակագրական գրասենյակի տվյալներով

- (2) Վճարման ենթակա գումարների ճշտման կապակցությամբ Կառմերի միջև ծագած բոլոր վեջերը լուծվում են անկախ ատոփառքի եզրակացության հիման վրա:

6.6 Փոփոխությունները պայմանագրի տարրերում

- (1) Բացառությամբ ԸՊ 6.5 հոդվածով և «խրախուսավճարի մասին» առդիքով նախատեսված դեպքերի, Կառավարիչը պետք է գերծ մնա կառավարման հաստատագրված վճարի և խրախուսավճարի մեջ որևէ փոփոխություն անելու պահանջներ ներկայացնելուց: Բացի այդ, Կառավարիչը չպետք է որևէ փոփոխություն պահանջի՝ կապված.

- ա) սպասարկման գոտում ծառայություններից օգտվողների թվի փոփոխության հետ,
- բ) օբյեկտների կամ օբյեկտների թվի փոփոխության հետ;
- գ) համակարգ մտնող ջրի կամ կեղտաջրի քանակական կամ որակական փոփոխության հետ;
- դ) ՀՋՁ ծրագրի կամ այդ ծրագրում կատարված փոփոխության արդյունքում ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի աշխատանքի խախտման հետ:

- (2) Եթե «ուժի մեջ մտնելու օրվանից» հետո գործող օրենսդրության, ջրամատակարարման ու ջրահեռացման ազգային ստանդարտների կամ առդիք 9-ի 7-րդ հավելված սահմանված Ընկերության ֆինանսական գործունեության պայմանների և պարանետերի մեջ կատարվում է այնպիսի փոփոխություն, որը Կառավարչի կամ ՊԸԳ-ի մոտ եղած տվյալների համաձայն բերում է ծառայությունների իրականացման հետ կապված ծախսերի ավելացմանը կամ նվազեցմանը ավելի քան 10 տոկոսով, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք կունենա փոփոխություն առաջարկել ինչպես կառավարման հաստատագրված վճարի չափի մեջ, այնպես էլ խրախուսավճարի չափի մեջ՝ օրենսդրության փոփոխությամբ պայմանավորված ֆինանսական ազդեցությունը չեզոքացնելու համար:

Հողված 7 - Ազնվություն և բարեխղճություն

7.1 Բարեխղճություն

Կողմերը պարտավորվում են բարեխղճ մտտեցում ցուցաբերել միմյանց իրավունքների և պայմանագրով ձեռք բերված պայմանավորվածությունների նկատմամբ, ինչպես նաև ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները պայմանագրով սահմանված նպատակների իրականացումն ապահովելու համար:

7.2 Փոխըմբռնման սկզբունքը

Կողմերն ընդունում են, որ նպատակահարմար չէ սույն պայմանագրով նախատեսել բոլոր հնարավոր դեպքերը, որոնք կարող են պատահել պայմանագրի տևողության ընթացքում: Ելնելով այս սկզբունքից, կողմերը սույնով համաձայնում և իրենց մտադրությունն են հայտնում առ այն, որ սույն պայմանագիրը ազնվորեն իրականացվի իրենց կողմից, չվճարի կողմերից և ոչ մեկի շահերին, և որ պայմանագրի իրականացման ընթացքում անարդարության էլեմենտներ պարունակող երևույթներ նկատվելու դեպքում կողմերը կձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները միասնաբար անարդարության պատճառը կամ պատճառները վերացնելու համար, սակայն ԸՊ 7.2 գլխի համաձայն համատեղ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ համաձայնության գալու փորձերի անհաջողությունը չպետք է պատճառ հանդիսանա ԸՊ 8-րդ հոդվածի համաձայն արբիտրաժի գործընթաց սկսելու համար:

Հողված 8 - Վեճերի լուծումը

8.1 Վեճերի լուծումը բարեկամաբար

Կողմերը պետք է ամեն ջանք գործադրեն սույն պայմանագրի կամ դրա մեկնաբանության հետ կապված բոլոր վեճերը բարեկամաբար լուծելու համար:

Կողմերը համաձայնում են, որ վեճի դեպքում, նախքան արբիտրաժին դիմելը, կողմերը պետք է փորձ կատարեն ԸՊ 6.3.2 կետի կամայայն լուծել ծագած պտրոլեմները համապատասխան որակավորում ունեցող անկախ ատոլիտոր հրավիրելու միջոցով: Անկախ ատոլիտորի աշխատանքի վարձատրության ծախսերը պետք է հավասարապես կրվեն կողմերի միջև: Այս դեպքում ատոլիտորին տրվում է 60 օր ժամանակ վեճի առարկան ուսումնասիրելու և խնդրի լուծման վերաբերյալ գրավոր առաջարկություն ներկայացնելու համար: Հիշյալ առաջարկությունն ստանալուց հետո կողմերը պետք է 15 օրվա ընթացքում փորձեն դրա հիման վրա լուծել վիճահարույց հարցերը և միայն համատեղ լուծում գտնելու անհնարինության դեպքում այդ ժամկետի ավարտից հետո դիմել արբիտրաժին:

8.2 Արբիտրաժի հրավումը

Եթե կողմերի միջև սույն պայմանագրի հետ կապված որևէ հարցի շուրջ ծագած վեճի վերաբերյալ կողմերից որևէ մեկին մյուսի կողմից հարցը բարեկամաբար լուծվում առաջարկություն ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում վեճը չի լուծվում, ապա կողմերից յուրաքանչյուրը կարող է ԸՊ 8.3, 8.4, 8.5, 8.6 և 8.7 գլուխների համաձայն հարցի լուծումը համձնել արբիտրաժ:

8.3 Դատավորների ընտրությունը

Կողմերի որևէ մեկի համապատասխան դիմումի համաձայն վիճահարույց հարցի արբիտրաժային լուծող կարող է անցկացվել մեկ դատավորի կամ 3 դատավորներից կազմված դատական կոլեգիայի կողմից, հետևյալ պահանջների համաձայն.

- ա) այն դեպքում, երբ կողմերը համաձայնում են, որ վիճահարույց հարցն ունի տեխնիկական բնույթ, նրանք կարող են նշանակել մեկ դատավոր: Դատավորի թեկնածության մասին կողմերից որևէ մեկի առաջարկությունն ստանալուց հետո, 30 օրվա ընթացքում, դատավորի թեկնածության վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում, կողմերը կարող են դիմել Առևտրի միջազգային պալատ (ԱՄՊ) խնդրելով ներկայացնել առնվազն 5 թեկնածությունների ցանկ: Նշված ցանկն ստանալով՝ կողմերը պետք է հերթականությամբ կամայական անուններ ջնջեն նշված ցուցակից, մինչև որ մնա ընդամենը մեկ թեկնածություն, որը և կնշանակվի որպես հարցը լուծող միակ դատավոր: Եթե ցուցակն ստանալուց հետո 60 օրվա ընթացքում դատավորի թեկնածությունը չի սրբաշվում նաև այս եղանակով, ԱՄՊ-ը պետք է կողմերից որևէ մեկի խնդրանքով նշանակի դատավոր գործը լսելու համար;
- բ) այն դեպքում, երբ կողմերը չեն համաձայնում, որ վիճահարույց հարցն ունի տեխնիկական բնույթ, Կատավորման խորհուրդը և Կատավարիչը նշանակում են մեկական դատավոր, որոնք միասին որոշում են երրորդ դատավորի թեկնածությունը, որը և նախագահում է դատական կոլեգիան: Եթե Ընկերության և Կատավարիչի կողմից նշանակված դատավորները նշանակվելուց հետո 30 օրվա ընթացքում հաջողության չեն հասնում երրորդ դատավորի թեկնածության որոշման գործում, երրորդ դատավորը կողմերից որևէ մեկի խնդրանքով պետք է նշանակվի ԱՄՊ-ի կողմից:

գ) այն դեպքում, երբ կողմերից մեկը ԸՊ 8.3(բ) կետի համաձայն մյուս կողմից դատավորի նշանակումից հետո 30 օրվա ընթացքում չի նշանակում իր դատավորին, իր դատավորին նշանակած կողմը կարող է դիմել ԱՄՊ-ին՝ հարցի լուծման համար մեկ դատավոր նշանակելու խնդրանքով: Այդ դիմումի արդյունքում նշանակված քեկնտժուն կհանդիսանա հարցի լուծման համար նշանակված միակ դատավորը:

8.4 Գատավարության կարգը

Բացառությամբ սույն փաստաթղթով նախատեսված դեպքերի, արբիտրաժային դատավարությունը պետք է անցկացվի ՄԱԿ-ի միջազգային առևտրի մասին օրենքի հարցերով հանձնաժողովի (UNCITRAL) կողմից արբիտրաժային դատավարության համար սահմանված և սույն պայմանագրի «կիրարկման օրվա» դրությամբ գործող կարգի համաձայն:

8.5 Փոխարինող դատավորներ

Եթե այս կամ այն պատճառով դատավորն ի վիճակի չի լինում կատարելու իր ֆունկցիաները, սահմանված մույն կարգով պետք է նշանակվի նրան փոխարինող դատավոր:

8.6 Գատավորների քաղաքացիությունն ու որակավորումը

ԸՊ 8.3 (ա), (բ) և (գ) կետերի համաձայն նշանակված միակ դատավորը կամ երրորդ դատավորը պետք է լինի վիճահարույց հարցերի լուծման գործում հարուստ փորձի տեր և միջազգային ճանաչում ունեցող իրավաբան կամ տեխնիկական փորձագետ, որը չպետք է հանդիսանա Կառավարչի «ծագման երկիր» կամ Հայաստանի քաղաքացի: ԸՊ 8.6 գլխում «ծագման երկիր» տերմինի տակ պետք է հասկսմալ.

- ա) Կառավարչի հիմնական գրանցման երկիրը,
- բ) այն երկիրը, որտեղ Կառավարիչը ծավալում է իր գործունեության հիմնական մասը,
- գ) Կառավարչի բաժնետերերի մեծամասնության քաղաքացիության երկիրը,
- դ) եթե վիճահարույց հարցը վերաբերում է որևէ ենթակապակի պայմանագրի, համապատասխան ենթակապալառուի գրանցման երկիրը:

8.7 Այլ դրույթներ

Եթե սույն պայմանագրի հետ կապված առաջանա որևէ արբիտրաժային դատավարություն անցկացնելու անհրաժեշտություն.

- ա) այն պետք է անցկացվի Հայաստանում, ք. Երևանում, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը համաձայնում են այլ տարրերակի,
- բ) դատավարության պաշտոնական լեզուն պետք է լինի անգլերենը,
- գ) միակ դատավորի կամ դատավորների մեծամասնության կամ, ճայնե-րի մեծամասնության բացակայության դեպքում, երրորդ դատավորի կողմից ընդունված որոշումը վերջնական է և պարտավորեցնող ու պետք է ընդունվի որպես այդպիսին համապատասխան իրախա-թյուններով օժտված ցանկացած դատական մարմնի կողմից, իսկ կողմերը սույնով հրաժարվում են որոշումը բողոքարկելու և դրա կիրարկումից խուսափելու ամեն տեսակի փորձերից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՄԱՍԻՆ ԿՈՒՆԱԿԱՆՈՒՄԻ ԿՈՒՆԱԿԱՆՈՒՄԻ ԿՈՒՆԱԿԱՆՈՒՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

Աղբյուր 1

Լրացուցիչ մանրամասներ պայմանագրի մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ԼՐԱՅՈՒՅԻՉ ՄԱՆՐԱՄԱՆԵՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

[ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
այս ձևը ՊԵՏՔ ԶԷ լրացնել, այն կլրացվի պայմանագիրը կնքելուց առաջ]

1.1 Մահմանումներ

(1) ԸՊ 1.1 գլխի համապատասխան դրույթի առնչությամբ՝ ընդունելի գիտություն, որ.

ա) «մեկնարկային օրը» կլինի _____

1.2 Դիմումներ և ծանոթագրություններ

(1) ԸՊ 1.4 գլխի համապատասխան դրույթի առնչությամբ՝ ընդունելի գիտություն, որ.

ա) Ընկերության կառավարման խորհրդին պետք է դիմել հետևյալ հասցեով.

Անուն _____

Հասցե _____

բ) Կառավարչին պետք է դիմել հետևյալ հասցեով.

Անուն _____

Հասցե _____

1.3

Կառավարչի լիազոր անդամը

(1) ԸՊ 1.7 գլխի համապատասխան դրույթի առնչությամբ՝ ընդունելի գիտություն, որ.

ա) «լիազոր անդամ» է հանդիսանալու

Անուն _____

Հասցե _____

1.4

Լիազոր ներկայացուցիչները

(1) ԸՊ 1.8 գլխի համապատասխան դրույթի առնչությամբ՝ ընդունելի գիտություն, որ.

ա) ԸՊ 1.8.1(բ)(1) կետի համաձայն Ընկերության կառավարման խորհրդի նախագահն է լինելու.

Անուն _____

Հասցե _____

բ) ԸՊ 1.8.1(բ)(2) կետի համաձայն Ընկերության կառավարման խորհրդի լիազոր ներկայացուցչի պաշտոնական փոխարինողն է լինելու.

Անուն _____

Հասցե _____

- դ) Կառավարչի լիազոր ներկայացուցիչ է համդիսանայու.

Անուն _____

Հասցե _____

- դ) Կառավարչի լիազոր ներկայացուցչի պաշտոնական փոխարինողն է լինելու.

Անուն _____

Հասցե _____

- ե) ԸՊ 1.8.1(գ)(1) կետի համաձայն ՊՎԳ-ից նշանակված Ընկերության կառավարման խորհրդի լիազոր ներկայացուցիչ է լինելու.

Անուն _____

Հասցե _____

- զ) ԸՊ 1.8.1(գ)(2) կետի համաձայն ՊՎԳ-ից նշանակված Ընկերության կառավարման խորհրդի լիազոր ներկայացուցչի պաշտոնական փոխարինողն է լինելու.

Անուն _____

Հասցե _____

Աղիք 2

Ծառայությունների մասին

Հոդված 1. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1 Սահմանումներ

«Գործող օրենսդրություն» – բոլոր այն օրենքները և նորմատիվ իրավական ակտերը, որոնք տվյալ պահին ուժի մեջ են Հայաստանի Հանրապետությունում, ինչպես սահմանված է ԸՊ 1.1 հոդվածում:

«Բազային տարի» – «մեկնարկային օրվան» նախորդող մեկամյա ժամանակահատվածը:

«Բազային տարվա հաշվետվություն» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.1(1) կետով:

«Մասնաճյուղ» – Ընկերության հիմնական տարածքային միավորը, որը պատասխանատու է որոշակի աշխարհագրական սահմաններ ունեցող սպասարկման գոտում «ծառայություններն» իրականացնելու համար: Մասնաճյուղը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարածքային ենթամիավոր՝ տեղամաս:

«Ընկերության գնումների ընթացակարգեր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.2(9)(բ) կետով:

«Ընկերության ներդրումների ու գնումների հանձնաժողով» – սահմանվում է Առդիր 2-ի 4.3(2) և (3) կետերով:

«Ջրամատակարարման ժամերի ավելացման ծրագիր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.2(1)(բ) կետով:

«Բաժանորդների իրազեկման և լրատվության ծրագիր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.1(5)(բ) կետով:

«Ջրաչափման ծրագիր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.1(3)(բ) կետով:

«Բաժանորդների հարցման ծրագիր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.1(5)(գ) կետով:

«Ավարտի օր» – այն օրը, երբ պայմանագրի գործողության ժամկետը ԸՊ 2.2 հոդվածի համաձայն ավարտվում է:

«Տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների տվյալների բազա» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.2(6)(ա) կետով:

«Իրավիճակի վերջնական նկարագրություն» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.2(6)(բ) կետով:

«Կադրային քաղաքականություն» – սահմանվում է Առդիր 2-ի 5.2.1 կետով:

«Ապօրինի միացումներ» – ջրամատակարարման ցանցին ընկերության կողմից արգելված միացումները:

«Ացօրհինի միացումների դեմ պայքարի ծրագիր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.1(3)(ա) կետով:

«Հոսակորուստների և վատնումների նվազեցման ծրագիր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.2(3) կետով:

«Վերանորոգման ծրագիր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.2(7) կետով:

«Կառավարչի աշխատակազմ» – նշանակում է կառավարչի աշխատակազմը, ինչպես սահմանված է «Վեկավար անձնակազմի մասին» Առդիր 7-ով:

«Ցանցերի քարտեզագրման ծրագիր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.2(5) կետով:

«Ջրամատակարարման միջինալ գրաֆիկի սպահովման ծրագիր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.2(1)(ա) կետով:

«Աշխատանքի անվտանգության ծրագիր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.2(8) կետով:

«Տեխնիկական անձնակազմ» – ընկերության կողմից վարձատրվող անձինք, որոնք աշխատում են կառավարչի ղեկավարության ներքո, ինչպես սահմանված է «Տեխնիկական անձնակազմի մասին» Առդիր 8-ով:

«Սպասարկման գոտի» – Առդիր 4-ով («Սպասարկման գոտու նկարագրությունը») սահմանված այն տարածքը, որտեղ իրականացվում են ծառայությունները:

«Մեկնարկային օր» – այն օրը, երբ կառավարիչը ԸՊ 2.3 հոդվածի համաձայն սկսում է իրականացնել ծառայությունները:

«Մակագնային ռեժիմ» – սահմանվում է Առդիր 2-ի 5.2(2) կետով:

«Ուսուցման և վերապատրաստման ծրագիր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.3 կետով:

«Կեղտաջրեր» – Ընկերության կողմից շահագործվող ջրահեռացման ցանցերը թափվող կեղտաջրերը:

«Ջրի անվտանգության և որակի հսկողության ծրագիր» – սահմանվում է Առդիր 2-ի 5.3.2(2) կետով:

1.2 Ընդհանուր պայմանների լրացնելու պահանջը

«Ծառայությունների մասին» սույն առդիրի դրույթներով սահմանվում են կառավարչի պարտականությունները, համաձայն ԸՊ հոդված 3.1.1(ա)-ի:

Հոդված 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Ծառայությունների մատուցման նպատակները

- (1) Կառավարչի կողմից մատուցվելիք ծառայությունների հիմնական նպատակները հետևյալն են.
 - ա) բարելավել ընկերության կողմից ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման որակը և արդյունավետությունը, հատկապես ուշադրություն դարձնելով ջրամատակարարման ժամերի տևողության; հուսալիության ավելացմանը և ջրի անվտանգության մակարդակի բարձրացմանը,
 - բ) խթանել բաժանորդների ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց վճարելու պատրաստակամությունը ծառայությունների որակի բարձրացման և սպառողների սպասարկման մեխանիզմների բարելավման միջոցով,
 - գ) բարելավել ընկերության ֆինանսական վիճակը և ապահովել ֆինանսական գործունեության հետագա կայունությունը,
 - դ) կազմակերպել աշխատակազմի ուսուցման և վերապատրաստման կուրսեր կառավարման, շահագործման և ֆինանսական ոլորտներում աշխատանքային կարողությունների կատարելագործման նպատակով, ապահովելով նշված ոլորտներում կայուն գործունեությունը պայմանագրի ավարտից հետո,
 - ե) ձեռք բերել համակարգերի շահագործման և պահպանման համար անհրաժեշտ սարքավորումներ, ինչպես նաև վերանորոգել նորացնել և արդիականացնել ընկերության կողմից շահագործվող տեխնիկական միջոցները և ենթակառուցվածքները կապիտալ ֆոնդի շրջանակներում,
 - զ) մշակել և իրականացնել ներդրումային ծրագրեր կապիտալ ֆոնդի շրջանակներում, պայմանագրի տևողության ընթացքում, ինչպես նաև զնահատել երկարաժամկետ պլանով ներդրումներ կատարելու անհրաժեշտությունը:

2.2 Կառավարչի պարտականությունները

- (1) Կառավարիչը պետք է ապահովի ղեկավար անձնակազմ տեխնիկական համակարգերի և ենթակառուցվածքների կառավարման, շահագործման և պահպանման, ինչպես նաև ընկերության տեխնիկական անձնակազմի կառավարման և ղեկավարման համար:
- (2) Շահագործման սկզբից մինչև պայմանագրի ավարտը կառավարիչը ստանում է ընկերության կնիքն օգտագործելու և ընկերության բոլոր բանկային հաշիվների միակ կարգադրիչը լինելու բացառիկ լիազորությունը:
- (3) Իրավաբանորեն կառավարչի բոլոր գործողությունները պետք է կատարվեն ընկերության անունից, քանի որ ընկերությունը հանդիսանալու է այն իրավաբանական անձը, որը վերջնական պատասխանատվություն է կրելու բաժանորդների, մատակարարողների և երրորդ կողմ հանդիսացող այլ սուբյեկտների առջև:

Հողված 3. ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Հիմնական պարտականությունները

- (1) Կառավարիչը պարտավոր է ապահովել և բարելավել սպասարկման գոտու բոլոր հիմ և նոր բաժանորդներին տրամադրվող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները:
- (2) Կառավարիչը պարտավոր է կառավարել, շահագործել և պահպանել տեխնիկական միջոցները և ենթակառուցվածքները իրականացնելու համար.
 - ա) խմելու ջրի արտադրությունը, մաքրումը, փոխադրումը և բաշխումը,
 - բ) կեղտաջրերի հավաքումը, փոխադրումը և հեռացումը:
- (3) Մույն Առդիրում «կեղտաջրեր» նշանակում է սույն Առդիրի 3.1(2)բ կետում նշված կեղտաջրերը:
- (4) Կառավարիչը պետք է իրականացնի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց վարձերի հաշվարկման և հավաքման աշխատանքները և սպառողներին սպասարկելու ֆունկցիաները:
- (5) Կառավարիչը պետք է իրականացնի բոլոր բաժանորդների մոտ ջրաչափերի տեղադրման և նորմատիվային զանձման համակարգից ջրաչափման հիման վրա հաշվարկված զանձման համակարգին անցնելու ծրագրերը, գործող օրենսդրությամբ և ՀՀ կառավարության կողմից սահմանված նորմերի համաձայն:
- (6) Կառավարիչը պետք է գնահատի և առաջարկի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների համար զանձվող սակագները, վճարները և այլ վարձերը՝ ջրօգտագործման չհաշվառվող և հաշվառվող ծավալների համար: Կառավարման խորհուրդը պետք է հաստատի այս սակագները, վճարները և վարձերը և ներկայացնի դրանք համապատասխան պետական մարմնի հաստատմանը:
- (7) Կառավարիչը պետք է ապահովի տեխնիկական անձնակազմի վերապատրաստումը՝ նրանց աշխատանքային կարողությունների կատարելագործման համար:
- (8) Կառավարիչը պետք է կիրառի կառավարման համար նախատեսված տեղեկատվական, սպառողների սպասարկման և հաշվապահական հավաքման ժամանակակից համակարգեր՝ բարելավելով և զարգացնելով ընկերության կողմից արդեն կիրառվող համակարգերը կամ, անհրաժեշտության դեպքում, մշակելով և ներդնելով նորերը:
- (9) Կառավարիչը պետք է պլանավորի և ներդրումներ կատարի շահագործման և պահպանման աշխատանքների համար անհրաժեշտ սարքավորումներ ձեռք

բերելու համար, ինչպես նաև պետք է վերանորոգի, վերականգնի և արդիականացնի ընկերության կողմից շահագործվող տեխնիկական համակարգերը և ենթակառուցվածքները կապիտալ ֆոնդի շրջանակներում:

- (10) Մույն Առդիրում ներկայացված աշխատանքների ցանկով սահմանվում են կառավարչի կողմից ակնկալվող ծառայությունները: Այդ ցանկը սպառնիչ է, և կարող է անհրաժեշտություն առաջանալ դրանում ընդգրկել նաև չբավարկված լրացուցիչ ֆունկցիաներ: Կառավարիչը, անհրաժեշտ համարելու դեպքում, նույնպես կարող է առաջարկել լրացուցիչ ծրագրեր՝ ելնելով ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման ոլորտում մեծանախիպ պայմանագրերի իրականացման արդյունքում ձեռք բերած իր նախկին փորձից:
- (11) Կառավարիչը ծառայությունները պետք է իրականացնի կատարողական չափանիշների համաձայն, վերահսկողություն սահմանի կատարողական ցուցանիշների նկատմամբ և սպահալի ակնկալվող արդյունքները, որոնք ներկայացված են Առդիր 6-ում («Կատարողական ցուցանիշներ և ակնկալվող արդյունքներ») և Առդիր 9-ում («Նորախուսավճար»):

3.2 Կառավարում և ադմինիստրացիա

(1) Ընկերության ընդհանուր կառավարումը բարելավելու համար կառավարիչը պետք է.

- ա) ներդնի կադրերի կառավարման ժամանակակից, արդյունավետ և նպատակային մոտեցումների կիրառման համակարգ՝ սերտորեն համագործակցելով մասնաճյուղերի տնօրենների հետ և նրանց հետ կնքած հանձնարարության պայմանագրերի համաձայն: Կառավարիչն անցկացնելու է տեխնիկական անձնակազմի գնահատում և տարեկան կտրվածքով մշակելու ու վարելու է կադրային ալան:
- բ) Կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացնի տարածքային մասնաճյուղերի, ինչպես նաև ընկերության գլխավոր գրասենյակի հետ նրանց հարաբերությունների վերակազմակերպման առաջարկ՝ միաձուլումների, նոր տեղամասերի ստեղծման, մասնաճյուղերի տնօրենների հետ կնքած հանձնարարության պայմանագրերի փոփոխության միջոցով, և այս ամենն իրականացնի Կառավարման խորհրդի հսկողությունն ստանալուց հետո:
- գ) մշակի և կիրառի կառավարման (ֆինանսական, տեխնիկական) տեղեկատվական մեխանիզմներ (հատկապես ջրադրույներից վերցվող, քաշիչ, ցանցերին տրվող և սպառողներին մատակարարվող ջրի ծավալների, ինչպես նաև սպառվող էլեկտրաէներգիայի ծավալների հուսալի վերահսկման համար)՝ օգտագործելով համապատասխան կոմպյուտերացված համակարգեր:

(2) Ընկերության առևտրային կառավարումը և սպառողների սպասարկումը բարելավելու համար կառավարիչը պետք է.

- ա) մեռչային եղանակով ընտրված քաժանորդների մոտ պարբերաբար անցկացնի ջրամատակարարման իրավիճակի ուսումնասիրություն՝

ջրօգտագործման հետ կապված առանձին հարցեր պարզելու և ծառայությունների նորմերի ու սակագների վերաբերյալ բաժանորդների կարծիքն իմանալու նպատակով, որոնք անհրաժեշտ են ջրամատակարարման ծառայությունների որակի բարելավման կայուն և հուսալի ստրատեգիա մշակելու համար,

- բ) վարի տվյալների բազա՝ ըստ համապատասխան խմբերի դասակարգելով բոլոր միացումները, ջրաչափերը և բաժանորդներին,
- գ) մշակի սպառողների մոտ ջրաչափեր տեղադրելու ծրագիր, ներառյալ կապիտալ ֆոնդի համապատասխան ենթաբաղադրիչի մուտքերի հաշվին,
- դ) կիրառի առևտրային նոր համակարգ՝ հիմնված ջրաչափման սկզբունքով վարձերի հաշվարկման վրա, ինչպես նաև մշակի վարձերի գանձման, հաշվարկման և սպառողների համար բարենպաստ պայմաններով ծառայությունների մատուցման արդյունավետ և արդար ընթացակարգեր՝ համագործակցելով համատիրությունների հետ,
- ե) պատրաստի և տարեկան կտրվածքով Կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացնի առաջարկություններ հաշվառվող (չափվող) և չհաշվառվող ջրօգտագործման սակագների վերաբերյալ, հատուկ պայմաններ սահմանելով սպառողների կարիքավոր խավերի համար,
- զ) վերլուծի և Կառավարման խորհրդին ներկայացնի սակագնային ռեժիմի և սակագների աստիճանական փոփոխման պլան, որը հնարավորություն կտա բարձրացնել սպառողների՝ ծառայությունների դիմաց վճարելու պատրաստակամությունը,
- է) համայնքների և համատիրությունների հետ համագործակցելով, մշակի և իրականացնի բաժանորդների իրազեկման և տեղեկատվական աշխատանքներ, որոնց միջոցով սպառողներին բացատրվի սակագների փոփոխման, գանձման մեխանիզմների բարելավման, վարձերի վճարման կարգապահության, հոսակրորուստների և վատնումների կրճատման անհրաժեշտությունը, ինչպես նաև տեղեկատվություն տրամադրվի ներդրումային ծրագրերի և ջրի պահեստավորման վերաբերյալ,
- ը) իր հսկողության տակ վերցնի նոր միացումներ անցկացնելու գործընթացը, ինչպես նաև սնների սեփականատերերի կողմից ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միանալու նպատակով նոր ջրագծերի կառուցումը,
- թ) հսկողության տակ վերցնի մեծածախ հիմունքներով ջրամատակարարման գործընթացը և նվազեցնի գերսպառման ծավալները,
- ժ) հայտնաբերի և վերացնի ջրամատակարարման արտաքին համակարգերում, ինչպես նաև բաշխման ներքին օղակներում արված ապօրինի միացումները և օրինականացնի դրանք համակարգի օրինական սպառողների թիվը մեծացնելու համար:

(3) Ընկերության ֆինանսական կառավարումը բարելավելու համար կառավարիչը պետք է.

- ա) մշակի և վարի հաշվապահական հաշվառման ընդհանուր մատյան և ծախսերի հաշվառման համակարգ, որը կապահովի ընկերության ֆինանսական կառավարման, վերլուծությունների կատարելու և որոշումներ կայացնելու արդյունավետ ներքին համակարգ և միևնույն ժամանակ կեանսպատասխանի հայցական և միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին, ինչպես նաև ծրագրի ֆինանսական կառավարման մասին հաշվետվություններ ներկայացնելու ՄՋԸ-ի չափանիշներին,
- բ) իրատեսքերն առանձնացնի խմելու ջրի արտադրության և մեծածախ հիմունքներով մատակարարման (մինչև ՕԿՁ), ջրաբաշխման ծառայությունների և ջրահեռացման ծառայությունների ծախսերի հաշվառումը բոլոր մասնաճյուղերում,
- գ) պատրաստի տարեկան և եռամսյա ֆինանսական հաշվետվություններ ողջ ընկերության և նրա յուրաքանչյուր մասնաճյուղի համար:

3.3 Ըահագործում և պահպանում

(1) Խմելու ջրի մատակարարման ծառայությունների որակը բարելավելու համար կառավարիչը պետք է կառավարի, շահագործի և պահպանի տեխնիկական միջոցները և ենթակառուցվածքները, որպեսզի.

- ա) ապահովի բաժանորդներին տրվող ջրի օրական միեմիալ գրաֆիկը՝ ջրի հետ կապված հիմնական կարիքները հոգալու համար և պայտնագրի տևողության ընթացքում աստիճանաբար ավելացնի օրական ջրամատակարարման ժամերը՝ ձգտելով Ընկերության կողմից սպասարկվող բոլոր բնակավայրերում ապահովել շուրջօրյա ջրամատակարարում,
- բ) ապահովի կապտածների և այլ ջրընդունիչ կառուցվածքների հուսարի պաշտպանվածությունը և բաժանորդներին մատակարարվող ջրի ախտահանումը՝ դրա բակտերիոլոգիական անվտանգությունն ապահովելու համար,
- գ) մշակի և իրականացնի սպառողների անվտանգության ապահովման ծրագրեր, մասնավորապես ջրի աղտոտման հետևանքով առաջացող հիվանդությունների համաճարակների բռնկման հավանականությունը նվազեցնելու, դրանք հայտնաբերելու և կանխելու համար,
- դ) ապահովի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ժամանակին տրամադրումը նոր բաժանորդներին,
- ե) մշակի և իրականացնի ջրի որակի հսկողության և պահպանման ծրագիր:

(2) Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ընդհանուր շահագործումը և պահպանումը բարելավելու համար կառավարիչը պետք է.

- ա) մշակի և իրականացնի վերանորոգման ծրագիր և համապատասխան վերապատրաստման դասընթացներ կազմակերպի տեխնիկական անձնակազմի համար,
- բ) մշակի և իրականացնի աշխատանքի անվտանգության համապարփակ ծրագիր և կազմակերպի համապատասխան ուսումնական դասընթացներ:

(3) Ջրի արտադրության և փոխադրման համակարգերի աշխատանքի արդյունավետության բարձրացման համար կառավարիչը պետք է.

- ա) ավարտի և իրականացնի ընկերության կողմից արդեն սկսված արտաքին համակարգերում խոշոր տրամաչափի ջրաչափերի տեղադրման ծրագիրը և ապահովի տեղադրված ջրաչափերի շահագործումն ու պահպանումը,
- բ) մշակի և իրականացնի հոսակրուստների հայտնաբերման ծրագիր, ինչպես նաև վերացնի աղբյուրներից մինչև բաշխիչ ցանցերը ձգվող ջրատարների հոսակրուստները՝ օգտագործելով ժամանակակից սարքավորումներ,
- գ) մշակի և իրականացնի ծրագրեր, որոնք ուղղված են ջրամատակարարման պրոբլեմներ ունեցող բնակավայրերում ջրի սեզոնային ամբարավարության հետ կապված դժվարությունների լուծմանը՝ համագործակցելով ռոզգման ընկերությունների և հիմնարկների հետ,
- դ) մշակի և իրականացնի պոմպակայաներում և մաքրման կայաններում էլեկտրատեներգիայի արդյունավետ օգտագործման հսկողության ծրագիր («էլեկտրատեներգիայի խնայողության ծրագիր»):

(4) Բաշխիչ համակարգերի աշխատանքի արդյունավետության բարձրացման համար կառավարիչը պետք է.

- ա) մշակի և իրականացնի ՕԿՋ-ների լվացման, սանիտարական պահպանության և վերանորոգման ծրագրեր,
- բ) մշակի և իրականացնի հոսակրուստների հայտնաբերման և վերացման, ինչպես նաև խողովակները նորերով փոխարինելու ծրագիր,
- գ) մշակի և իրականացնի բաժանորդների մոտ ջրաչափերի տեղադրման ծրագիր, որի մասին նշված է 3.2.2(գ) կետում,
- դ) մշակի և իրականացնի ջրաչափերի կարգաբերման, վերանորոգման և նորերով փոխարինման ծրագիր կապիտալ ֆոնդի համապատասխան ենթաբաղադրիչի մուտքերի հաշվին, համագործակցելով ԵՋԿԸ-ի և ԿԲՎ-ի ծրագրերի շրջանակներում ստեղծված ջրային ըկերությունների հետ,
- ե) մշակի և իրականացնի ջրամատակարարման ցանցերի կառավարման ծրագիր՝ ցանցերում համապատասխան ճշման ապահովման և հոսակրուստների նվազեցման մպատակով, մասնավորապես և

անհրաժեշտության դեպքում՝ քաշխիչ ցանցերի գոտիավորման միջոցով,

- զ) պատրաստի, լրամշակի և ներդնի աշխատանքային ներքին ընթացակարգ՝ խմելու ջրի ցանցերի համակարգչային քարտեզների պարբերաբար նորացման համար:
- (5) *Կեղտաջրերի հավաքման, փոխադրման և հեռացման համակարգերի շահագործման արդյունավետության բարձրացման համար կառավարիչը պետք է.*

- ա) մշակի և իրականացնի ջրահեռացման ցանցերի և կոլեկտորների մաքրման և վթարների անհապաղ վերացման ծրագիր, մասնավորապես կոյուղագծերի վթարների հետևանքով խմելու ջրի աղտոտման և էկոլոգիական աղետի վտանգից խուսափելու համար,
- բ) պատրաստի, լրամշակի և ներդնի աշխատանքային ներքին ընթացակարգ՝ ջրահեռացման ցանցերի և կոլեկտորների համակարգչային քարտեզների պարբերաբար նորացման համար,
- գ) մշակի և իրականացնի մաքրման կայաններում կեղտաջրերի մաքրման ատիճանի բարձրացման միջոցառումների պլան-ժամանակացույց, այն համաձայնացնելով ՀՀ բնապահպանության նախարարության հետ:

3.4 Տեխնիկական անձնակազմի վերապատրաստումը

- (1) *Ընկերության կադրային կարողությունների ամրապնդման նպատակով կառավարիչը պետք է.*

- ա) մշակի վերապատրաստման գլոբալ ծրագիր կապիտալ ֆոնդի համապատասխան ենթաբաղադրիչի մուտքերի հաշվին, համագործակցելով ԵՄԿԸ-ի և KfW-ի ծրագրերի շրջանակներում ստեղծված ջրային ըկերությունների հետ,
- բ) կազմակերպի տեղերում վերապատրաստման կուրսեր՝ կառավարման, շահագործման, ֆինանսական և տեխնիկական ոլորտներում աշխատանքային կարողությունների կատարելագործման նպատակով,
- գ) կատարելագործի մասնաճյուղերի տնօրենների և տեխնիկական անձնակազմերի գիտելիքներն ու կարողությունները և աստիճանաբար ավելացնի նրանց կարողություններն ու ինքնուրույնությունը՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեխնիկական և ֆինանսական կառավարման ու շահագործման արդյունավետության բարձրացման համար:

3.5 Հաշվետվություններ ներկայացնելը

(1) *Շահագործման գործընթացի կառավարման և ազմինխտորատիվ վերահսկողության բարելավման նպատակով կառավարիչը պետք է.*

- ա) կազմի և վարի ամսական գործունեության մասին համապարփակ հաշվետվություններ՝ Կառավարումը վերահսկելու և պարբերաբար հաշվետվություններ ներկայացնելու համար,
- բ) հանդիպումներ ունենա սլայմանագրի վերահսկման գրասենյակի (ՊՎԳ) հետ առնվազն ամիսը երկու անգամ, կամ անհրաժեշտության դեպքում, շահագործման և ֆինանսական գործունեության արլյունքներն ու գալիք ժամանակաշրջանի սլանները քննարկելու նպատակով:
- գ) հանդիպումներ ունենա Կառավարման խորհրդի հետ եռամսյակը մեկ, կամ երբ անհրաշետ է, քննարկելու համար ընկերության գործունեության ստրատեգիական և տակտիկական հարցերը:

Հոդված 4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ԲԱՐԵԼԱԿՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼ ՖՈՆԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

4.1 Հիմնական պարտականությունները

(1) Կառավարիչը պետք է պատրաստի մամրամասն ծրագրեր կապիտալ ֆունդի միջոցներից ֆինանսավորվող բաղադրիչների և ենթարադադրիչների իրականացման համար, համաձայն սույն Առդրի 4.3 կետի:

4.2 Կողմնորոշիչ ներդրումների պլան

(1) Պայմանագրային առաջին տարվա վերջից սկսած կառավարիչը պետք է, սերտորեն համագործակցելով ՊՎԳ-ի հետ, ընկերության ներդրումների ու զնումների ներքին հանձնաժողովի միջոցով, մշակի և իրականացնի շրջանառու հնգամսյա կողմնորոշիչ ներդրումների պլան կապիտալ ֆունդի միջոցների հաշվին՝ տեխնիկական միջոցների ու ենթակառուցվածքների վերանորոգման, վերականգնման, նորացման, արդիականացման, բարելավման և նորերի ստեղծման համար:

(2) Կողմնորոշիչ ներդրումների այս պլանը պետք է ներկայացվի Կառավարման խորհրդին պայմանագրային յուրաքանչյուր տարվա ավարտից առաջ:

4.3 Ներդրումների տարեկան պլան

(1) Կառավարիչը պետք է սահմանի, սլանավորի և իրականացնի Առդրի 12-ում ներկայացված տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների վերանորոգման, վերականգնման և բարելավման աշխատանքները միայն այնքանով,

որքանով այդ աշխատանքները կարող են ֆինանսավորվել կապիտալ ֆոնդից և համապատասխանում են ներդրումների տարեկան պլանին, համաձայն ԸՊ 3.13.5 կետի:

- (2) Կառավարիչը, ներդրումների տարեկան պլանը մշակելիս, պետք է սերտորեն համագործակցի ՊՎԳ-ի հետ և այդ պլանը հնարավորին չափով համաձայնեցնի կողմնորոշիչ ներդրումների պլանի հետ: Կառավարչի առաջարկները վերլուծության են ենթարկվելու և ՊՎԳ-ի միջոցով ներկայացվելու են Կառավարման խորհրդին՝ ընկերության գնումների և ներդրումների ներքին հանձնաժողովի շրջանակներում:
- (3) Ընկերության ներդրումների և գնումների այս հանձնաժողովը կազմված է լինելու հինգ անդամից, որոնցից երկուսը լինելու են կառավարչի անձնակազմի անդամները (որից մեկը՝ հանձնաժողովի նախագահն է), կառավարչի կողմից ընտրված ընկերության անձնակազմի մեկ անդամ և ՊՎԳ-ի երկու ներկայացուցիչ:
- (4) Ներդրումների տարեկան պլանը հաստատվելու է Կառավարման խորհրդի կողմից, ԸՊ 3.13.5 կետով սահմանված կարգի համաձայն:

Հոդված 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՊՎԳ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՅՍԿՎՈՂ ՈՐՈՇԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

5.1 Ընդհանուր գրույթներ

Ի լրումն սույն Առդիրի հոդվածներ 3-ով և 4-վ սահմանված գրույթների, կառավարիչը պետք է իրականացնի հոդված 5-ով սահմանված որոշակի աշխատանքները: Կառավարիչը պետք է ստանա Կառավարման խորհրդի և ՊՎԳ-ի թուղտվությունը նախքան որևէ ծրագրեր, նորմերի, ընթացակարգերի, սակագների հետ կապված պլաններ, մասնաճյուղերի կառուցվածքային փոփոխություններ իրականացնելը:

5.2 Կառավարման խորհրդի կողմից վերահսկվող աշխատանքները

Ստորև նշված աշխատանքները վերահսկվելու են Կառավարման խորհրդի և ՊՎԳ-ի կողմից, իսկ այդ աշխատանքների հետ առնչվող սրևե տեխնիկական ծրագիր կառավարիչը չի կարող իրականացնել առանց Կառավարման խորհրդի հավանությունն ստանալու:

(1) Կադրային պլան

Կառավարիչը պետք է պատրաստի և ներկայացնի տեխնիկական անձնակազմի կառավարման, աշխատանքի կազմակերպման, վարձատրության և վերահսկողության համապարփակ տարեկան պլան («կադրային պլան»), համաձայն Առդիր 8-ի (Տեխնիկական անձնակազմ) կետ 3.3-ի: Կառավարման խորհուրդը պետք է հաստատի կադրային պլանին առնչվող բոլոր հարցերը, այդ թվում՝ հաստիքների կրճատման ծրագրի

շրջանակներում իրականացվող տեխնիկական անձնակազմի քանակի փոփոխության մասին հարցերը:

(2) Մակագնային սխեմաներ

Կառավարիչը պետք է տարեկան կտրվածքով պատրաստի և ներկայացնի իր առաջարկները ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների սակագների, վարձերի և այլ վճարումների վերաբերյալ պայմանագրային հաջորդ տարվա համար («սակագնային սխեմա»):

(3) Ներդրումային ծրագրեր

Կառավարիչը պետք է տարեկան կտրվածքով պատրաստի և հաստատման ներկայացնի ներդրումների տարեկան պլանը, համաձայն Առդիր 2-ի 4.3 կետի:

(4) Տարեկան հաշվետվություն

ա) Կառավարիչը պետք է յուրաքանչյուր պայմանագրային տարվա վերջին աշխատանքային օրվանից հետո վաթսուն 60 օրվա ընթացքում պատրաստի ներկայացնի համապարփակ հաշվետվություն՝ հայերենով և անգլերենով, որում պետք է ներկայացվեն պայմանագրային նախորդ տարվա ընթացքում կառավարչի կողմից իրականացված աշխատանքները և պայմանագրային հաջորդ տարվա համար նախատեսվող պլանները:

բ) Սույն Առդիրի 5.2.4(ա) կետի համաձայն պատրաստված տարեկան հաշվետվություններում կառավարիչը պետք է տրամադրի ինֆորմացիա ընկերության գլխավոր գրասենյակի և յուրաքանչյուր մասնաճյուղի կտրվածքով, ինչպես նաև ամբողջ ընկերության համար:

5.3 Պայմանագրի վերահսկման գրասենյակի կողմից վերահսկվող աշխատանքները

Ստորև նշված աշխատանքները վերահսկվելու են ՊՎԳ-ի կողմից, և դրանց հետ առնչվող տեխնիկական ծրագրերից ոչ մեկը կառավարիչը չի կարող իրականացնել առանց ՊՎԳ-ի հավանությունն ստանալու:

5.3.1 Կառավարում և աղմինիստրացիա

(1) Բազային տարվա հաշվետվությունը

Կառավարիչը պետք է պատրաստի բազային տարվա հաշվետվություն, որը պետք է տեղեկատվություն պարունակի պայմանագրի մեկնարկային օրվան անմիջապես նախորդող մեկ տարվա կտրվածքով ընկերության գործունեության և կատարողականի մասին, այդ թվում՝ տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների շահագործման և վերանորոգման աշխատանքների, վարձերի հաշվարկման և գանձման, սպառողների սպասարկման, մատուցվող ծառայությունների և կատարողական հիմնական ցուցանիշների մասին (անհրաժեշտության դեպքում կարող են ընդգրկվել նաև այլ տեղեկություններ):

(2) Ինֆորմացիոն համակարգեր

Կառավարիչը պետք է մշակի և ներդնի կամ, արդեն գոյություն ունենալու դեպքում, վերամշակի և կատարելագործի առկա համակարգչային տեղեկատվական համակարգերը, նրանցում նախատեսելով.

- ա) վարձերը հաշվելու, հավաքված վարձերի և դեֆիտորական պարտքերի հաշվառման, սպառողների հետ կապ պահպանելու և նրանց բողոքներն ու առաջարկությունները գրանցելու համակարգ,
- բ) հաշվապահական հաշվառման համակարգ՝ իմնված Հայաստանի և միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների վրա,
- գ) ծախսերի հաշվառման համակարգ յուրաքանչյուր մասնաճյուղի համար՝ ջրի արտադրության, բաշխման և ջրահեռացման ծառայությունների կտրվածքով:

(3) Վարձերի հաշվումը

Կառավարիչը պետք է.

- ա) մշակի և իրականացնի ապօրինի միացումները հայտնաբերելու և վերացնելու, կամ, դրանք օրինականացնելով, համակարգի օրինական սպառողների թիվը մեծացնելու ծրագիր («Ապօրինի միացումների դեմ պայքարի ծրագիր»),
- բ) մշակի և իրականացնի բաժանորդների մոտ ջրաչափերի տեղադրման գործընթացն ավարտելու ծրագիր («Ջրաչափման ծրագիր»), ՀՀ կառավարության կողմից սահմանված մեթոդաբանության և նորմերի համաձայն:

(4) Վարձերի գանձումը

Կառավարիչը պետք է բարելավի սպառողներից վարձերի գանձման մեխանիզմները, հաշվի առնելով ընկերության աշխատանքի բարելավման և պայմանագրի վերջում, նրա ինքնաֆինանսավորման ապահովման անհրաժեշտությունը:

(5) Սպառողների սպասարկում

Կառավարիչը պետք է.

- ա) բարելավի սպառողների սպասարկման ոլորտի բոլոր մեխանիզմները կապված՝ նոր միացումների իրականացման կարգի, վարձերի հաշվարկման և գանձման, ցանցերից անջատումների, սպառողների բողոքներին և առաջարկություններին արձագանքելու հետ,
- բ) մշակի և իրականացնի բաժանորդների իրազեկման և լրատվության ծրագիր՝ սպառողների մոտ բացատրական աշխատանքներ իրականացնելու նպատակով («Բաժանորդների իրազեկման և լրատվության ծրագիր»),

- զ) մշակի և իրականացնի նմուշային եղանակով ընտրված բաժանորդներին մոտ ջրամատակարարման իրավիճակի ուսումնասիրության ծրագիրը («Բաժանորդների հարցման ծրագիր») ջրօգտագործման հետ կապված առանձին հարցերի, ծառայությունների նորմերի, սակագների մատչելիության և դրանք վճարելու պատրաստակամության վերաբերյալ բաժանորդների կարծիքն իմանալու նպատակով:

5.3.2 Ծահագործում և պահպանում

(1) Ջրամատակարարման ժամերի տևողությունը

Կառավարիչը պետք է մշակի և իրականացնի.

- ա) ջրամատակարարման ծառայությունների բարելավման և բաժանորդներին տրվող ջրի օրական միմիսյալ գրաֆիկ ապահովելու ծրագիրը («Ջրամատակարարման միմիսյալ գրաֆիկի ապահովման ծրագիր»), «Նրախոսավճարի մասին» Առդիր 9-ի համաձայն,
- բ) բաժանորդներին տրվող ջրի օրական չափաբաժնի միջին տևողության ավելացում («Ջրամատակարարման ժամերի ավելացման ծրագիր»), «Նրախոսավճարի մասին» Առդիր 9-ի համաձայն:

(2) Ջրի անվտանգության և որակի հսկողություն

Կառավարիչը պետք է մշակի և իրականացնի ջրի միկրոբիոլոգիական անվտանգության և որակի հսկողության ծրագիր («Ջրի անվտանգության և որակի հսկողության ծրագիր»), որի շրջանակներում իրականացվող աշխատանքները պետք է ներառեն նաև հետևյալը.

- ա) ջրամատակարարման ծառայության համար - ջրաղբյուրների ջրի և փոխադրման ու բաշխման համակարգերում հոսող մաքրված ջրի որակի հսկողության և խմելու ջրի անվտանգության ապահովման ծրագիր, մասնավորապես ուշադրություն դարձնելով *Ֆեկալ կոլիֆորմ* ստանդարտի հետ համապատասխանությանը, համաձայն «Նրախոսավճարի մասին» Առդիր 9-ի,
- բ) ջրահեռացման ծառայության համար - ընկերության կողմից սպասարկվող ջրահեռացման համակարգերից գետերի, ջրանցքների մեջ և ընդհանրապես շրջակա միջավայրում բաժվող կեղտաջրերի հսկողության, ինչպես նաև ջրահեռացման համակարգ մտնող արդյունաբերական արտամեծուսների նկատմամբ հսկողության ծրագիր:

(3) Հոսակորուստների և վատնումների նվազեցում

Կառավարիչը պետք է մշակի և իրականացնի ջրամատակարարման և բաշխման համակարգերից, ինչպես նաև ՕԿՁ-ներից, բաշխման խողովակներից և համատիրությունների ներքին ցանցերից հոսակորուստների և վատնումների վերահսկման և նվազեցման ծրագիր («Հոսակորուստների և վատնումների նվազեցման ծրագիր») «Ապօրինի միացումների դեմ պայքարի ծրագրի» միջոցով:

(4) Էլեկտրատեղակայի արդյունավետ սպառում

Կառավարիչը պետք է մշակի և իրականացնի պոմպակայաններում, մաքրման կայաններում և ընդհանրապես ընկերության բոլոր օղակներում էլեկտրատեղակայի օգտագործման արդյունավետության բարձրացման և հսկողության ծրագիր («Էլեկտրատեղակայի խնայողության ծրագիր») և բարելավի սպառողներին մատուցվող ծառայությունների որակի և ընկերության կողմից սպառվող էլեկտրատեղակայի կվա/ժամերի քանակի հարաբերակցությունը:

(5) Ցանցերի քարտեզագրում

Կառավարիչը պետք է մշակի, իրականացնի և վարի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի կոմպյուտերացված քարտեզագրում («Ցանցերի քարտեզագրման ծրագիր»):

(6) Գույքագրում և գույքի վիճակի գնահատում

Կառավարիչը պետք է.

- ա) մշակի և վարի տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների խոշոր բաղկացուցիչ մասերի տվյալների բազա («Տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների տվյալների բազա»),
- բ) մինչև Ավարտի օրը կազմի տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների վիճակի մասին հաշվետվություն («Իրավիճակի վերջնական հաշվետվություն»):

(7) Պահպանում և վերանորոգում

Կառավարիչը պետք է մշակի և իրականացնի տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների պահպանման և վերանորոգման ծրագիր («Վերանորոգման ծրագիր»), որը ներառում է նաև.

- ա) տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների տարբեր քաղկացուցիչ մասերի երաշխիքային վերանորոգման ծրագիր;
- բ) տրանսպարտային միջոցների և սարքավորումների վերանորոգման աշխատանքների գրանցման համակարգ;
- գ) բոլոր վերանորոգման աշխատանքների համապարփակ պլան և գրաֆիկ;
- դ) «վերանորոգման ծրագիր» իրականացման գրաֆիկ:

(8) Աշխատանքի անվտանգություն

Կառավարիչը պետք է մշակի և իրականացնի աշխատանքի անվտանգության ծրագիր՝ տեխնիկական անձնակազմի և ղեկավար անձնակազմի ու «տեխնիկական կառուցվածքները» հաճախող այլ անձանց համար («Աշխատանքի անվտանգության ծրագիր»):

(9) Սպասարկման և վերանորոգման համար գնումների իրականացումը

ա) Սպասարկման և վերանորոգման աշխատանքներն ապահովելու համար ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելիս կառավարիչը պետք է.

- 1) պահպանի սույն Առդիրի 5.3.2(9)(բ) կետով նախատեսված «Գնումների հայեցակարգով» սահմանված դրույթները,
- 2) առաջնորդվի ընկերության կողմից տրամադրվող ֆինանսավորման ծախսերով:

բ) Կառավարիչը պետք է մշակի և իրականացնի գնումներ կատարելու սկզբունքների համակարգ («Ընկերության գնումների հայեցակարգ»), որը պետք է ներառի գնումների համապարփակ ստրատեգիա և ընթացակարգեր, այդ թվում՝ վճարման մեխանիզմներ, որոնց կառավարիչը պետք է հետևի ընկերության անունից և ընկերության ֆինանսավորմամբ ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելիս:

գ) Կապիտալ ֆոնդի «Ավելացող ընթացիկ ծախսեր» ենթաբաղադրիչի միջոցների հաշվին ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը պետք է իրականացվի այն ընթացակարգերով, որոնք կիրառվում են կապիտալ ֆոնդի նկատմամբ, համաձայն Առդիր 5-ի:

5.3.3 Վերապատրաստում

(1) Կադրերի վերապատրաստում և զարգացում

Կառավարիչը պետք է մշակի իրականացնի տեխնիկական անձնակազմի վերապատրաստման և զարգացման համապարփակ ծրագիր («Կադրերի վերապատրաստման և զարգացման ծրագիր»):

5.3.4 Ամսական և եռամսյա հաշվետվություններ

(1) Ամսական և եռամսյա հաշվետվությունները

Բացի պայմանագրով պահանջվող բոլոր հաշվետվություններից, Մեկնարկային օրվան հաջորդող քառասունհինգերորդ (45) օրվանից սկսած կառավարիչը պետք է պատրաստի և յուրաքանչյուր ամսից հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում Կառավարման խորհրդին ներկայացնի ամսական հաշվետվություն, կամ յուրաքանչյուր երեք ամիսը մեկ՝ եռամսյա հաշվետվություն անգլերեն և հայերեն լեզուներով, որտեղ հակիրճ ձևով ամփոփվի կառավարչի գործունեությունը Արյուսակ 1-ում բերված յուրաքանչյուր ոլորտում:

Աղյուսակ 1

Գործունեության ոլորտը	Ամսական հաշվետվություն	Եռամսյա հաշվետվություն
(ա) ջրամատակարարման ժամերի տևողություն	✓	✓
(բ) ջրի անվտանգության հսկողություն	✓	✓
(գ) ջրի բյուրացման պլանցաներ	✓	✓
(դ) անսարքությունների վերացում		✓
(ե) վերանորոգում և վերականգնում		✓
(զ) բաժանորդների մոտ, ջրադի կետերում և բաժանարար հանգույցներում ջրաչափերի տեղադրում և շահագործում		✓
(է) վաճառքի հաշվարկում և հավաքում, դրանց հետ կապված ֆինանսական ինֆորմացիա	✓	✓
(ը) ապօրինի միացումների վերացում կամ օրինականացում		✓
(թ) ջրի հաշվառմանը վերաբերող աշխատանքներ	✓	✓
(ժ) էլեկտրաէներգիայի սպառում		✓
(ի) գետերի մեջ թափվող կեղտաջրերի որակի հսկողություն		✓
(լ) կադրերի վերապատրաստում և զարգացում		✓
(լւ) կատարողական ցուցանիշներ, համաձայն ՀՔ-ի «Benchmarking Water and Sanitation Utilities: Start Up Kit» փաստաթղթի		✓

(2) Առանձին և կոնսոլիդացված հաշվետվություններ

Սույն Աղյուսակի 5.3.4(1) կետի համաձայն պատրաստված ամսական և եռամսյա հաշվետվություններում կառավարիչը պետք է տրամադրի առանձին ինֆորմացիա յուրաքանչյուր մասնաճյուղի կտրվածքով, ինչպես նաև կոնսոլիդացված ամփոփ տեղեկություններ՝ ամբողջ ընկերության համար:

Առդիր 2-ի հավելված 1 «Ներդրումային ծրագրեր և ֆինանսներ»

Հոդված 1. Ֆինանսավորման աղբյուրները

- 1.1 Կապիտալ ֆոնդի ծրագրերը ֆինանսավորվում են ՄԶԸ վարկի միջոցներից և ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորման գծով հատկացված գումարներից:
- 1.2 Կապիտալ ֆոնդը կարող է հետագայում համալրվել Ընկերության կողմից ներքին և արտաքին այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին:

Հոդված 2. Հարկեր և տուրքեր

- 2.1 Կապիտալ ֆոնդից ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ իր առաջարկությունները Կառավարիչը ներկայացնում է համապատասխան մախահաշիվների հետ միասին, որոնք չեն ընդգրկում հարկերն ու տուրքերը՝ համաձայն գործող օրենսդրությանը և վարկային համաձայնագրի:
- 2.2 Ենթադրվում է, որ կապիտալ ֆոնդից ֆինանսավորվող ներդրումներն ազատվում են բոլոր տեսակի հարկերից և տուրքերից: Վճարման ենթակա հարկերը և տուրքերը պետք է վճարվեն կամ փոխհատուցվեն ՀՀ կառավարության կողմից, սակայն այլ ֆինանսական միջոցներից և ոչ թե ՀԶՁ ծրագրի համար համաֆինանսավորման գծով հատկացվող գումարներից:

Հոդված 3. Ավելագուր րեթացիկ ծախսերի ֆինանսավորումը

- 3.1 ՄԶԸ-ի կողմից մինչև պայմանագրի ստորագրումը համապատասխան հավանություն ստանալու դեպքում Կապիտալ ֆոնդի որևէ ենթաբաղադրիչից ստացված մուտքերը կարող են օգտագործվել Ընկերության շահագործման ծախսերի ֆինանսավորման գծով ճեղքվածքը ժամանակավորապես սուբսիդավորելու համար, մինչև պայմանագրի վեցերորդ տարին, երբ Ընկերությունը կղաճա ինքնաձախսածածկվող:

Առդիր 2-ի հավելված 2 ԸՆԿԵՐՈՒՅՈՒՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ Կառավարում

Հոդված 1. Ընթացիկ եկամուտներ ու ծախսեր և ֆինանսական ճեղքվածք

- 1.1 Կառավարչի պարտականություններից մեկն է լինելու աստիճանաբար նվազեցնել Ընկերության ընթացիկ ֆինանսական ճեղքվածքը, որը գոյանում է Ընկերության ընթացիկ ծախսերի և քաժանորդներից գանձված գումարներից ձևավորված դրամարկղային մուտքերի միջև: Ակնկալվում է, որ մինչև պայմանագրի վեցերորդ տարին ընկերության արդյունավետության գործակիցը կհավասարվի 1-ի:
- 1.2 «Մեկնարկային օրվանից» մինչև պայմանագրի հինգերորդ տարվա վերջը Ընկերության ընթացիկ ֆինանսական ճեղքվածքը ֆինանսավորվելու է ՀՀ կառավարության կողմից՝ վարկային համաձայնագրի դրույթների համաձայն:
- 1.3 Կախված քազային տարվա համար ֆինանսական ամօդիտի կողմից որոշված ընթացիկ ֆինանսական ճեղքվածքի սեծությունից, ՀՀ կառավարությունը կֆինանսավորի յուրաքանչյուր պայմանագրային տարվա ընթացիկ ֆինանսական ճեղքվածքը հետևյալ համամասնություններով.
- | | |
|-------------------------|-----------------|
| քազային տարվա ճեղքվածք՝ | 100 |
| տուրսիդիա, 1-ին տարի՝ | 108 |
| տուրսիդիա, 2-րդ տարի՝ | 99 |
| տուրսիդիա, 3-րդ տարի՝ | 79 |
| տուրսիդիա, 4-րդ տարի՝ | 58 |
| տուրսիդիա, 5-րդ տարի՝ | 35 (պայմանական) |
| տուրսիդիա, 6-րդ տարի՝ | 0 (պայմանական) |
- 1.4 ՀՀ կառավարության կողմից տրամադրվող տուրսիդիաների յուրաքանչյուր տարվա գումարը պետք է ինդեքսավորվի սպառողական գների պաշտոնական ինդեքսի հիման վրա և համապատասխանեցվի հարկային դաշտում քազային տարվա համեմատ տեղի ունեցող փոփոխություններին: Եթե տվյալ տարվա ֆինանսական ճեղքվածքը մեծ կամ փոքր լինի վերը նշված ծավալներից ՀՀ կառավարությունը համապատասխանաբար կտրամադրի լրացուցիչ կամ պակաս գումարներ՝ համաձայն տարեկան կտրվածքով կառավարչի կողմից կազմվող և ՀՀ ֆինեկոնոմախի կողմից հաստատվող ֆինանսական կամխատե-սումների:
- 1.5 Յուրաքանչյուր տարվա տուրսիդիան պետք է վճարվի երկու հավասար մասով, մեկը՝ մինչև տվյալ տարվա 5-րդ ամսի վերջը, մյուսը՝ մինչև 11րդ ամսի վերջը:

Հոդված 2. ԸՆԿԵՐՈՒՅՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԵԼԻՑ ԽԱՐԿԵՐՈՒ և ԽՈՒՐՔԵՐՈՒ

ԸՆԿԵՐՈՒՅՈՒՄԻՆ Ի հազատվում ՀՀ պետական և տեղական մարմինների կողմից սահմանված խարկերից և խուրքերից:

Հոդված 3. Մինչև «մեկնարկային օրը» կուտակված կրեդիտորական պարտքերը

Պայմանագրի ընթացքում ԸՆԿԵՐՈՒՅՈՒՄԻՆ հազատվում է մինչև «մեկնարկային օրը» ԸՆԿԵՐՈՒՅՈՒՄԻ կողմից կուտակված կրեդիտորական պարտքերի մարման գծով պարտավորություններից:

Աղյիք 3

Տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների (օբյեկտների) նկարագրությունը

ԱՌԳԻՐ 3 - ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՀՈԳՎԱԾ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
- ՀՈԳՎԱԾ 2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԸ
- ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՆ ԸՍՏ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ
- ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՄԵՎԱՆ» ԵՎ «ԴԻԼԻՋԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ՕՐԻՆԱԿ)
- ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈՒ ՋՐԱՀԵՌԱՅՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԹԵՐՅԱԼ (ՕՐԻՆԱԿ)

Հոդված 1 - Ընդհանուր դրույքներ

1.1 Մահմանումներ

«Ներդրումային ֆոնդեր» -- պայմանագրի տևողության ընթացքում Ընկերության տրամադրության տակ եղած բոլոր այն ֆինանսական միջոցները, որոնք նախատեսված են ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար:

«Չօգտագործվող միջոցներ» -- Ընկերության կողմից անօրինվող, սակայն «ծառայությունների» իրականացման համար Ընկերության կողմից չօգտագործվող հիմնական միջոցները:

Հոդված 2 – Տեխնիկական միջոցներ և ենթակառուցվածքներ

2.1 Սույն պայմանագրում «Տեխնիկական միջոցներ և ենթակառուցվածքներ» տերմինի տակ պետք է հասկանալ բոլոր այն տեխնիկական միջոցները, կառուցվածքները և ինժեներական ցանցերը, որոնք Ընկերությունը շահագործել է «սպասարկման գոտում» սույն պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ: Տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների մասնաճանաչման նկարագրությունը ներկայացված կլինի «տվյալների սեյսյակում»:

2.2 «Տեխնիկական միջոցներ ու ենթակառուցվածքներ» տերմինը տարածվելու է նաև այն ջրամատակարարման ու ջրահեռացման օբյեկտների վրա, որոնք կառուցվելու կամ տեղակայվելու են «սպասարկման գոտում» «ծառայությունների» իրականացման համար պայմանագրի տևողության ժամանակ:

2.3 Կառավարման խորհուրդն ու Լուսավարիչն ընդունում են, որ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնական ու շրջանառու միջոցների առկա նկարագրությունը կարող է ամբողջական չլինել, և այդ նպատակով սահմանվում է, որ այդ միջոցների մեջ են մտնում.

(i) «կապիտալ ֆոնդերը»,

(ii) Ընկերության գլխավոր գրասենյակի և մասնաճյուղերի ամբողջ գույքը (այդ թվում «մեկնարկային օրվա» դրությամբ պահեստավորված և պայմանագրի ընթացքում գնված նյութերը և ապրանքները),

(iii) վարձակալության կամ լիզինգի պայմանագրերով «ծառայությունների» իրականացման նպատակով ընկերության օգտագործմանը հանձնված ամբողջ գույքը,

(iv) սարքավորումները, մեքենա-մեխանիզմները, վառելիքն ու պահեստամասերը, կահույքը, տրանսպորտային միջոցները և Ընկերության սեփականություն հանդիսացող ու «ծառայությունների» իրականացման համար օգտագործվող հիմնական միջոցները,

(v) Ընկերության կողմից ստորագրված բոլոր պայմանագրերով (ծառայությունների մատուցման, մատակարարման, վարձակալության և այլն), ինչպես նաև «ծառայությունների» հետ առնչություն ունեցող բոլոր գրավոր ու բանավոր պայմանավորվածություններով նախատեսվող իրավունքներն ու նյութական օգուտը,

(vi) Ընկերության կողմից «ծառայությունների» իրականացման հետ կապված լիցենզիաները, թույլտվությունները, սեփականության վկայագրերը, արտոնագրերը և հեղինակային իրավունքները,

- (vii) «ծառայությունների» հետ առնչություն, ունեցող բոլոր գրքերը, փաստաթղթերը, համակարգչային ֆայլերը, տվյալների բազաները, տեղիկագրերը և գովազդային նյութերը,
- (viii) «ծառայությունների» իրականացման համար օգտագործվող բոլոր համակարգիչները, համակարգչային տեխնիկական և համակարգչային ծրագրերը,
- (ix) Ընկերության դեբիտորական պարտքերը,
- (x) Ընկերության բոլոր անդամքանիչները:

2.4 Այս առդիրի I-ին հավելվածում ներկայացված են տեխնիկական միջոցների ու ենթակառուցվածքների հիմնական բնութագրերն ըստ Ընկերության մասնաճյուղերի 2002-ի դրությամբ:

2.5 Այս առդիրի 2-րդ հավելվածում ներկայացված են «Անհապաղ ներդրումների ծրագրի» (այն առդիր 12-ը) մեջ ընդօրոգրված «Մեան» և «Իլիջյան» մասնաճյուղերի տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների պարամետրերն ու նկարագրությունները:

2.6 Այս առդիրի 3-րդ հավելվածում ներկայացված է ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի հիմնական միջոցների գույքագրման արդյունքում պատրաստված մանրամասն գույքացանկի օրինակ («Հրազդան» մասնաճյուղի համար):

Աղյիր 3-ի հավելված 1

ՏԵԼԵԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՆ ԸՍՏ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՍՄՍՆԱԳՆՅՈՒՂՆԵՐԻ

Աղյուսակ 1. Ամփոփ տեղեկանք գլխամասային կառույցների և տրվող ջրաբանակների մասին

N	Մարզը	Մասնաճյուղը	Ապարդիկորեն բնակչությունը		Ընդհանուր վնասը	Ընթացիկ բաժանորդ	Տեղի ջրաբանակը կ/մարտի		Հյատարների եկամուտային (կո)			Ծավալառ ակզրիտումը	Ջրաբանակ կետերը		Բաժանորդների տրվող ջրաբանակ (մ ³)	Ցանցին տրվող ջրաբանակ (մ ³)
			ICEA	CH2MHill			ICEA	CH2MHill	ICEA	CH2MHill	1990-ից հետո կառուց.		Գործող	Հարձեր		
1	Արագածոտն	Աջադասակ	21 071	40 203	6 851	3,08	624	207	54	35	13	26	2	7	2 365 259	4 802 933
2		Ագարան	5 075	10 300	1 546	3,28	213	319	5	3	0	25	2		365 597	394 200
3		Ծաղկաձոր	6 898	8 341	1 925	3,58	108	249	83	72	26	26	2		496 944	271 210
4		Թալին	11 774	18 735	3 384	3,48	203	122	149	46	0	27	2		763 000	870 394
5	Արարատ	Արտաշատ	62 705	110 916	18 135	3,46	361	135	199	79	17	33	1		4 730 000	8 253 011
6		Արարատ	11 000	22 100	3 919	2,81	463	178	20	43	7	22	2		1 860 624	916 900
7		Վեդի	45 874	14 300	11 798	3,89	148	275	133	61	0	37	2		2 002 100	2 475 576
8		Մասիս	17 931	47 414	6 374	2,81	884	114	33	21	1	21	0		3 180 200	5 783 702
9	Արմավիր	Իջևան	90 158	119 364	39 903	2,26	249	138	175	208	0	54	3		6 938 700	8 202 514
10		Արմավիր	3 380	4 093	767	4,41	378	0	28	10	0	21			4 511 000	466 733
11	Ուտարտներ	Չալախ	31 437	62 896	9 642	3,26	899	278	38	15	12	22	4		3 128 000	10 312 272
12		Սեւան	19 241	41 177	8 644	2,23	285	252	101	106	49	22	1		2 425 466	2 602 536
13		Ճամբարակ	2 242	6 600	976	2,30	247	131	13	10	0	27	1		282 434	201 830
14		Վարդենիս	8 003	17 600	4 027	1,99	502	466	19	0	0	28	1	1	747 700	1 466 424
15		Մարտունի	11 996	29 982	4 175	2,87	563	158	42	43	26	15	0	2	1 249 000	2 301 312
16	Լոռի	Տաշիր	17 446	14 300	2 414	7,23	159	330	53	9	0	5	0		448 100	1 010 413
17		Ստեփանավան	9 982	24 500	3 382	2,95	165	193	63	27	7	25	2		3 333 300	602 338
18		Սպիտակ	11 520	21 600	3 757	3,07	435	219	73	70	46	8	9		810 800	1 829 088
19		Ալավերդի	17 417	39 459	6 378	2,73	187	123	28	25	2	77	1		1 359 300	1 187 330
